ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

No 24-Լ «07» մայիսի 2021

## 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՓՈՐՁԱՐԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ» (7-8-ՐԴ ԵՎ 10-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ) ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ» (9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ) ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԸ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. 2021-2022 ուսումնական տարում ՀՀ Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում փորձարկելու նպատակով հաստատել «Աշխարհագրություն» (7-8-րդ և 10-12-րդ դասարաններ) և «Հայաստանի աշխարհագրություն» (9-րդ դասարան) առարկաների փորձնական չափորոշիչը և ծրագրերը՝ համաձայն հավելվածի:

**Վ. ԴՈՒՄԱՆՅԱՆ**

**/պաշտոնակատար/**

07.05.2021

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211

**Հավելված**

**ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի**

**2021 թվականի մայիսի 7 -ի N 28-Լ հրամանի**

# «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ» (7-8-ՐԴ ԵՎ 10-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ) ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ» (9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ) ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ ԵՎ ԾՐԱԳՐԵՐ

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հանրակրթական դպրոցում աշխարհագրության ուսուցումը պայմանավորված է դրա աշխարհայացքային, համամշակութային, կրթաճանաչողական նշանակությամբ: Բացի այդ, աշխարհագրությունը, այլ ուսումնական առարկաների հետ միասին նպաստում է սովորողների հայրենասիրական դաստիարակության ձևավորմանը և բնապահպանական արժեքային համակարգի զարգացմանը: Աշխարհագրությունը սովորողներին տալիս է նաև գիտելիքները կյանքում կիրառելու հմտություններ, ինչպես նաև ձևավորում է նրանց համակարգված աշխարհագրական մտածողությունը:

1. Իրավական հիմքերը

Հանրակրթական ընդհանուր ծրագրի «Աշխարհագրություն» և «Հայաստանի աշխարհագրություն» ուսումնական առարկաների չափորոշիչներ և օրինակելի ծրագրերը լրամշակվել են «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի, «Հանրակրթության պետական կրթակարգի» (ՀՀ կառավարության 27.05.2004թ. N20 արձանագրային որոշում), «Հանրակրթության պետական չափորոշիչի» (ՀՀ կառավարության 04.02.2021թ. N 136-Ն որոշում), հանրակրթական հիմնական դպրոցի «Աշխարհագրություն» (6-8-րդ դասարան-ներ) և «Հայաստանի աշխարհագրություն» (9-րդ դասարան) առարկաների չափորոշիչների և ծրագրերի (ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012թ. հունվարի 23-ի N 49-Ա/Ք հրաման), հանրակրթական ավագ դպրոցի «Աշխարհագրություն» առարկայի ընդհանուր և խորացված ուսուցման դասընթացների չափորոշիչների և ծրագրերի (ՀՀ կրթության և գիտության նախարարի 04.05.2009թ. N 381-Ա/Ք հրաման), Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Ռուսաստանի, Նորվեգիայի, ինչպես նաև ԱՄՆ-ի, Սինգապուրի և այլ երկրների բնագիտության և աշխարհագրության առարկայական չափորոշիչների և ծրագրերի հիման վրա:

2. Աշխարհագրության չափորոշիչը ներառում է՝

1) «Աշխարհագրություն» և «Հայաստանի աշխարհագրություն» ուսումնական առարկաների ուսուցման նպատակը՝ ըստ կրթական աստիճանների.
2) «Աշխարհագրություն» և «Հայաստանի աշխարհագրություն» ուսումնական առարկաների ընդհանուր բնութագիրը.
3) Աշխարհագրության բովանդակության կառուցման հիմնական սկզբունքները.
4) «Աշխարհագրություն» և «Հայաստանի աշխարհագրություն» ուսումնական առարկաների հիմնական գաղափարները և ակնկալվող վերջնարդյունքներն՝ ըստ կրթական աստիճանների և դասարանների
5) Սովորողների ուսումնառության արդյունքների գնահատումը

6) ուսումնական գործընթացի ուսումնամեթոդական և նյութատեխնիկական աջակցության նկարագրությունը.

3. «Աշխարհագրություն» (7-8-րդ, 10-12-րդ դասարաններ) և «Հայաստանի աշխարհագրություն» (9-րդ դասարան) ուսումնական առարկաների օրինակելի ծրագրեր ներառում են.
   1) ժամաքանակի բաշխումը՝ ըստ դասարանների,
   2) թեմաները և դրանց բովանդակությունը.
      յուրաքանչյուր թեմայի նպատակը, ակնկալվող վերջնարդյունքները,
   3) բովանդակությունը, գործնական աշխատանքները,
   4) ընդհանրական խաչվող հասկացությունները, միջառարկայական կապերը,
   5) կապը Հանրակրթության պետական չափորոշիչի (ՀՊՉ) հիմնական կամ ավագ դպրոցի վերջնարդյունքների հետ:

## 1. «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ՝ ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ

«Աշխարհագրություն» և «Հայաստանի աշխարհագրություն» ուսումնական առարկաների դասընթացների հիմնական նպատակը սովորողների համակարգված աշխարհաճանաչողության ձևավորումն ու զարգացումն է՝ հիմնված աշխարհագրական գիտական մտածողության վրա: Այն ուղղված է բնական և հասարակական աշխարհագրությունից ձեռքբերված գիտելիքների հիման վրա սովորողների գիտական աշխարհայացքի ձևավորմանը, կյանքում նրանց գիտելիքների և կարողությունների օգտագործման հմտությունների, դիրքորոշման և արժեքների ձևավորմանը և զարգացմանը:

1) Տարրական դպրոցում աշխարհագրության ուսուցման նպատակներն են՝

1.1) մարդուն, որպես բնության և հասարակության անբաժանելի մասնիկի, ընկալելու, մարդկանց միջև գոյություն ունեցող ռասայական, ազգային, կրոնական, մշակութային և աշխատանքային տարբերությունների զանազանման կարողությունների ձևավորումը:

1.2) Քարտեզից և շրջապատող աշխարհի մասին հանրամատչելի այլ աղբյուրներից բնական և հասարակական օբյեկտների ու երևույթների վերաբերյալ տեղեկույթից օգտվելու և դա առօրյայում կիրառելու հմտությունների զարգացումը:

2) Հիմնական (միջին) դպրոցում աշխարհագրության ուսուցման նպատակներն են՝

2.1) Երկիր մոլորակի ոլորտներում և դրանց բաղադրիչներում ընթացող բնական երևույթների պատճառների, փոխառնչությունների և հիմնական օրինաչափությունների ճանաչումը:

2.2) Երկրոլորտների հիմնական բաղադրիչների, դրանց փոխպայմանավորվածության, զարգացման և տարածքային օրինաչափությունների մասին համակարգված գիտելիքների ձեռքբերումը:
2.3) Մարդու, բնության, կենդանի օրգանիզմի և շրջակա միջավայրի փոխազդեցության ընկալումը:
2.4) Բնակչության, տնտեսության ճյուղային ու տարածական կառուցվածքի առնչությամբ օրինաչափությունների և առանձնահատկությունների համակարգված քննադատական մտածողության ձևավորումը և զարգացումը:
2.4) Հայաստանի բնության, բնակչության և տնտեսության աշխարհագրական առանձնահատկությունները բացատրելու և վերլուծելու հմտությունների զարգացումը:
3) Միջնակարգ (ավագ) դպրոցում աշխարհագրության ուսուցման նպատակներն են՝
3.1) Երկրագնդի առանձին բաղադրիչների ֆիզիկաաշխարհագրական բնութագրիչներով համալիր վերլուծության հմտությունների ձևավորումը:
3.2) Քարտեզագրման նպատակներով ԱՏՀ-ի և գլոբալ տեղորոշման համակարգերի կիրառման հմտությունների ձևավորումը:
3.3) Աշխարհի բնակչության և համաշխարհային տնտեսության ճյուղային ու տարածքային օրինաչափությունների վերլուծության հմտությունների զարգացումը:
3.4) Մարդ-բնություն փոխհարաբերության էկոլոգիական և կայուն զարգացման տեսանկյուններից համալիր վերլուծության կարողությունների զարգացումը:
3.5) Մարդկության համամոլորակային հիմնախնդիրների և ինքնատիպ տարածաշրջանների համալիր աշխարհագրական բնութագրման և վերլուծության կարողությունների զարգացումը:

## 2. «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.

2.1) «Աշխարհագրություն» և «Հայաստանի աշխարհագրություն» ուսումնական առարկաների ընդհանուր բնութագիրը ներկայացված է հիմնական եռամակարդակ գաղափարների բովանդակային միջուկի միջոցով: Հիմնական եռամակարդակ գաղափարները ներառում են բնական և հասարակական տարածական համակարգերը, դրանց փոխազդեցությունների արդի դրսևորումները, ինչպես նաև դրանց գործնական կիրառությունները կյանքում և տնտեսության տարբեր ոլորտներում, աշխարհագրության դերը ժամանակակից էկոլոգիական և բնահասարակական հիմնախնդիրների ճանաչման, ուսումնասիրման և լուծման ուղիների բացահայտման գործում:

2.2) Գիտական աշխարհայացքի ձևավորման համար որպես ելակետ կարող են հանդիսանալ հետևյալ դրույթները, որոնք պետք է արտահայտվեն ներկայացվող դասընթացի բովանդակության մեջ.

1) աշխարհագրության ուսումնասիրության ամենամեծ օբյեկտը՝ երկրագունդը նյութական է և գոյություն ունի տարածության ու ժամանակի մեջ,

2) երկրագնդի, դրա առանձին բնական և հասարակական տարրերի (օբյեկտների) բոլոր երևույթներն ու գործընթացները կարգավորվում են բնական և հասարակական օրենքներով, որոնց միջոցով բացահատվում են պատճառահետևանքային կապերը:

2.3) Հանրակրթական դպրոցի աշխարհագրության չափորոշիչների և ծրագրերի բովանդակային հենքին ուղղակի առնչվում են Հանրակրթության պետական չափորոշչով (ՀՊՉ) սահմանված՝ հանրակրթական ընդհանուր ծրագրերի շրջանավարտի ուսումնառության հետևյալ ակնկալվող վերջնարդյունքները.

2.3.1) Հանրակրթական հիմնական ծրագիր՝

• վերլուծի և ընկալի տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանա դրանց հիմնական գաղափարը,

• հայերեն ազատ զրուցի իրեն հետաքրքրող թեմաների մասին, արտահայտի ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք, այդ թվում՝ հրապարակային խոսք, կիրառի ոչ վերբալ հաղորդակցման տարատեսակ միջոցներ,

• իրականացնի չափումներ, կատարի մոտավոր ու ճշգրիտ հաշվարկներ և գնահատի արդյունքները՝ ընտրելով և օգտագործելով համապատասխան հասկացություններ, սկզբունքներ, նյութեր և սարքավորումներ,

• կիրառի երկրաչափական պատկերների և մարմինների մասին գիտելիքներն ամենօրյա կյանքում և հարակից ուսումնական առարկաներն ուսումնասիրելիս,

• որոշի խնդրի լուծման համար անհրաժեշտ տեղեկույթը, գտնի խնդիրների լուծման ստեղծագործ մոտեցումներ և համեմատի դրանք,

• վերլուծի, գնահատի և առաջարկի դասակարգման, տարբերակման կամ խմբավորման չափանիշներ՝ ելնելով խնդրի պահանջից,

• կիրառի բնագիտական առարկաներից ստացված հիմնարար գիտելիքները բնության և տիեզերքի օբյեկտների նկարագրության, երևույթների և դրանց փոխադարձ կապերի բացատրության, ֆիզիկական մոդելավորման և խնդիրների լուծման համար,

• ներկայացնի գիտության նվաճումների, տեխնիկայի և տեխնոլոգիաների կիրառության հավանական ազդեցությունը բնության, մարդու և հասարակության վրա,

• մասնակցի բնապահպանական միջոցառումների պլանավորմանը և իրականացմանը,

• կիրառի տեքստային և գրաֆիկական խմբագրիչները, կարողանա մշակել տվյալներ՝ օգտագործելով անհրաժեշտ թվային գործիքներ և ծրագրեր.

• նկարագրի բնական միջավայրի, հասարակական, տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացումների, հայոց և համաշխարհային պատմության տարբեր ժամանակաշրջանների իրադարձությունների փոխկապվածությունը,

• քննարկի Հայաստանի հիմնախնդիրները՝ օգտագործելով պատմության, բնության, բնակչության և տնտեսության մասին ունեցած համապատասխան գիտելիքները,

• նկարագրի բնության, բնակչության, և տնտեսության միջև եղած փոխադարձ կապերը և դրանց արդյունքում ձևավորված համակարգերը.

• նկարագրի կայուն զարգացման էությունը, հիմնական գաղափարներն ու դրանց փոխադարձ կապերը,

• ներկայացնի և քննարկի համայնքի խնդիրներն ու բարելավման ուղիները,

• տարբերակի և համեմատի աշխարհաճանաչողության ձևերը և դրանց առանձնահատկությունները,

• գնահատի իր և ուրիշների կարծիքներն ու փաստարկները, վերլուծի պատճառահետևանքային կապերը և կայացնի որոշումներ,

• ցուցաբերի իր գործունեությունը պլանավորելու և ժամանակը արդյունավետ տնօրինելու կարողություններ,

• բացատրի գիտելիքի կարևորությունը, սովորելիս դրսևորի կամք և վստահություն սեփական ուժերի նկատմամբ,

• դրսևորի հետազոտելու, փորձարկելու, տարբեր գործիքակազմեր համադրելու կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն մշակի և իրականացնի նախագծեր,

• ստանա, վերլուծի, գնահատի և ներկայացնի անհրաժեշտ տվյալներ, առաջարկի վարկածներ,

• գտնի և օգտագործի տեղեկույթ տարբեր աղբյուրներից, որոշի և բնութագրի դրա արժանահավատությունը և այն օգտագործելիս կատարի հղումներ,

• արտահայտի, հիմնավորի և պաշտպանի սեփական տեսակետը և դիրքորոշումը,

• արդյունավետ կազմակերպի իր ուսումնական գործընթացը և ավարտի աշխատանքները առանց անմիջական վերահսկողության, կիրառի ինքնակրթության որոշ մեթոդներ,

• ճանաչի իր ուժեղ ու թույլ կողմերը և դրսևորի ինքնազարգացմանը միտված վարքագիծ,

• բացատրի քաղաքացիության, իրավունքի ու պարտականության էությունը և ժողովրդավարության նշանակությունը սոցիալական արդար և ներդաշնակ համակեցության ապահովման գործում,

• ճանաչի և արժևորի իր ազգային մշակույթը, նյութական և ոչ նյութական ժառանգությունը, դրա առանձնահատկությունները և ներդրումը համաշխարհային մշակույթի մեջ:

2.3.2) Հանրակրթական միջնակարգ ծրագիր՝

• կիրառի տարածական մարմինների մասին գիտելիքները կյանքում և տարբեր ուսումնական առարկաներ ուսումնասիրելիս,

• մշակի խնդիրների արդյունավետ լուծումներ՝ կազմելով, կիրառելով տարբեր բարդության ալգորիթմներ, տրամաբանական դատողություններ և ֆիզիկական մոդելներ.

• վերլուծի բնական համակարգերի փոխկապվածությունները՝ դիտարկելով բնագիտական գիտելիքը որպես մեկ ամբողջություն,

• քննարկի, հայտնի դիրքորոշում և կատարի գիտակցված ընտրություն աշխարհաճանաչողության ձևերի վերաբերյալ,

• գնահատի կայուն զարգացման ապահովման հնարավորությունները տարբեր ռեսուրսների կառավարման և պլանավորված օգտագործման միջոցով,

• նախաձեռնի, պլանավորի և իրականացնի բնապահպանական միջոցառումներ,

• բացատրի տեխնոլոգիական նորամուծությունների գիտական հիմքերը, ներկայացնի տեխնոլոգիական ձեռքբերումները որպես գիտական և հետազոտական մտքի արգասիք, գիտակցի դրանց հետ կապված հնարավոր վտանգները բնության և մարդու համար,

• առաջադրի հետազոտական հարցադրումներ և վարկածներ, պլանավորի և իրականացնի հետազոտություններ՝ առաջարկելով համապատասխան մեթոդներ և բարելավման եղանակներ, վերլուծի ստացված տվյալները առկա գիտելիքի և պատկերացումների համատեքստում, կատարի վերացարկումներ և ընդհանրացումներ,

• կիրառի համալիր գիտելիք և անհրաժեշտ հմտություններ՝ տեխնոլոգիական զարգացման և տեղեկատվության բազմազանության պայմաններում կողմնորոշվելու համար,

• քննարկի գիտատեխնիկական զարգացմանն առնչվող էթիկական հարցեր և ունենա փաստարկված դիրքորոշում դրանց վերաբերյալ,

• ճանաչի և պահպանի ակադեմիական ազնվություն տեղեկության աղբյուրներն օգտագործելիս,

- ընկալի, ստեղծագործաբար և պատասխանատու կերպով կիրառի տեղեկատվական և թվային սարքերը որպես ժամանակակից աշխատանքային գործիք, իսկ համացանցը՝ որպես ուսումնական, համագործակցային և աշխատանքային հարթակ,
- համեմատի և վերլուծի հասարակական և քաղաքական երևույթների և գործընթացների տարբեր մեկնաբանություններ, արտահայտի հիմնավորված դիրքորոշում դրանց վերաբերյալ,
- վերլուծի իր ազգի ձևավորման և զարգացման պատմական ուղին, քաղաքացու դիրքից արժևորի Հայաստանի Հանրապետությունը որպես իր ներկան և ապագան կերտելու միջավայր,
- վերլուծի Հայաստանի Հանրապետության արդի հիմնախնդիրները և մարտահրավերները տեղական, տարածաշրջանային և գլոբալ համատեքստում, արձագանքի դրանց որպես իրազեկ, պատասխանատու և հայրենասեր քաղաքացի,
- իմանա՝ ինչպես է գործում ֆինանսական համակարգը, գնահատի տարբեր ֆինանսական ծառայությունների հնարավորությունները և ռիսկերը, կայացնի կարճաժամկետ և երկարաժամկետ արդյունավետ, պատասխանատու և անվտանգ ֆինանսական որոշումներ,
- վերլուծի և համադրի կայուն զարգացման և մարդկության հիմնախնդիրները և դրանց փոխադարձ կապերը,
- վերլուծի տնտեսության կառուցվածքի և զարգացման վրա ազդող հիմնական գործոնները,
- անկողմնակալ և առանց նախապաշարմունքների վերաբերվի իր և ուրիշների ենթադրություններին, կարծիքներին և արժեքներին, վերլուծի հասանելի տեղեկույթը, ճանաչի, կառուցի և գնահատի փաստարկները,
- ուսումնասիրի և ընդլայնի սեփական ուսումնառության և փորձառության հնարավորությունները՝ դրսևորելով շարունակական ինքնազարգացման վարքագիծ,
- վերլուծի իր ուսումնառության գործընթացը, ընտրի ինքնակրթության մեթոդներ և գնահատի դրանց արդյունավետությունը,
- քննադատաբար վերլուծի տեղեկատվությունը, հասկանա մեդիա ուղերձների ստեղծման գործընթացը, տարբերակի կիրառվող մանիպուլյացիաները և քննարկի դրանց նպատակները,
- ուրիշների հետ համագործակցելով կամ ինքնուրույն մշակի և իրականացնի նախագծեր՝ ձեռք բերած գիտելիքը կամ գործնական արդյունքը ներկայացնելով տարբեր միջոցներով,
- նախաձեռնի կամ ակտիվորեն ներգրավվի տարատեսակ հանրօգուտ միջոցառումներում՝ ըստ սեփական հետաքրքրությունների,

• կիրառի իր կրթական և աշխատանքային հնարավորությունները ինքնուրույն գործունեություն ծավալելու համար, ուսումնասիրի և գնահատի իր՝ տարբեր մասնագիտությունների համար անհրաժեշտ գիտելիքներն ու կարողունակությունները, պատճառաբանված ընտրություն կատարի,

• դրսևորի հարգալից և հոգատար վերաբերմունք ազգային և համաշխարհային արվեստի արժեքների նկատմամբ, ցուցաբերի մշակույթի իմացություն և դրա հետ հաղորդակցվելու ձգտում,

• վարի առողջ և անվտանգ ապրելակերպ,

• Ունենա ամբողջական պատկերացում իր նախընտրած մասնագիտության վերաբերյալ,

• Ունենա մասնագիտական կողմնորոշում՝ հիմնված աշխատաշուկայի պահանջարկի և ինքնաճանաչման վրա:

## 3. «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

3.1. Աշխարհագրության դասընթացները հանրակրթական դպրոցի բոլոր դասարաններում տրված են որպես բովանդակային բաղադրիչների ինտեգրված միասնական ամբողջություն՝ կառուցված առարկայական հիմնական գաղափարների (բովանդակային միջուկ) ու ակնկալվող վերջնարդյունքների համակարգված ներկայացման հիման վրա:

3.2. Ուսումնական նյութերը պետք է ձևակերպվեն տարիքային կարողունակություններին համընթաց զարգացող և փոխկապակցված սկզբունքներով և պետք է լինեն համակարգված՝ հիմնական գաղափարների շուրջ: Դասընթացը նաև պետք է նկարագրի աշխարհի ամբողջական պատկերը, բնական և հասարակական կոմպոնենտային (ճյուղային) և տարածական կառուցվածք ունեցող օբյեկտներն ու երևույթները, ներկայացնելով դրանց կառուցվածքը ու փոխադարձ կապերը:

3.3. Աշխարհագրության հանրակրթական դպրոցի դասընթացները պետք է հնարավորություն ստեղծեն ապահովելու ներառականության սկզբունքը՝ հիմնված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր սովորողի համար անհատական ուսուցման պլանավորման (ԱՈՒՊ) վրա:

3.4. «Աշխարհագրություն» և «Հայաստանի աշխարհագրություն» դպրոցական առարկաները, լինելով ինտեգրված ուսումնական դասընթացներ, ձևավորվել են բնական

և հասարակական օբյեկտների ու համակարգերի տարածական կառուցվածքային միավոր-ների և մարդ-բնություն փոխհարաբերությունների ուսումնասիրության կառուցակարգի վրա, որոնք որոշում են դասընթացի բովանդակության ձևավորման տրամաբանությունը:

3.5. Դասընթացների բովանդակությունում պետք է առկա լինեն միջառարկայական և վերառարկայական բովանդակության նյութեր՝ պայմանավորված աշխարհագրության հանրային կրթական նշանակությամբ:

3.6. Աշխարհագրության դասընթացների կառուցման հիմքում պետք է ընկած լինեն բնության և հասարակության միասնականության, համակարգվածության, մարդու և բնության փոխկապվածության և «մարդ-բնություն» բնահասարակական գեոհամակարգի ներդաշնակության գաղափարները: Այս առումով դասընթացները պետք է ունենան որոշակի էկոլոգիական ուղղվածություն, հանրամատչելի ձևով ներկայացնեն տեղական, տարածաշրջանային և համամոլորակային մակարդակներում առկա հասարակական և էկոլոգիական հիմնախնդիրները:

3.7. Դասընթացները պետք է ընդգրկեն տարբեր օրինաչափությունների մաթեմա-տիկական պարզ համակարգերի մոդելներ, դրանց տարածական ցուցանիշների քանակական և որակական փոփոխությունների բացատրություններ:

3.8. Աշխարհագրության դասընթացները պետք է ունենան գործնական ուղղվա-ծություն: Ուսումնական նյութը պետք է օգնի սովորողին կողմնորոշվելու առօրյա կյանքում և համապատասխան վերաբերմունք ցուցաբերելու բնական և հասարակական երևույթներին:

3.9. Սովորողները պետք է կարողանան իրականացնել դիտումներ, կատարել չափումներ բնության մեջ, առաջադրել վարկածներ, ինչպես նաև կատարել պարզ գործողություններ աշխարհատեղեկատվական համակարգերի (GIS) և գլոբալ տեղորոշման համակարգերի (GPS) միջոցով: Սովորողները պետք է կարողանան ուրվագծային քարտեզների վրա համապատասխան քարտեզագրական և տեղեկատվական այլ նյութերով կազմեն բնական կամ հասարակական որևէ երևույթի կամ օբյեկտի քարտեզասխեմաներ:

3.10. Դասընթացների բովանդակությունն ընտրելիս պետք է նկատի ունենալ, որ այն հասցեագրված է այն շրջանավարտներին, որոնք հետագայում աշխարհագրության հենքի վրա ստացած մասնագիտությամբ հիմնականում աշխատելու են ոչ միայն աշխարհագրական գիտությունների և հարակից ոլորտներում, այլև աշխարհագրությանն ուղղակիորեն չառընչվող բնագավառներում: Ելնելով այս հանգամանքից՝ դասընթացների բովանդակության ընտրությունը պետք է լինի այնպիսին, որ առաջին հերթին բավարարի արդիականության և մատչելիության սկզբունքներին, հիմնականում կատարի ընդհանուր աշխարհայացքի ձևավորման և զարգացման գործառույթ:

3.11. Ծրագրային նյութը պետք է հնարավորինս նպաստի սովորողների հետաքրքրությունների խթանմանը, նրանց մղի բանավեճերի, ձևավորի այս կամ այն երևույթի վերաբերյալ կարծիք արտահայտելու, իր տեսակետը պնդելու և հիմնավորելու մշակույթ: Դասընթացը պետք է նպաստի այնպիսի քաղաքացու ձևավորմանը, որն ունակ է գնահատելու աշխարհագրության դերը առօրյա կյանքում և հետազոտություններ կատարելիս, կյանքի որակի բարելավման և բնության պահպանության գործընթացում՝ կիրառելով նոր տեխնոլոգիաներ:

3.12. Հիմնական դպրոցի աշխարհագրության դասընթացը ներառում է քարտեզագրական հմտություններ զարգացնող բովանդակային բաղադրիչները, աշխարհագրական գոտիականության և զոնայականության գլոբալ համակարգերի ձևավորման գործընթացները, աշխարհի բնակչության, տնտեսության տարածական կառուցվածքային բաղադրիչների տեղաբաշխման օրինաչափ և առանձնահատուկ դրսևորումները:

3.13. Հիմնական դպրոցի 9-րդ դասարանի դասընթացը ներառում է Հայկական լեռնաշխարհի բնության, Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Արցախի Հանրապետության (ԱՀ) բնության, բնակչության և տնտեսության բաղադրիչների, կառուցվածքի և տեղաբաշխման առանձնահատկությունները: Դրանք սովորողին պետք են ազգային շահերի տեսանկյունից ՀՀ-ի և ԱՀ-ի զարգացման ներուժը գնահատել կարողանալու համար:

3.14. Ավագ դպրոցի ընդհանուր աշխարհագրության դասընթացը կառուցված է բնության և հասարակության տարածական համակարգային միավորների առավել բարդ դրսևորումների վրա՝ խորացնելով հիմնական դպրոցում սովորողների ստացած գիտելիքները: Այստեղ ընդհանրացվում և խորացվում են սովորողի աշխարհագրական գիտելիքները՝ որոշակիորեն ընդգրկելով նաև աշխարհագրության “International AS and A Level” չափորոշիչները:

3.15. Աշխարհագրության դասընթացները պետք է կառուցված լինեն այնպիսի բովանդակությամբ, որը կարժևորի սովորողների սեփական և ուրիշների տեսակետները, կարծիքներն ու վերաբերմունքը աշխարհագրական տարբեր իրողություններին.

1) Գիտակցեն բնական ու հասարակական տարբեր միջավայրերում բնակվող մարդկանց ունեցած տարբեր հնարավորություններն ու առկա սահմանափակումները:

2) Ցուցաբերեն պատրաստակամություն վերանայելու նոր գիտելիքների, ինչպես նաև ուրիշների տեսակետների համատեքստում սեփական հայացքներն ու վերաբերմունքը:

3) Արտահայտեն տեսակետ կամ դիրքորոշում տեղական, տարածաշրջանային և համամոլորակային մակարդակներում բնօգտագործման և բնապահպանական հիմնախնդիրների վերաբերյալ:

4) Կատարեն դատողություններ, վերլուծություններ և կայացնեն որոշումներ՝ հաշվի առնելով.

- բնական պայմանների և հասարակական գործընթացների աշխարհագրական առանձնահատկությունները,
- տարբեր խմբերի և անհատների ազգային, մշակութային արժեքներն ու վերաբերմունքը,
- որոշումներ կայացնողների ունեցած ընտրության հնարավորություններն ու այլընտրանքները,
- համամոլորակային, տարածաշրջանային, ազգային և տեղական մակարդակներում փոխառնչությունների արդի վիճակը և կայուն զարգացման անհրաժեշտությունը:

5) Գիտակցեն բնության հանդեպ պատասխանատու, հոգատար և ոչ սպառողական վերաբերմունքի՝ բնապահպանական մշակույթի ձևավորման անհրաժեշտությունը:

6) Ունենան սեփական դիրքորոշումը կամ տեսակետը՝ հայրենիքի, որպես անվիճարկելի արժեքի զարգացման առաջնահերթությունների և հնարավորությունների վերաբերյալ:

7) Կարևորեն ժողովրդավարական մշակույթի արժեքները և գիտակցեն դրանց ապահովման գործում աշխարհագրության դերն ու նշանակությունը (մասնավորապես, մշակութային բազմազանության արժևորման, հարգանքի, քաղաքացիական մտածողության, պատասխանատվության, աշխարհի քննադատական ընկալման պարագայում):

3.16. Սույն հայեցակարգով առաջարկվում է «Աշխարհագրություն» և «Հայաստանի աշխարհագրություն» առարկաների դասընթացների բովանդակությունը ներկայացնել հետևյալ երեք բովանդակային ուղղություններով.

I. **Բնության օբյեկտներ, երևույթներ և մոդելներ,**
II. **Հասարակական երևույթներ և գործընթացներ,**
III. **Մարդ-բնություն փոխհարաբերություններ:**

3.17. Բովանդակային առաջին ուղղության նպատակն է՝ *բնական աշխարհագրական օբյեկտների, երևույթների և տարածական համակարգերի վերաբերյալ գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի և արժեքների ձևավորումը: Այստեղ կարող են ընդգրկվել հետևյալ հիմնական գաղափարները.*

***Երկրագունդ. պտույտներ, ոլորտներ.***

- Երկրի պտույտներն ու դրանց աշխարհագրական հետևանքները,
- Քարոլորտ. կազմը, կառուցվածքը, գործընթացները, պահպանությունը,
- Ջրոլորտ. կազմը, գործընթացները, պահպանությունը,
- Մթնոլորտ. կազմը, կառուցվածքը, գործընթացները, պահպանությունը,

- Կենսոլորտ. էկոհամակարգեր, պահպանությունը:

***Տարածական մոդելավորում և փվյալներ.***

- Քարտեզ և հատակագիծ, աշխարհագրական դիրք,
- Աշխարհագրական տեղեկատվական համակարգ (ԱՏՀ): Տեղորոշում:

3.18. Բովանդակային երկրորդ ուղղության նպատակն է՝ *սովորողների մեջ առավելապես վերացական՝ աշխարհի բնակչության, համաշխարհային փնտեսության կառուցվածքի և տեղաբաշխման օրինաչափությունների վերաբերյալ համակարգված գիտելիքների և հմտությունների ձևավորումը: Այստեղ ներառված են հետևյալ հիմնական գաղափարները՝*

***Բնակչության աշխարհագրություն.***

- Բնակչության բնական շարժ, վերարտադրություն և ժողովրդագրական քաղաքականություն,
- Բնակչության կազմ,
- Աշխատանքային ռեսուրսներ և միգրացիայի գործընթացներ,
- Բնակչության տեղաբաշխում և տարաբնակեցում, ուրբանիզացման արդի գործընթացները:

***Աշխարհի քաղաքական բաժանում.***

- Քաղաքական քարտեզ, դրա ձևավորումը,
- Պետությունների տիպաբանություն, խմբավորում,
- Պետական տարածք, սահմաններ, աշխարհաքաղաքականություն:

***Տնտեսության կառուցվածք և տեղաբաշխում.***

- Համաշխարհային տնտեսություն,
- Արդյունաբերություն,
- Գյուղատնտեսություն,
- Տրանսպորտ և կապ,
- Ոչ արտադրական ոլորտի ճյուղեր,
- Միջազգային տնտեսական հարաբերություններ:

*Բովանդակային ինտեգրված դասընթացների տեսքով հանդես են գալիս աշխարհի տարածաշրջաններն ու պետությունները և Հայաստանի աշխարհագրությունը, որոնք ներառում են վերոնշյալ բովանդակային երեք ուղղությունները:*

3.19. Բովանդակային երրորդ ուղղության նպատակն է՝ *սովորողներին գիտելիքներ հաղորդել շրջակա միջավայրի, բնական պայմանների և ռեսուրսների արդյունավետ օգտագործման, բնական աղետներից պաշտպանության, մարդկության զարգացման հիմնահարցերի վերաբերյալ և դրանց լուծման ուղղությամբ հմտություններ ձևավորել: Դա կարող է ներառել հետևյալ հիմնական գաղափարները՝*

***Շրջակա միջավայր***

- Բնական պայմաններ և ռեսուրսներ. տեսակները, արդյունավետ օգտագործումը,
- Բնական աղետներ. տեսակները, տարածումը, դրանցից պաշտպանությունը:

***Մարդկության զարգացման հիմնահարցեր***

- Մարդկության համամոլորակային, տարածաշրջանային, տեղական հիմնախնդիրներ,
- Կայուն զարգացման հայեցակարգ և Հազարամյակի մարտահրավերների նպատակներ:

3.20. **Ընդհանրական խաչվող հասկացություններ:** Աշխարհի ճանաչողության միասնական մեթոդաբանական հիմքերի ապահովման նպատակով աշխարհագրության դասընթացների բովանդակությունը կառուցվում է նաև մի շարք ընդհանրական խաչվող հասկացությունների հենքի վրա: Դրանք առանցքային հասկացություններ են, որոնք ընդհանրական են աշխարհի մասին տարբեր գիտությունների համար և օգնում են սովորողներին միավորելու, փոխկապակցելու տարբեր առարկաներից ձեռք բերած գիտելիքներն աշխարհի մասին մեկ ամբողջական պատկերի շրջանակում: Այդ հասկացությունները պետք է մեծ ուշադրության արժանանան դպրոցի բոլոր աստիճաններում:

3.21. Բոլոր բնագիտական առարկաների, այդ թվում՝ «Աշխարհագրություն» և «Հայաստանի աշխարհագրություն» առարկաների ուսուցման ժամանակ առանձնացվում է այդպիսի ընդհանրական խաչվող հասկացությունների յոթ հիմնական խումբ.

1. Օրինաչափություններ,
2. Պատճառ և հետևանք, մեխանիզմ և կանխատեսում,
3. Մասշտաբ, սանդղակ, համամասնություն և քանակ,
4. Համակարգեր և մոդելներ,
5. Էներգիա և նյութ, հոսքեր, ցիկլեր, պահպանում,
6. Կառուցվածք և գործառույթ,
7. Կայունություն և փոփոխություն:

**Հանրակրթական պետական առարկայական օրինակելի ծրագրի համար առաջարկվում է աշխարհագրության դասընթացների հետևյալ կառուցվածքը՝**

1) «Աշխարհագրություն» (7-րդ դասարան)- «Ընդհանուր աշխարհագրություն» դասընթաց

2) «Աշխարհագրություն» (8-րդ դասարան)-«Տարածաշրջաններ և պետություններ» դասընթաց

3) «Հայաստանի աշխարհագրություն» (9-րդ դասարան)- «Հայաստանի բնությունը, բնակչությունը, տնտեսությունը» դասընթաց

4) «Աշխարհագրություն» (10-12-րդ դասարան)- «Ընդհանուր աշխարհագրություն» դասընթաց:

## 4. «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ՝ ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ԵՎ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ

Աշխարհագրության հիմնական գաղափարները և դրանցից բխող չափորոշչային վերջնարդյունքները տարրական, հիմնական և կրթական աստիճանների համար կառուցված են պարուրաձև զարգացող գիտելիքների, հմտությունների, արժեքների և դիրքորոշման հիման վրա: Ըստ դպրոցի աստիճանների՝ տրված հիմնական գաղափարներն ու չափորոշչային վերջնարդյունքներն ուսումնական այլընտրանքային ծրագրերի մշակման համար մեծ ճկունություն են ապահովում:

«Աշխարհագրություն» (7-8-րդ, 10-12-րդ դասարաններ) և «Հայաստանի աշխարհագրություն» (9-րդ դասարան) ուսումնական առարկաների հիմնական գաղափարները սահմանվել են շարունակաբար աճող 2-ից 4 առարկայական բովանդակության միջուկը կազմող բովանդակային բաղադրիչներով: Բովանդակության առանցքային ամբողջական գծերը տրված են հիմնական գաղափարների 3-րդ մակարդակում: 3-րդ մակարդակի հիմնական գաղափարները հիմք են հանդիսացել 7-9-րդ և 10-12-րդ դասարանների վերջնարդյունքների սահմանման և պարուրաձև զարգացման համար: Աշխարհագրության չափորոշչային վերջնարդյունքները մյուս առարկաների հետ մեկտեղ ձևավորում են ՀՊՉ-ով սահմանված հանրակրթական հիմնական և ավագ դպրոցների սովորողների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները:

**3-րդ մակարդակի հիմնական գաղափարները և ըստ կրթական աստիճանների ու դասարանների սովորողների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները հիմք ծառայում պետական և այլընտրանքային առարկայական ծրագերի մշակման համար:** Չնայած այդ հանգամանքին՝ այլընտրանքային ծրագրերի մշակման համար, հիմք են ծառայում նաև ըստ դպրոցի աստիճանների տրված հիմնական գաղափարներն ու չափորոշչային վերջնարդյունքները:

# ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հիմնական գաղափարներ, վերջնարդյունքներ

Տարրական, հիմնական և միջնակարգ կրթական աստիճաններ

| № | *Հիմնական գաղափարներ (3-րդ մակարդակ)* | *Չափորոշչային վերջնարդյունքներ* | | |
|---|---|---|---|---|
| | | *Տարրական կրթություն* | *Հիմնական կրթություն* | *Միջնակարգ կրթություն* |
| *1.* | ***Քարոլորտ (կազմը, կառուցվածքը, գործընթացները, պահպանությունը)*** | • Ճանաչել երկրի մակերևույթի հիմնական ձևերը, կիրառել գիտելիքը շրջապատի ռելիեֆի տարբեր ձևերը բնորոշելու համար: **(Տ.ԲՄ.Ե.1)** | • Ներկայացնել քարոլորտի կազմն ու կառուցվածքը: **(Մ.ԲՄ.Ե.1)**<br>• Բացատրել երկրի մակերևույթը փոփոխող ներծին և արտածին ուժերի ազդեցությունը: **(Մ.ԲՄ.Ե.2)**<br>• Բնութագրել երկրակեղևի զարգացման, սալերի շարժման, մակերևույթի ձևավորման գործընթացները: **(Մ.ԲՄ.Ե.3)**<br>• Բնութագրել աշխարհի առանձին տարածաշրջանների, պետությունների, ՀՀ-ի, ԱՀ-ի մակերևույթների, դրանց ձևավորման հիմնական առանձնահատկությունները: **(Մ.ԲՄ.Ե.4)** | • Մեկնաբանել սալերի տեկտոնական շարժումներն ու սեյսմակտիվ գործընթացները քարոլորտում: **(Ա.ԲՄ.Ե.1)**<br>• Հիմնավորել ապարների շրջապտույտի պատճառներն ու հետևանքները: **(Ա.ԲՄ.Ե.2)**<br>• Վերլուծել մարդու ազդեցությունը երկրի մակերևույթի ձևավոր-ման վրա: **(Ա.ԲՄ.Ե.3)**<br>• Մեկնաբանել հողերի դեգրադացման ու անապատացման երևույթը: **(Ա.ԲՄ.Ե.4)** |
| *2.* | ***Ջրոլորտ (կազմը, գործընթացները, պահպանությունը)*** | • Բնորոշել ջրի պարզագույն ֆիզիկական և քիմիական հատկությունները (ագրեգատային վիճակներ, թափանցիկություն, լուծելիություն): **(Տ.ԲՄ.Ե.2)**<br>• Ճանաչել և տարբերակել ջրագրական օբյեկտները (օվկիանոս, ծով, լիճ, գետ, ճահիճ, աղբյուր): **(Տ.ԲՄ.Ե.3)** | • Ներկայացնել ջրոլորտի կազմն ու կառուցվածքը: **(Մ.ԲՄ.Ե.5)**<br>• Բնութագրել ցամաքային ջրերը: **(Մ.ԲՄ.Ե.6)**<br>• Ներկայացնել Համաշխարհային օվկիանոսի ֆիզիկաաշխարհագրական բնութագիրը: **(Մ.ԲՄ.Ե.7)**<br>• Ներկայացնել առանձին տարածաշրջանների, պետությունների, ՀՀ-ի, ԱՀ-ի ջրագրական առանձնահատկությունները: **(Մ.ԲՄ.Ե.8)** | • Բնորոշել ջրհավաք ավազանը որպես համակարգ և մարդու ազդեցությունը ջրաբանական գործընթացների վրա: **(Ա.ԲՄ.Ե.5)**<br>• Վերլուծել ջրի աղտոտման պատճառները, հետևանքները, ջրավազանների պահպանության հիմնական ուղիներն ու սկզբունքները: **(Ա.ԲՄ.Ե.6)**<br>• Բնորոշել ջրավազանային կառավարումը և քաղցրահամ ջրի համամոլորակային հիմնախնդիրը: **(Ա.ԲՄ.Ե.7)** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| *3.* | ***Մթնոլորտ (կազմը, կառուցվածքը, գործընթացները, պահպանությունը)*** | • Ընկալել, որ մթնոլորտը մարդու շրջակա միջավայրում առկա է ամենուրեք: **(Տ.ԲՄ.Ե.4)**<br>• Բնորոշել օդի որոշ հատկանիշներ (թափանցիկ, անգույն և անհոտ լինելը): **(Տ.ԲՄ.Ե.5)** | • Նկարագրել մթնոլորտի կազմն ու կառուցվածքը: **(Մ.ԲՄ.Ե.9)**<br>• Բացատրել օդի տաքացումը, մթնոլորտային ճնշումը և մթնոլորտի խոնավությունը: **(Մ.ԲՄ.Ե.10)**<br>• Բնորոշել եղանակը և կլիման, կլիմաստեղծ գործոնները, կլիմայի հիմնական տիպերը: **(Մ.ԲՄ.Ե.11)**<br>• Բացատրել մթնոլորտի ընդհանուր շրջանառության գործընթացը տեղական և համամոլորակային մակարդակներով: **(Մ.ԲՄ.Ե.12)**<br>• Բնութագրել ՀՀ-ի, ԱՀ-ի, առանձին տարածաշրջանների, պետությունների հիմնական կլիմայական առանձնահատկությունները: **(Մ.ԲՄ.Ե.13)** | • Բացատրել համամոլորակային, տեղական ջերմային հաշվեկշիռները և եղանակային հիմնական գործընթացներն ու երևույթները: **(Մ.ԲՄ.Ե.8)**<br>• Վերլուծել մթնոլորտի էկոլոգիական նշանակությունը, աղտոտման պատճառներն ու հետևանքները: **(Մ.ԲՄ.Ե.9)**<br>• Վերլուծել օզոնային շերտի քայքայման և կլիմայի համամոլորակային փոփոխության պատճառներն ու հետևանքները: **(Մ.ԲՄ.Ե.10)** |
| *4.* | ***Կենսոլորտ. էկոհամակարգեր (պահպանությունը)*** | • Ճանաչել շրջապատի վայրի և մշակովի բույսերը, բույսի մասերը: **(Մ.ԲՄ.Ե.6)**<br>• Ճանաչել ընտանի և վայրի կենդանիների տեսակները: **(Տ.ԲՄ.Ե.7)** | • Ներկայացնել կենսոլորտի կազմն ու կառուցվածքը: **(Մ.ԲՄ.Ե.14)**<br>• Բնորոշել կենդանի և անկենդան բնության կապը, հողը: **(Մ.ԲՄ.Ե.15)**<br>• Բնութագրել հորիզոնական (լայնակի) զոնայականությունն ու վերընթաց գոտիականությունը: **(Մ.ԲՄ.Ե.16)**<br>• Համեմատել բնական զոնաները, ներկայացնել դրանց աշխարհագրական տարածումը: **(Մ.ԲՄ.Ե.17)**<br>• Ներկայացնել հողածածկույթի, բուսական և կենդանական աշխարհների ու բնատարածքային համալիրների հորիզոնական և վերընթաց տեղաբաշխման օրինաչափությունները ՀՀ-ում, ԱՀ-ում, առանձին տարածաշրջաններում և պետություններում: **(Մ.ԲՄ.Ե.18)** | • Բնորոշել էկոհամակարգը և էկոհամակարգերի վրա մարդածին ներգործության հետևանքները: **(Մ.ԲՄ.Ե.11)**<br>• Բացատրել բույսերի և կենդանիների գենոֆոնդի պահպանության անհրաժեշտությունը և կենսաբազմազանության պահպանման համամոլորակային հիմնախնդիրը: **(Մ.ԲՄ.Ե.12)** |
| *5.* | ***Երկրի պտույտներ (աշխարհագրական հետևանքները)*** | • Ընկալել Երկրի, Լուսնի, Արգակի և մոլորակների գնդաձևությունն ու պտույտները: **(Տ.ԲՄ.Ե.8)**<br>• Բացատրել գիշեր-ցերեկ հերթափոխի երևույթը և դրա հետևանքները մարդու կենսագործունեության և բուսակենդանական աշխարհի վրա: **(Տ.ԲՄ.Ե.9)**<br>• Մեկնաբանել տարվա եղանակների ազդեցությունը բնության վրա: **(Տ.ԲՄ.Ե.10)** | • Բացատրել Երկրի տարեկան պտույտը և տարվա եղանակների առաջացումը: **(Մ.ԲՄ.Ե.19)** | • Վերլուծել Երկրի օրական և տարեկան պտույտների աշխարհագրական հետևանքները: **(Ա.ԲՄ.Ե.13)** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ***6.*** | ***Քարտեզ և հատակագիծ, աշխարհագրական դիրք*** | • Բնորոշել գլոբուսը՝ որպես Երկրի մոդել: **(Տ.ԲՄ.ՄՏ.1)**<br>• Նկարագրել հորիզոնի հիմնական և միջանկյալ կողմերն ու կարողանալ կողմնորոշվել դրանցով: **(Տ.ԲՄ.ՄՏ.2)**<br>• Կազմել որևէ տեղանքի հատակագիծը: **(Տ.ԲՄ.ՄՏ.3)** | • Կիրառել տարբեր աշխարհագրական քարտեզներ տեղեկույթ ստանալու և քարտեզաչափական աշխատանքների համար: **(Մ.ԲՄ.ՄՏ.1)**<br>• Բնորոշել և նպատակային կիրառել քարտեզի հիմնական տարրերը՝ ատրիբուտները (մասշտաբ, աստիճանացանց, կոորդինատներ, պայմանական նշաններ): **(Մ.ԲՄ.ՄՏ.2)**<br>• Բնութագրել քարտեզների տեսակները, բացատրել քարտեզագրական պրոյեկցիաներն ու պատկերման եղանակները: **(Մ.ԲՄ.ՄՏ.3)** | • Դասակարգել քարտեզները տարբեր սկզբունքներով: **(Ա.ԲՄ.ՄՏ.1)**<br>• Բացատրել քարտեզագրական պրոյեկցիաների և աղավաղումների կապը: **(Ա.ԲՄ.ՄՏ.2)**<br>• Գնահատել քարտեզագրական մեթոդի դերն աշխարհագրական հետազոտություններում: **(Ա.ԲՄ.ՄՏ.3)** |
| ***7.*** | ***Աշխարհագրական տեղեկատվական համակարգ (ԱՏՀ), տեղորոշում*** | | • Կիրառել թվային տարբեր քարտեզներ: **(Մ.ԲՄ.ՄՏ.4)** | • Կողմնորոշվել տեղանքում տեղորոշման համակարգերի միջոցով: **(Ա.ԲՄ.ՄՏ.4)**<br>• Բացատրել ԱՏՀ-ի էությունը և կիրառությունը: **(Ա.ԲՄ.ՄՏ.5)** |
| ***8.*** | ***Բնակչության բնական շարժ, վերարտադրություն և ժողովրդագրական քաղաքականություն*** | | • Բնորոշել բնակչության բնական շարժը, վերարտադրության ռեժիմները, վերլուծել ժողովրդագրական քաղաքականության գործընթացն աշխարհի, առանձին տարածաշրջանների, պետությունների և ՀՀ-ի, ԱՀ-ի օրինակով: **(Մ.ՀԵԳ.ԲԱ.1)** | • Վերլուծել բնակչության թվի շարժընթացը և ժողովրդագրական անցման փուլերը: **(Ա.ՀԵԳ.ԲԱ.1)**<br>• Կարծիք հայտնել ժողովրդագրական քաղաքականության անհրաժեշտության և իրականացման միջոցառումների վերաբերյալ: **(Ա.ՀԵԳ.ԲԱ.2)** |
| ***9.*** | ***Բնակչության կազմ*** | • Խմբավորել մարդկանց ըստ տարիքի և ազգային պատկանելության: **(Տ.ՀԵԳ.ԲԱ.1)** | • Բնորոշել աշխարհի բնակչության կազմը (սեռատարիքային, ռասայական, էթնիկական (ազգային), կրոնական), վերլուծել դրանց աշխարհագրական առանձնահատկությունները: **(Մ.ՀԵԳ.ԲԱ.2)**<br>• Մեկնաբանել մարդկանց ազգային ու մշակութային առանձնահատկություններն ու ցուցաբերել պատշաճ վերաբերմունք և վարքագիծ: **(Մ.ՀԵԳ.ԲԱ.3)**<br>• Բնութագրել առանձին տարածաշրջանների, պետությունների, ՀՀ, ԱՀ բնակչության կազմի առանձնահատկությունները: **(Մ.ՀԵԳ.ԲԱ.4)** | • Բացատրել բնակչության կյանքի տևողության և կենսամակարդակի տարբերությունները զարգացման տարբեր մակարդակների երկրներում: **(Ա.ՀԵԳ.ԲԱ.3)**<br>• Վերլուծել բնակչության սեռատարիքային կազմի առանձնահատկությունները տարբեր տիպերի երկրներում: **(Ա.ՀԵԳ.ԲԱ.4)** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| *10.* | ***Աշխատանքային ռեսուրսներ և միգրացիայի գործընթացներ*** | • Ըմբռնել, որ մարդկանց ապագա աշխատանքը պայմանավորված է ձեռքբերած մասնագիտությամբ: **(Տ.ՀԵԳ.ԲԱ.2)**<br>• Հասկանալ, թե ովքեր են ընդգրկվում աշխատանքային ռեսուրսներում: **(Տ.ՀԵԳ.ԲԱ.3)** | • Բնորոշել աշխատանքային ռեսուրսները՝ ըստ որակական և քանակական ցուցանիշների: **(Մ.ՀԵԳ.ԲԱ.5)**<br>• Բացատրել միգրացիայի գործընթացն ու վերլուծել միգրացիայի պատճառները, ներկայացնել արդի հոսքերի տեսակները և ուղղությունները: **(Մ.ՀԵԳ.ԲԱ.6)**<br>• Ներկայացնել աշխարհի, առանձին տարածաշրջանների, պետությունների, ՀՀ աշխատանքային ռեսուրսների հիմնական ցուցանիշները, միգրացիայի գործընթացների առանձնահատկությունները: **(Մ.ՀԵԳ.ԲԱ.7)** | • Վերլուծել աշխատուժի միջազգային միգրացիան և դրա սոցիալ-տնտեսական հետևանքները: **(Ա.ՀԵԳ.ԲԱ.5)** |
| *11.* | ***Բնակչության տեղաբաշխում և տարաբնակեցում, ուրբանիզացման արդի գործընթացներ*** | • Ներկայացնել քաղաքին և գյուղին բնորոշ գծերը: **(Տ.ՀԵԳ.ԲԱ.4)**<br>• Որևէ բնակավայրի օրինակով ներկայացնել քաղաքի կամ գյուղի բնորոշ գծերը: **(Տ.ՀԵԳ.ԲԱ.5)** | • Բացատրել բնակչության տեղաբաշխման առանձնահատկություններն աշխարհում, առանձին տարածաշրջան-ներում, պետություններում, ՀՀ-ում և ԱՀ-ում: **(Մ.ՀԵԳ.ԲԱ.8)**<br>• Բնութագրել և վերլուծել տարաբնակեցման աշխարհագրական պատկերն ու զարգացման միտումները: **(Մ.ՀԵԳ.ԲԱ.9)**<br>• Բնութագրել առանձին տարածաշրջանների, պետությունների, ՀՀ, ԱՀ բնակչության տարաբնակեցման առանձնահատկությունները: **(Մ.ՀԵԳ.ԲԱ.10)** | • Վերլուծել բնակչության տեղաբաշխման և տարաբնակեցման վրա ազդող գործոններն ու արդի միտումները: **(Ա.ՀԵԳ.ԲԱ.6)**<br>• Վերլուծել ուրբանիզացման արդի գործընթացներն ու խոշոր քաղաքների հիմնախնդիրները: **(Ա.ՀԵԳ.ԲԱ.7)**<br>• Բնորոշել կայուն քաղաքը: **(Ա.ՀԵԳ.ԲԱ.8)** |
| *12.* | ***Քաղաքական քարտեզ, դրա ձևավորումը*** | | • Բնութագրել քաղաքական քարտեզի բովանդակությունն ու հիմնական առանձնահատկությունները: **(Մ.ՀԵԳ.ԱՔԲ.1)**<br>• Ներկայացնել աշխարհի բաժանումը տարածաշրջանների, ՀՀ-ի տեղն արդի քաղաքական քարտեզում: **(Մ.ՀԵԳ.ԱՔԲ.2)** | • Վերլուծել աշխարհի քաղաքական բաժանման փուլերը: **(Ա.ՀԵԳ.ԱՔԲ.1)**<br>• Տարբերակել քաղաքական քարտեզի քանակական և որակական փոփոխությունները: **(Ա.ՀԵԳ.ԱՔԲ.2)** |
| *13.* | ***Պետությունների տիպաբանություն, խմբավորում*** | | • Բնութագրել աշխարհի քաղաքական բաժանումը: **(Մ.ՀԵԳ.ԱՔԲ.3)**<br>• Դասակարգել և համեմատել պետությունները քանակական և որակական հատկանիշներով: **(Մ.ՀԵԳ.ԱՔԲ.4)** | • Դասակարգել աշխարհի պետությունները տարբեր սկզբունքներով: **(Ա.ՀԵԳ.ԱՔԲ.3)** |
| *14.* | ***Պետական տարածք, պետական սահմաններ, աշխարհաքաղաքականություն*** | • Հասկանա, որ աշխարհի պետությունների պետական տարածքները միմյանցից բաժանված են պետական սահմաններով: **(Տ.ՀԵԳ.ԱՔԲ.1)** | • Բնութագրել պետական ցամաքային, ջրային և օդային տարածքների սահմանները, բնորոշել պետական սահմանների ձևերը: **(Մ.ՀԵԳ.ԱՔԲ.5)**<br>• Ներկայացնել ՀՀ, ԱՀ պետական սահմանների ձևավորման առանձնահատկությունները: **(Մ.ՀԵԳ.ԱՔԲ.6)** | • Վերլուծել աշխարհագրական դիրքը որպես երկրի զարգացման վրա ազդող գործոն: **(Ա.ՀԵԳ.ԱՔԲ.4)**<br>• Մեկնաբանել քաղաքական աշխարհագրության ու աշխարհաքաղաքականության էությունը: **(Ա.ՀԵԳ.ԱՔԲ.5)** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | • Գնահատել ՀՀ-ի տեղը ժամանակակից համաշխարհային և տարածաշրջանային աշխարհաքաղաքական գործընթացներում: **(Ա.ՀԵԳ.ԱՔԲ.6)** |
| ***15.*** | ***Համաշխարհային տնտեսություն*** | | • Բնութագրել համաշխարհային տնտեսության գլխավոր ճյուղերի տեղաբաշխման առանձնահատկությունները: **(Մ.ՀԵԳ.ՏԿՏ.1)**<br>• Բացատրել համաշխարհային տնտեսության ճյուղային մասնագիտացման արդի միտումները: **(Մ.ՀԵԳ.ՏԿՏ.2)**<br>• Բնութագրել առանձին տարածաշրջանների, պետությունների, ՀՀ, ԱՀ տնտեսության ճյուղային կառուցվածքն ու մասնագիտացումը: **(Մ.ՀԵԳ.ՏԿՏ.3)** | • Վերլուծել համաշխարհային տնտեսության կառուցվածքն ու բնորոշ գծերը: **(Ա.ՀԵԳ.ՏԿՏ.1)**<br>• Բացատրել աշխատանքի միջազգային բաժանումը և պետությունների տնտեսական մասնագիտացումը: **(Ա.ՀԵԳ.ՏԿՏ.2)**<br>• Բացատրել համաշխարհային տնտեսության համամոլորակայնացումն ու միաանացումը: **(Ա.ՀԵԳ.ՏԿՏ.3)**<br>• Վերլուծել համաշխարհային տնտեսության տեղաբաշխման գործոններն ու զարգացման արդի միտումները: **(Ա.ՀԵԳ.ՏԿՏ.4)** |
| ***16.*** | ***Արդյունաբերություն*** | • Ճանաչել շրջակա տարածքում եղած արտադրական օբյեկտները, բացատրել դրանց նշանակությունը: **(Տ.ՀԵԳ.ՏԿՏ.1)** | • Նկարագրել արդյունաբերության ճյուղային կառուցվածքն ու բացատրել առանձին ճյուղերի տեղաբաշխման առանձնահատկությունները: **(Մ.ՀԵԳ.ՏԿՏ.4)**<br>• Բնութագրել առանձին տարածաշրջանների, պետությունների, ՀՀ, ԱՀ արդյունաբերության կառուցվածքը, մասնագիտացումն ու տեղաբաշխումը: **(Մ.ՀԵԳ.ՏԿՏ.5)** | • Վերլուծել համաշխարհային արդյունաբերության կառուցվածքը և առանձին ճյուղերի տեղաբաշխման գործոնները: **(Ա.ՀԵԳ.ՏԿՏ.5)** Բնորոշել արդյունաբերության զարգացման ժամանակակից միտումները: **(Ա.ՀԵԳ.ՏԿՏ.6)** |
| ***17.*** | ***Գյուղատնտեսություն*** | • Ճանաչել մշակովի բույսերը և ընտանի ու վայրի կենդանիները: **(Տ.ՀԵԳ.ՏԿՏ.2)**<br>• Ճանաչել շրջապատում գտնվող սենյակային բույսերի, դեղաբույսերի և սնկերի տեսակները: **(Տ.ՀԵԳ.ՏԿՏ.3)** | • Նկարագրել գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքը և բացատրել տարբեր ճյուղերի տեղաբաշխման օրինաչափությունները: **(Մ.ՀԵԳ.ՏԿՏ.6)**<br>• Բնութագրել առանձին տարածաշրջանների, պետությունների, ՀՀ, ԱՀ գյուղատնտեսության կառուցվածքը, մասնագիտացումն ու տեղաբաշխումը: **(Մ.ՀԵԳ.ՏԿՏ.7)** | • Վերլուծել գյուղատնտեսության կառուցվածքը, զարգացման ուղղությունները և առանձին ճյուղերի տեղաբաշխման գործոնները: **(Ա.ՀԵԳ.ՏԿՏ.7)**<br>• Գնահատել «կանաչ հեղափոխության» նշանակությունը պարենային անվտանգության համատեքստում: **(Ա.ՀԵԳ.ՏԿՏ.8)** |
| ***18.*** | **Տրանսպորտ և կապ** | • Ճանաչել շրջակա տարածքում տրանսպորտի և կապի տեսակները, բացատրել դրանցից օգտվելու ձևերը:**(Տ.ՀԵԳ.ՏԿՏ.4)** | • Ներկայացնել միջազգային տրանսպորտային ուղիները, տրանսպորտի և կապի արդի միջոցները, առանձին տարածաշրջանների, պետությունների, ՀՀ, ԱՀ տրանսպորտային համակարգերի առանձնահատկությունները: **(Մ.ՀԵԳ.ՏԿՏ.8)**<br>• Համեմատել տրանսպորտի տարբեր տեսակների ցուցանիշները: **(Մ.ՀԵԳ.ՏԿՏ.9)** | • Վերլուծել տրանսպորտի և կապի ժամանակակից համակարգերը: **(Ա.ՀԵԳ.ՏԿՏ.9)**<br>• Բնութագրել տրանսպորտի և կապի զարգացման արդի միտումները: **(Ա.ՀԵԳ.ՏԿՏ.10)** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ***19.*** | ***Ոչ արտադրական ոլորտի ճյուղեր*** | • Ճանաչել շրջակա տարածքում եղած ծառայություններ մատուցող օբյեկտները, բացատրել դրանցից օգտվելու ձևերը:**(Տ.ՀԵԳ.ՏԿՏ.5)** | • Բնորոշել ոչ արտադրական ոլորտի ճյուղային կառուցվածքը: **(Մ.ՀԵԳ.ՏԿՏ.10)**<br>• Նկարագրել սպասարկման ոլորտի զարգացած ճյուղերը: **(Մ.ՀԵԳ.ՏԿՏ.11)**<br>• Ներկայացնել առանձին տարածաշր-ջանների, պետությունների, ՀՀ, ԱՀ սպա-սարկման ոլորտի զարգացման և մասնա-գիտացման առանձնահատկությունները: **(Մ.ՀԵԳ.ՏԿՏ.12)** | • Բնութագրել ոչ արտադրական ոլորտի ճյուղային կառուցվածքը և դերը համաշխարհային տնտե-սության մեջ: **(Ա.ՀԵԳ.ՏԿՏ.11)**<br>• Վերլուծել ոչ արտադրական ոլորտի ճյուղերի զարգացման ներուժը և ճյուղային մասնագիտացման մի-տումները: **(Ա.ՀԵԳ.ՏԿՏ.12)** |
| ***20.*** | ***Միջազգային փնտեսական հարաբերություններ*** | | • Բացատրել միջազգային տնտեսական հարաբերությունների նշանակությունը, ներկայացնել դրանց հիմնական ձևերը: **(Մ.ՀԵԳ.ՏԿՏ.13)**<br>• Ներկայացնել ՀՀ արտաքին տնտեսա-կան կապերի ուղղություններն ու առանձ-նահատկությունները: **(Մ.ՀԵԳ.ՏԿՏ.14)** | • Բնորոշել համաշխարհային շուկայի էությունը և միջազգային տնտեսա-կան հարաբերությունների հիմնա-կան ձևերը: **(Ա.ՀԵԳ.ՏԿՏ.13)**<br>• Գնահատել միջազգային տնտեսա-կան հարաբերությունների դերը համ-աշխարհային տնտեսության զար-գացման համատեքստում: **(Ա.ՀԵԳ.ՏԿՏ.14)** |
| ***21.*** | ***Բնական պայմաններ և ռեսուրսներ (փեսակները, արդյունավեփ օգփագործումը)*** | • Նկարագրել շրջակայքում մարդու գործու նեությանը նպաստող և խոչընդոտող գործոնները: **(Տ.ՄԲ.ՇՄ.1)**<br>• Ճանաչել բնական հիմնական ռեսուրսները (հարստությունները): **(Տ.ՄԲ.ՇՄ.2)**<br>• Տարբերակել և կիրառել բնական ռեսուրսները խնայելու, մարդու կողմից շրջակա միջավայրը պահպանելու և բարելավելու պարզ ձևեր: **(Տ.ՄԲ.ՇՄ.3)** | • Բնորոշել բնական պայմանները: **(Մ.ՄԲ.ՇՄ.1)**<br>• Բացատրել բնական պայմանների և ռե-սուրսների տարբերությունը: **(Մ.ՄԲ.ՇՄ.2)**<br>• Դասակարգել և խմբավորել բնական ռե-սուրսները ըստ ծագման, վերականգնման հնարավորության, ներկայացնել հիմնական տեսակների տեղաբաշխումը՝ ըստ տարածաշրջանների ու առանձին պետությունների: **(Մ.ՄԲ.ՇՄ.3)**<br>• Բնութագրել ՀՀ բնառեսուրսային ներուժը: **(Մ.ՄԲ.ՇՄ.4)** | • Գնահատել մարդու տնտեսական գործունեության վրա բնական պայ-մանների և ռեսուրսների ազդեցու-թյունը: **(Ա.ՄԲ.ՇՄ.1)**<br>• Վերլուծել պետության բնառեսուր-սային ներուժը, բնօգտագործման արդի վիճակն ու հիմնախնդիրները, դրանց աշխարհագրական առանձ-նահատկությունները: **(Ա.ՄԲ.ՇՄ.2)**<br>• Բացատրել միջավայրի էկոլոգիական հավասարակշռությունը, խախտման պատճառներն ու հետևանքները: **(Ա.ՄԲ.ՇՄ.3)**<br>• Մեկնաբանել բնապահպանական կառավարման համակարգի տար-րերը: **(Ա.ՄԲ.ՇՄ.4)**<br>• Բացատրել կայուն արտադրություն և սպառում գաղափարի էությունը և շրջանաձև տնտեսության նշանակու-թյունը: **(Ա.ՄԲ.ՇՄ.5)**<br>• Մեկնաբանել կայուն գյուղատնտե-սության վարման առանձնահատ-կությունները: **(Ա.ՄԲ.ՇՄ.6)** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | • Մեկնաբանել հատուկ պահպանվող տարածքների նշանակությունը և անտառների կայուն կառավարումը: **(Ա.ՄԲ.ՇՄ.7)**<br>• Գնահատել էկոհամակարգային ծառայությունների նշանակությունը: **(Ա.ՄԲ.ՇՄ.8)** |
| ***22.*** | ***Բնական աղետներ (տեսակները, տարածումը, դրանցից պաշտպանությունը)*** | • Նկարագրել շրջապատում հանդիպող բնական աղետները: **(Տ.ՄԲ.ՇՄ.4)**<br>• Կարողանալ ըստ իրավիճակի դրսևորել բնական աղետից պաշտպանվելու վարքագծի ճիշտ կանոններ: **(Տ.ՄԲ.ՇՄ.5)** | • Բացատրել բնական աղետների տարածման օրինաչափությունները: **(Մ.ՄԲ.ՇՄ.5)**<br>• Ներկայացնել ՀՀ-ին բնորոշ բնական աղետները: **(Մ.ՄԲ.ՇՄ.6)** | • Բնութագրել երկրադինամիկ երևույթների հետ կապված բնական աղետներն ու դրանց տարածումը: **(Ա.ՄԲ.ՇՄ.9)**<br>• Բնորոշել մթնոլորտային և ջրաբանական աղետներն ու դրանց տարածումը, դրանցից պաշտպանվելու եղանակները: **(Ա.ՄԲ.ՇՄ.10)** |
| ***23.*** | ***Մարդկության համամոլորակային հիմնախնդիրներ*** | | | • Բացատրել մարդկության համամոլորակային հիմնախնդիրների էությունը, դրանց փոխկապվածությունը և լուծման ուղիները: **(Ա.ՄԲ.ՄՋՀ.1)**<br>• Վերլուծել հանքային հումքի և վառելիքաէներգետիկ ռեսուրսների հիմնախնդիրը: **(Ա.ՄԲ.ՄՋՀ.2)**<br>• Վերլուծել ժողովրդագրական, պարենային և առողջապահական հիմնախնդիրները: **(Ա.ՄԲ.ՄՋՀ.3)**<br>• Վերլուծել բնապահպանական և Համաշխարհային օվկիանոսի հիմնախնդիրների պատճառահետևանքային կապերը: **(Ա.ՄԲ.ՄՋՀ.4)** |
| ***24.*** | ***Կայուն զարգացման հայեցակարգ և Հազարամյակի մարտահրավերների նպատակներ*** | | | • Բնորոշել «Էկոլոգիական հետքը»: **(Ա.ՄԲ.ՄՋՀ.5)**<br>• Վերլուծել Հազարամյակի մարտահրավերների նպատակները: **(Ա12.ՄԲ.ՄՋՀ.6)**<br>• Բացատրել մարդկության կայուն զարգացման հայեցակարգի էությունը: **(Ա12.ՄԲ.ՄՋՀ.7)** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| *25.* | ***Բնօգտագործման և բնապահպանության հիմնախնդիրներ*** | • Օրինակների հիման վրա քննարկել բնության բաղադրիչների խնայողաբար օգտագործման և բնական տարբեր օբյեկտների պահպանության խնդիրները: **(Տ.ՄԲ.ՄԶՀ.1)** | • Ներկայացնել արդյունավետ բնօգտագործման ուղիների և բնության պահպանության հիմնախնդիրների օրինակներ: **(Մ.ՄԲ.ՄԶՀ.1)** | |

# ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## Հիմնական գաղափարներ, չափորոշչային վերջնարդյունքներ

**7-9-րդ դասարաններ**

| Հիմնական գաղափարներ (1-ին մակարդակ) | Հիմնական գաղափարներ (2-րդ մակարդակ) | Հիմնական գաղափարներ (3-րդ մակարդակ) | *Չափորոշչային վերջնարդյունքներ* | | |
|---|---|---|---|---|---|
| | | | *7-րդ դասարան* | *8-րդ դասարան* | *9-րդ դասարան* |
| | | ***Քարոլորտ (կազմը, կառուցվածքը, գործընթացները, պահպանությունը)*** | • Բնութագրել երկրակեղևի կառուցվածքը, դրա զարգացման, սալերի շարժման, մակերևույթի (լեռնագոյացման) ձևավորման գործընթացները: **(Ա7.ԲՄ.Ե.1)**<br>• Նկարագրել երկրագնդի խոշոր պլատֆորմներն ու գեոսինկլինալային շրջանները: **(Ա7.ԲՄ.Ե.2)**<br>• Բացատրել մակընթացության և տեղատվության երևույթը: **(Ա7.ԲՄ.Ե.3)**<br>• Վերլուծել Երկրի մակերևույթի մարդածին փոփոխությունները: **(Ա7.ԲՄ.Ե.4)** | • Ներկայացնել տարածաշրջանի, պետության մակերևույթի առանձնահատկությունները: **(Ա8.ԲՄ.Ե.1)**<br>• Բնորոշել տարածաշրջանի մակերևույթի խոշոր ձևերը: **(Ա8.ԲՄ.Ե.2)**<br>• Վերլուծել տարածաշրջանի, պետության մակերևույթի մարդածին փոփոխություններն ու պահպանության անհրաժեշտությունը: **(Ա8.ԲՄ.Ե.3)**<br>• Բնորոշել տարածաշրջանի, պետության հողային ռեսուրսների առանձնահատկությունները: **(Ա8.ԲՄ.Ե.4)** | • Բնորոշել ՀԼ, ՀՀ, ԱՀ մակերևույթի առանձնահատկությունները: **(Ա9.ԲՄ.Ե.1)**<br>• Բնութագրել ՀՀ-ի, ԱՀ-ի ռելիեֆառաջացնող գործոնները, տեկտոնական և հրաբխային ռելիեֆի խոշոր ձևերը: **(Ա9.ԲՄ.Ե.2)**<br>• Վերլուծել ՀՀ, ԱՀ մակերևույթի մարդածին փոփոխությունների հետևանքները: **(Ա9.ԲՄ.Ե.3)**<br>• Ներկայացնել ՀՀ հողերի պահպանության և բարելավման միջոցառումները: **(Ա9.ԲՄ.Ե.4)** |
| | | ***Ջրոլորտ (կազմը, գործընթացները, պահպանությունը)*** | • Բնորոշել Համաշխարհային օվկիանոսի ջրերի շարժման, ջերմության, աղիության հիմնական առանձնահատկությունները: **(Ա7.ԲՄ.Ե.5)** | • Ներկայացնել տարածաշրջանի, պետության ջրային օբյեկտներն ու դրանց առանձնահատկանությունները: **(Ա8.ԲՄ.Ե.5)**<br>• Վերլուծել տարածաշրջանի, պետության ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության խնդիրները: **(Ա8.ԲՄ.Ե.6)** | • Վերլուծել ՀԼ, ՀՀ, ԱՀ ջրագրական ցանցն ու դրա ձևավորման առանձնահատկությունները: **(Ա9.ԲՄ.Ե.5)**<br>• Վերլուծել ՀՀ, ԱՀ ջրային ռեսուրսների պահպանության առանձնահատկությունները: **(Ա9.ԲՄ.Ե.6)** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **1.Բնության օբյեկտներ, երևույթներ և մոդելներ (ԲՄ)** | **Երկրագունդ. ոլորտներ, պատյաններ (Ե)** | ***Մթնոլորտ (կազմը, կառուցվածքը, գործընթացները, պահպանությունը)*** | • Բնորոշել մթնոլորտի ջերմասիճանի, ճնշման և խոնավության փոփոխություններով պայմանավորված եղանակային և կլիմայական գործընթացները: **(Ա7.ԲՄ.Ե.6)**<br>• Բացատրել կլիմաստեղծ գործոնները և կլիմայի սեզոնային փոփոխությունները: **(Ա7.ԲՄ.Ե.7)**<br>• Համեմատել կլիմայի հիմնական տիպերը, կլիմայական գոտիները: **(Ա7.ԲՄ.Ե.8)**<br>• Բացատրել մթնոլորտի ընդհանուր շրջանառությունը, օդային զանգվածների առաջացումն ու տարածումը: **(Ա7.ԲՄ.Ե.9)** | • Բնորոշել տարածաշրջանի, պետության կլիմայական առանձնահատկությունները: **(Ա8.ԲՄ.Ե.7)**<br>• Ներկայացնել մթնոլորտի աղտոտման և պահպանության գործընթացների տարածաշրջանային առանձնահատկությունները: **(Ա8.ԲՄ.Ե.8)** | • Բնորոշել ՀՆ, ՀՀ, ԱՀ կլիմայական առանձնահատկությունները, դրանց ազդեցությունը տնտեսության վրա: **(Ա9.ԲՄ.Ե.7)**<br>• Ներկայացնել ՀՀ օդային ավազանի աղտոտման աղբյուրները և աղտոտման կրճատման ուղիները: **(Ա9.ԲՄ.Ե.8)** |
| | | ***Կենսոլորտ. էկոհամակարգեր (պահպանությունը)*** | • Բնութագրել հորիզոնական (լայնակի) զոնայականությունն ու վերընթաց գոտիականությունը: **(Ա7.ԲՄ.Ե.10)**<br>• Ներկայացնել բնական զոնաներն ու դրանց աշխարհագրական տարածումը: **(Ա7.ԲՄ.Ե.11)** | • Բնութագրել առանձին տարածաշրջանների հիմնական բնական զոնաները: **(Ա8.ԲՄ.Ե.9)**<br>• Ներկայացնել առանձին տարածաշրջանների, պետությունների կողմից էկոհամակարգերի պահպանության ձևերը: **(Ա8.ԲՄ.Ե.10)** | • Բնութագրել ՀՀ, ԱՀ վերընթաց գոտիականությունն ու դրա ներգործությունը մարդու գործունեության վրա: **(Ա9.ԲՄ.Ե.9)**<br>• Ներկայացնել ՀՀ, ԱՀ կենսաբազմազանությունն ու պահպանվող տարածքները: **(Ա9.ԲՄ.Ե.10)** |
| | | ***Երկրի պտույտներ (աշխարհագրական հետևանքները)*** | • Բացատրել տարվա եղանակների առաջացումը: **(Ա7.ԲՄ.Ե.12)** | | |
| | **Տարածական մոդելավորում և տվյալներ (ՄՏ)** | ***Քարտեզ և հատակագիծ, աշխարհագրական դիրք*** | • Կիրառել տարբեր աշխարհագրական քարտեզներ կամ հատակագծեր տեղեկույթ ստանալու և քարտեզաչափական աշխատանքների համար: **(Ա7.ԲՄ.ՄՏ.1)**<br>• Բնորոշել և նպատակային կիրառել քարտեզի և հատակագծի հիմնական տարրերը՝ բնութագրիչները (մասշտաբ, աստիճանացանց, կորրդինատներ, պայմանական նշաններ): **(Ա7.ԲՄ.ՄՏ.2)**<br>• Բնորոշել քարտեզների տեսակները, քարտեզագրական պրոյեկցիաներն ու պատկերման եղանակները: **(Ա7.ԲՄ.ՄՏ.3)** | • Կիրառել տարածաշրջանի, պետության ընդհանուր աշխարհագրական, թեմատիկ քարտեզները՝ աշխարհագրական տեղեկույթի ստացման և օգտագործման նպատակներով: **(Ա8.ԲՄ.ՄՏ.1)**<br>• Գնահատել տարածաշրջանի, պետության աշխարհագրական դիրքը, դրա ազդեցությունը տնտեսության զարգացման վրա: **(Ա8.ԲՄ.ՄՏ.2)** | • Կիրառել ՀՆ, ՀՀ, ԱՀ ընդհանուր աշխարհագրական, թեմատիկ քարտեզները՝ աշխարհագրական տեղեկույթի ստացման և օգտագործման նպատակով: **(Ա9.ԲՄ.ՄՏ.1)**<br>• Բնութագրել ՀՆ բնության, ՀՀ, ԱՀ աշխարհագրական դիրքի ու դրա առանձին տեսակների առանձնահատկությունները: **(Ա9.ԲՄ.ՄՏ.2)** |
| | | ***Աշխարհագրական տեղեկատվական համակարգ (ԱՏՀ), տեղորոշում*** | • Կիրառել տարբեր թվային քարտեզներ: **(Ա7.ԲՄ.ՄՏ.4)** | • Կիրառել տարածաշրջանի, պետության տարբեր թվային քարտեզներ համապատասխան բովանդակության աշխատանքների կատարման նպատակով: **(Ա8.ԲՄ.ՄՏ.3)** | • Կիրառել ՀՀ, ԱՀ տարբեր թվային քարտեզներ համապատասխան բովանդակության աշխատանքների կատարման նպատակով: **(Ա9.ԲՄ.ՄՏ.3)** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2. Հասարակական երևույթներ և գործընթացներ (ՀԵԳ) | Բնակչության աշխարհագրություն (ԲԱ) | ***Բնակչության բնական շարժ, վերարտադրություն և ժողովրդագրական քաղաքականություն*** | • Բնորոշել բնակչության բնական շարժը, վերարտադրության ռեժիմները: **(Ա7.ՀԵԳ.ԲԱ.1)**<br>• Բացատրել ժողովրդագրական քաղաքականության նպատակները: **(Ա7.ՀԵԳ.ԲԱ.2)** | • Բացատրել տարածաշրջանի, պետության բնակչության շարժը, վերարտադրության ռեժիմները: **(Ա8.ՀԵԳ.ԲԱ.1)**<br>• Վերլուծել ժողովրդագրական քաղաքականությունը տարբեր երկրներում: **(Ա8.ՀԵԳ.ԲԱ.2)** | • Վերլուծել ՀՀ, ԱՀ բնակչության բնական շարժի, վերարտադրության և ժողովրդագրական քաղաքականության առանձնահատկությունները: **(Ա9.ՀԵԳ.ԲԱ.1)** |
| | | ***Բնակչության կազմ*** | • Բնորոշել աշխարհի բնակչության կազմը (սեռատարիքային, ռասայական, էթնիկական (ազգային), կրոնական), վերլուծել դրանց աշխարհագրական առանձնահատկությունները: **(Ա7.ՀԵԳ.ԲԱ.3)**<br>• Ընկալել մարդկանց ազգային ու մշակութային առանձնահատկությունները, ցուցաբերել պատշաճ վերաբերմունք և վարքագիծ: **(Ա7.ՀԵԳ.ԲԱ.4)** | • Բացատրել տարածաշրջանի, պետության բնակչության կազմի առանձնահատկությունները: **(Ա8.ՀԵԳ.ԲԱ.3)**<br>• Վերլուծել տարածաշրջանի, պետության բնակչության բնութագրիչների ներքին տարածքային տարբերությունները: **(Ա8.ՀԵԳ.ԲԱ.4)** | • Վերլուծել ՀՀ, ԱՀ բնակչության կազմի առանձնահատկությունները: **(Ա9.ՀԵԳ.ԲԱ.2)** |
| | | ***Աշխատանքային ռեսուրսներ և միգրացիայի գործընթացներ*** | • Բնորոշել աշխատանքային ռեսուրսները՝ ըստ որակական և քանակական ցուցանիշների: **(Ա7.ՀԵԳ.ԲԱ.5)**<br>• Ներկայացնել միգրացիայի էությունը, տեսակները: **(Ա7.ՀԵԳ.ԲԱ.6)** | • Ներկայացնել պետությունների աշխատանքային ռեսուրսները: **(Ա8.ՀԵԳ.ԲԱ.5)**<br>• Բացատրել տարածաշրջանի, պետության մասշտաբներով միգրացիայի գործընթացն ու դրանց տեսակները, պատճառները, ուղղությունները: **(Ա8.ՀԵԳ.ԲԱ.6)** | • Բնորոշել ՀՀ, ԱՀ աշխատանքային ռեսուրսները՝ ըստ որակական և քանակական ցուցանիշների: **(Ա9.ՀԵԳ.ԲԱ.3)**<br>• Բնորոշել ՀՀ, ԱՀ միգրացիայի գործընթացների առանձնահատկությունները: **(Ա9.ՀԵԳ.ԲԱ.4)** |
| | | ***Բնակչության տեղաբաշխում և տարաբնակեցում, ուրբանիզացման արդի գործընթացներ*** | • Ներկայացնել բնակչության տեղաբաշխման տարածական տարբերություններն աշխարհում: **(Ա7.ՀԵԳ.ԲԱ.7)**<br>• Բնորոշել աշխարհում տարաբնակեցման պատկերն ու զարգացման միտումները: **(Ա7.ՀԵԳ.ԲԱ.8)** | • Բացատրել տարածաշրջանի, պետության բնակչության տեղաբաշխման ու տարաբնակեցման առանձնահատկությունները: **(Ա. ՀԵԳ.ԲԱ.7)** | • Վերլուծել ՀՀ և ԱՀ բնակչության տեղաբաշխման ու տարաբնակեցման առանձնահատկությունները: **(Ա9.ՀԵԳ.ԲԱ.5)** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | **Աշխարհի քաղաքական բաժանում (ԱՔԲ)** | ***Քաղաքական քարտեզ, դրա ձևավորումը*** | • Բնութագրել աշխարհի քաղաքական բաժանումը: **(Ա7.ՀԵԳ.ԱՔԲ.1)** | • Ներկայացնել տարածաշրջանի քաղաքական քարտեզը և պետությունների խմբավորումները՝ ըստ որակական և քանակական հատկանիշների: **(Ա8.ՀԵԳ.ԱՔԲ.1)** | |
| | | ***Պետությունների տիպաբանություն, խմբավորում*** | • Ներկայացնել պետությունների խմբավորումները՝ ըստ քանակական և որակական հատկանիշների: **(Ա7.ՀԵԳ.ԱՔԲ.2)** | • Բնութագրել պետության կառավարման ձևն ու վարչատարածքային կառուցվածքը: **(Ա8.ՀԵԳ.ԱՔԲ.2)** | • Բնութագրել ՀՀ, ԱՀ կառավարման ձևն ու վարչատարածքային կառուցվածքը: **(Ա9.ՀԵԳ.ԱՔԲ.1)** |
| | | ***Պետական տարածք, պետական սահմաններ, աշխարհաքաղաքականություն*** | • Բնութագրել պետական տարածքը, պետական ցամաքային, ջրային և օդային տարածքների սահմանները, օրինակների հիման վրա բնորոշել պետական սահմանների ձևերը: **(Ա7.ՀԵԳ.ԱՔԲ.3)** | • Բացատրել պետության քաղաքաաշխարհագրական դիրքի առանձնահատկությունները: **(Ա8.ՀԵԳ.ԱՔԲ.3)** | • Ներկայացնել ՀՀ, ԱՀ պետական տարածքն ու պետական սահմանները, դրանց ձևավորումը: **(Ա9.ՀԵԳ.ԱՔԲ.2)** |
| | **Տնտեսության կառուցվածք և տեղաբաշխում (ՏԿՏ)** | ***Համաշխարհային տնտեսություն*** | • Բացատրել համաշխարհային տնտեսության գլխավոր ճյուղերի տեղաբաշխման առանձնահատկությունները: **(Ա7.ՀԵԳ.ՏԿՏ.1)**<br>• Բացատրել համաշխարհային տնտեսության ճյուղային կառուցվածքի փոփոխության արդի միտումները: **(Ա7.ՀԵԳ.ՏԿՏ.2)** | • Բացատրել տարածաշրջանի, պետության տնտեսության ճյուղային և տարածքային կառուցվածքի առանձնահատկությունները, առաջատար ճյուղերի զարգացման միտումները: **(Ա8.ՀԵԳ.ՏԿՏ.1)**<br>• Գնահատել պետության տնտեսական զարգացման հնարավորությունները: **(Ա8.ՀԵԳ.ՏԿՏ.2)** | • Ներկայացնել Հայաստանի տնտեսության զարգացման ընդհանուր պատկերը 19-րդ դարի կեսերից մինչև մեր օրերը: **(Ա9.ՀԵԳ.ՏԿՏ.1)**<br>• Վերլուծել ՀՀ, ԱՀ տնտեսության առանձնահատկությունները: **(Ա9.ՀԵԳ.ՏԿՏ.2)**<br>• Բացատրել ՀՀ, ԱՀ տնտեսության առանձին ճյուղերի տեղաբաշխման գործոնները: **(Ա9.ՀԵԳ.ՏԿՏ.3)** |
| | | ***Արդյունաբերություն*** | • Նկարագրել արդյունաբերության ճյուղային կառուցվածքն ու բացատրել առանձին ճյուղերի տեղաբաշխման առանձնահատկությունները: **(Ա7.ՀԵԳ.ՏԿՏ.3)** | • Բնութագրել տարածաշրջանի, պետության արդյունաբերության առաջատար ճյուղերը, բացատրել դրանց տեղաբաշխման առանձնահատկությունները: **(Ա8.ՀԵԳ.ՏԿՏ.3)**<br>• Գնահատել արդյունաբերության տեղն ու դերը տարածաշրջանի, պետության զարգացման գործընթացում: **(Ա8.ՀԵԳ.ՏԿՏ.4)** | • Վերլուծել ՀՀ, ԱՀ արդյունաբերության ճյուղային կառուցվածքը, տեղաբաշխումը և զարգացման միտումները: **(Ա9.ՀԵԳ.ՏԿՏ.4)**<br>• Գնահատել արդյունաբերության տեղն ու դերը ՀՀ, ԱՀ զարգացման գործընթացում: **(Ա9.ՀԵԳ.ՏԿՏ.5)** |
| | | ***Գյուղատնտեսություն*** | • Բնորոշել գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքը և բացատրել տարբեր ճյուղերի տեղաբաշխման օրինաչափությունները: **(Ա7.ՀԵԳ.ՏԿՏ.4)** | • Ներկայացնել տարածաշրջանի, պետության գյուղատնտեսության առաջատար ճյուղերը, բացատրել դրանց տեղաբաշխման առանձնահատկությունները: **(Ա8.ՀԵԳ.ՏԿՏ.5)**<br>• Գնահատել գյուղատնտեսության տեղն ու դերը տարածաշրջանի, պետության զարգացման գործընթացում: **(Ա8.ՀԵԳ.ՏԿՏ.6)** | • Բնութագրել ՀՀ, ԱՀ գյուղատնտեսության առաջատար ճյուղերը, վերլուծել դրանց տեղաբաշխման առանձնահատկություններն ու զարգացման միտումները: **(Ա9.ՀԵԳ.ՏԿՏ.6)** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | **Տրանսպորտ և կապ** | • Ներկայացնել տրանսպորտի տեսակները և կապի արդի միջոցները, միջազգային ծովային, օդային և ցամաքային գլխավոր տրանսպորտային ուղիները: **(Ա7.ՀԵԳ.ՏԿՏ.5)**<br>• Համեմատել տրանսպորտի տարբեր տեսակները: **(Ա7.ՀԵԳ.ՏԿՏ.6)** | • Բնութագրել տարածաշրջանի, պետության տրանսպորտի հիմնական տեսակներն ու զարգացման մակարդակը: **(Ա8.ՀԵԳ.ՏԿՏ.7)** | • Վերլուծել ՀՀ, ԱՀ տրանսպորտի և կապի տեսակներն ու զարգացման մակարդակը: **(Ա9.ՀԵԳ.ՏԿՏ.7)** |
| | | ***Ոչ արտադրական ոլորտի ճյուղեր*** | • Բնորոշել ոչ արտադրական ոլորտի ճյուղային կառուցվածքը: **(Ա7.ՀԵԳ.ՏԿՏ.7)**<br>• Բնութագրել ոչ արտադրական ոլորտի առանցքային ճյուղերը: **(Ա7.ՀԵԳ.ՏԿՏ.8)** | • Բացատրել տարածաշրջանում, պետությունում ոչ արտադրական ոլորտի ճյուղերի կառուցվածքն ու զարգացման մակարդակը: **(Ա8.ՀԵԳ.ՏԿՏ.8)** | • Վերլուծել ՀՀ, ԱՀ ոչ արտադրական ոլորտի ճյուղային կառուցվածքն ու զարգացման միտումները: **(Ա9.ՀԵԳ.ՏԿՏ.8)** |
| | | ***Միջազգային տնտեսական հարաբերություններ*** | • *Բացատրել* միջազգային տնտեսական հարաբերությունների նշանակությունը, *ներկայացնել* դրանց հիմնական ձևերը: **(Ա7.ՀԵԳ.ՏԿՏ.9)** | • Բնորոշել միջազգային հարաբերությունները՝ տարածաշրջանային, պետական մակարդակներով: **(Ա8.ՀԵԳ.ՏԿՏ.9)**<br>• Բացատրել տարածաշրջանի, պետության տնտեսական մասնագիտացման առանձնահատկությունները: **(Ա8.ՀԵԳ.ՏԿՏ.10)** | • Վերլուծել ՀՀ, ԱՀ արտաքին տնտեսական հարաբերությունները: **(Ա9.ՀԵԳ.ՏԿՏ.9)** |
| **3. Մարդ-բնություն փոխհարաբերություններ** (ՄԲ) | **Շրջակա միջավայր** (ՇՄ) | ***Բնական պայմաններ և ռեսուրսներ (տեսակները, արդյունավետ օգտագործումը)*** | • Բնութագրել բնական պայմաններն ու ռեսուրսները: **(Ա7.ՄԲ.ՇՄ.1)**<br>• Դասակարգել բնական ռեսուրսները՝ ըստ ծագման, ըստ սպառման: **(Ա7.ՄԲ.ՇՄ.2)**<br>• Գնահատել աշխարհի հողային, ջրային, կենսաբանական ռեսուրսները՝ ըստ նշանակության: **(Ա7.ՄԲ.ՇՄ.3)**<br>• Փոխել բնական ռեսուրսների նկատմամբ սպառողական վերաբերմունքը կայուն բնօգտագործման վարքագծով: **(Ա7.ՄԲ.ՇՄ.4)** | • Վերլուծել տարածաշրջանի, պետության բնական պայմանների առանձնահատկությունները, դրանց ազդեցությունը տնտեսական գործունեության և տնտեսության տեղաբաշխման վրա: **(Ա8.ՄԲ.ՇՄ.1)**<br>• Նկարագրել տարածաշրջանի բնական ռեսուրսները, դրանց տեղաբաշխումն ու ազդեցությունը տարածաշրջանի, պետության զարգացման վրա: **(Ա8.ՄԲ.ՇՄ.2)**<br>• Գնահատել պետության բնառեսուրսային ներուժը: **(Ա8.ՄԲ.ՇՄ.3)**<br>• Համեմատել տարածաշրջաններում, պետություններում հողօգտագործման մասշտաբներն ու առանձնահատկությունները: **(Ա8.ՄԲ.ՇՄ.4)** | • Բնորոշել ՀՀ, ԱՀ բնական պայմանների առանձնահատկությունները: **(Ա9.ՄԲ.ՇՄ.1)**<br>• Գնահատել ՀՀ, ԱՀ բնառեսուրսային ներուժը: **(Ա9.ՄԲ.ՇՄ.2)**<br>• Վերլուծել ՀՀ-ում, ԱՀ-ում արդյունավետ բնօգտագործման ուղիներն ու բնահպանական հիմնախնդիրները: **(Ա9.ՄԲ.ՇՄ.3)**<br>• Գնահատել ՀՀ, ԱՀ ջրային ռեսուրսների տնտեսական ու էկոլոգիական նշանակությունը: **(Ա9.ՄԲ.ՇՄ.4)**<br>• Վերլուծել ՀՀ, ԱՀ ջրային ռեսուրսների տեղաբաշխման առանձնահատկությունները և ջրօգտագործման կառավարման խնդիրները: **(Ա9.ՄԲ.ՇՄ.5)**<br>• Մշակել միջոցառումներ ՀՀ, ԱՀ բնության հանդեպ գրագետ վերաբերմունքի և վարքագծի շարունակական դրսևորման ուղղությամբ: **(Ա9.ՄԲ.ՇՄ.6)** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | • Վերլուծել առանձին տարածա-շրջաններում, պետություններում արդյունավետ բնօգտագործման և բնապահպանության հիմնա-խնդիրներն ու դրանց լուծման եղանակները: **(Ա8.ՄԲ.ՇՄ.5)** | • Արժևորել ՀՀ, ԱՀ բնական օբյեկտները, բնության տարրերն ու երևույթները կա-յուն բնօգտագործման և միջավայրա-ստեղծ նպատակներով: **(Ա9.ՄԲ.ՇՄ.7)** |
| | | ***Բնական աղետներ (տեսակները, տարածումը, դրանցից պաշտպանությունը)*** | | • Ներկայացնել տարածաշրջա-նում, պետությունում առավել շատ դրսևորվող բնական աղետների տարածման առանձնահատկությունները: **(Ա8.ՄԲ.ՇՄ.6)** | • Ներկայացնել ՀՀ-ին, ԱՀ-ին բնորոշ բնական աղետները (երկրաբանական, կլիմայական և այլն): **(Ա9.ՄԲ.ՇՄ.8)**<br>• Ներկայացնել ՀՀ, ԱՀ տարածված բնական աղետներից պաշտպանվելու եղանակները: **(Ա9.ՄԲ.ՇՄ.9)** |
| | **Մարդկության զարգացման հիմնահարցեր (ՄԶՀ)** | ***Մարդկության համամոլորակային հիմնախնդիրներ*** | | • Վերլուծել տարածաշրջանում, պետությունում մարդու տնտեսա-կան գործունեության ազդեցության մասշտաբները շրջակա միջավայ-րի վրա: **(Ա8.ՄԲ.ՄԶՀ.1)**<br>• Բնութագրել տարածաշրջանային գլխավոր հիմնախնդիրները, դրանց լուծման ուղիները: **(Ա8.ՄԲ.ՄԶՀ.2)**<br>• Բացատրել Անտարկտիդայում օզոնային անցքերի առաջացման պատճառներն ու հետևանքները: **(Ա8.ՄԲ.ՄԶՀ.3)**<br>• Վերլուծել կլիմայի գլոբալ փոփո-խության հետևանքները՝ ըստ տարածաշրջանների: **(Ա8.ՄԲ.ՄԶՀ.4)** | • Վերլուծել ՀՀ, ԱՀ մարդու տնտեսական գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա: **(Ա9.ՄԲ.ՄԶՀ.1)**<br>• Վերլուծել ՀՀ, ԱՀ ջրային ռեսուրսների քանակական և որակական սպառման հիմնախնդիրները, առաջարկել դրանց լուծման ուղիներ: **(Ա9.ՄԲ.ՄԶՀ.2)**<br>• Վերլուծել ՀՀ ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական, էկոլոգիական և այլ հիմնախնդիրներն ու առաջարկել լուծման ուղիներ: **(Ա9.ՄԲ.ՄԶՀ.3)** |
| | | ***Կայուն զարգացման հայեցակարգ և Հազարամյակի մարտահրավերների նպատակներ*** | | | |

# Աշխարհագրություն
## Հիմնական գաղափարներ, չափորոշչային վերջնարդյունքներ
### 10-12-րդ դասարաններ

| *Հիմնական գաղափարներ (1-րդ մակարդակ)* | Հիմնական գաղափարներ (2-րդ մակարդակ) | *Հիմնական գաղափարներ (3-րդ մակարդակ)* | **Չափորոշչային վերջնարդյունքներ** | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 10-րդ դասարան | 11-րդ դասարան | 12-րդ դասարան |
| | | ***Քարոլորտ (կազմը, կառուցվածքը, գործընթացները, պահպանությունը)*** | • Մեկնաբանել սալերի տեկտոնական շարժումներն ու սեյսմիկ գործընթացները քարոլորտում: **(Ա10.ԲՄ.Ե.1)**<br>• Բացատրել ապարների հողմահարման տեսակի և վայրի բնակլիմայական պայմանների կապը: **(Ա10.ԲՄ.Ե.2)**<br>• Վերլուծել մարդու ազդեցությունը Երկրի մակերևույթի ձևավորման գործընթացում: **(Ա10.ԲՄ.Ե.3)** | | |
| | | ***Ջրոլորտ (կազմը, գործընթացները, պահպանությունը)*** | • Բնորոշել ջրհավաք ավազանը որպես համակարգ: **(Ա10.ԲՄ.Ե.4)**<br>• Վերլուծել հիդրոգրաֆի կառուցվածքն ու դրա կապը ջրհավաք ավազանի բնութագրիչների հետ: **(Ա10.ԲՄ.Ե.5)**<br>• Գնահատել մարդու ազդեցությունը գետավազանային գործընթացների վրա: **(Ա10.ԲՄ.Ե.6)**<br>• Բնորոշել ջրավազանային կառավարումը: **(Ա10.ԲՄ.Ե.7)** | • Վերլուծել ջրի աղտոտման պատճառներն ու հետևանքները: **(Ա11.ԲՄ.Ե.1)**<br>• Վերլուծել ջրավազանների պահպանության հիմնական ուղիներն ու սկզբունքները: **(Ա11.ԲՄ.Ե.2)** | • Վերլուծել քաղցրահամ ջրի համամոլորակային հիմնախնդիրը և դրա դրսևորումը արիդ՝ չորային երկրներում ու տարածաշրջաններում: **(Ա12.ԲՄ.Ե.1)** |
| | | ***Մթնոլորտ (կազմը, կառուցվածքը, գործընթացները, պահպանությունը)*** | • Վերլուծել համամոլորակային և տեղական ջերմային հաշվեկշիռները: **(Ա10.ԲՄ.Ե.8)**<br>• Բացատրել հիմնական եղանակային երևույթներն ու գործընթացները: **(Ա10.ԲՄ.Ե.9)**<br>• Գնահատել եղանակի վրա մարդու ազդեցությունը տեղական մակարդակում (քաղաքային միկրոկլիմա): **(Ա10.ԲՄ.Ե.10)** | • Գնահատել մթնոլորտի պաշտպանիչ և էկոլոգիական գործառույթները: **(Ա11.ԲՄ.Ե.3)**<br>• Վերլուծել մթնոլորտի աղտոտման պատճառներն ու հետևանքները: **(Ա11.ԲՄ.Ե.4)**<br>• Բացատրել թթվային անձրևների և սմոգի (թունամշուշ) առաջացման պատճառները և հետևանքները: **(Ա11.ԲՄ.Ե.5)** | • Վերլուծել կլիմայի համամոլորակային փոփոխության պատճառներն ու հետևանքները: **(Ա12.ԲՄ.Ե.2)**<br>• Բացատրել օզոնային շերտի նշանակությունը, քայքայման պատճառներն ու հետևանքները: **(Ա12.ԲՄ.Ե.3)** |
| | | ***Կենսոլորտ. էկոհամակարգեր (պահպանությունը)*** | | • Բնորոշել էկոհամակարգի հատկանիշները: **(Ա11.ԲՄ.Ե.6)**<br>• Բացատրել բուսական և կենդանական աշխարհի պահպանության կարևորությունը: **(Ա11.ԲՄ.Ե.7)**<br>• Գնահատել գենոֆոնդի պահպանության անհրաժեշտությունը: **(Ա11.ԲՄ.Ե.8)** | • Վերլուծել կենսաբազմազանության պահպանման համամոլորակային հիմնախնդիրը: **(Ա12.ԲՄ.Ե.4)** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **1.Բնության օբյեկտներ, երևույթներ և մոդելներ (ԲՄ)** | **Երկրագունդ. ոլորտներ, պտույտներ (Ե)** | ***Երկրի պտույտներ (աշխարհագրական հետևանքները)*** | • Վերլուծել Երկրի օրական և տարեկան պտույտների աշխարհագրական հետևանքները: **(Ա10.ԲՄ.Ե.11)**<br>• Որոշել որևէ կետի ժամային գոտին՝ դրա կոորդինատների կիրառմամբ: **(Ա10.ԲՄ.Ե.12)**<br>• Բնորոշել տեղական, գոտիական, դեկրետային և Համաշխարհային ժամանակները: **(Ա10.ԲՄ.Ե.13)** | | |
| | **Տարածական մոդելավորում և տվյալներ (ՄՏ)** | ***Քարտեզ և հատակագիծ, աշխարհագրական դիրք*** | • Դասակարգել քարտեզները տարբեր սկզբունքներով: **(Ա10.ԲՄ.ՄՏ.1)**<br>• Բացատրել քարտեզագրական պրոյեկցիաների և աղավաղումների կապը: **(Ա10.ԲՄ.ՄՏ.2)**<br>• Գնահատել քարտեզագրական մեթոդի դերն աշխարհագրական հետազոտություններում: **(Ա10.ԲՄ.ՄՏ.3)**<br>• Օգտագործել տեղագրական քարտեզները տարբեր նպատակներով: **(Ա10.ԲՄ.ՄՏ.4)** | | |
| | | ***Աշխարհագրական տեղեկատվական համակարգ (ԱՏՀ), տեղորոշում*** | • Կիրառել տեղորոշման տեխնիկական միջոցներն առօրյա և հետազոտական նպատակներով: **(Ա10.ԲՄ.ՄՏ.5)**<br>• Բացատրել ԱՏՀ-ի էությունը և կիրառությունը: **(Ա10.ԲՄ.ՄՏ.6)**<br>• ԱՏՀ-ի կիրառմամբ կազմել ՀՀ վարչական քարտեզը: **(Ա10.ԲՄ.ՄՏ.7)**<br>• Կիրառել գլոբալ տեղորոշման համակարգի (GPS) տեխնիկական միջոցները տեղանքում: **(Ա10.ԲՄ.ՄՏ.8)** | • Կազմել տարբեր քարտեզագրամներ և քարտեզադիագրամներ ԱՏՀ-ի կիրառմամբ: **(Ա11.ԲՄ.ՄՏ.1)** | |
| | | ***Բնակչության բնական շարժ, վերարտադրություն և ժողովրդագրական քաղաքականություն*** | • Վերլուծել աշխարհի բնակչության թվի ավելացման հիմնախնդիրը: **(Ա10.ՀԵԳ.ԲԱ.1)**<br>• Վերլուծել ժողովրդագրական անցման փուլերը: **(Ա10.ՀԵԳ.ԲԱ.2)**<br>• Վերլուծել բնակչության շարժընթացի և ժողովրդագրական քաղաքականության պատճառահետևանքային կապերն ու դրանց կառավարման ուղղությամբ իրականացվող միջոցառումները: **(Ա10.ՀԵԳ.ԲԱ.3)** | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **2. Հասարակական երևույթներ և գործընթացներ (ՀԵԳ)** | **Բնակչության աշխարհագրություն (ԲԱ)** | ***Բնակչության կազմ*** | • Բացատրել բնակչության կյանքի տևողության և որակի տարբերությունները՝ զարգացման տարբեր մակարդակների երկրներում: **(Ա10.ՀԵԳ.ԲԱ.4)**<br>• Վերլուծել բնակչության սեռատարիքային կազմի առանձնահատկությունները տարբեր տիպի երկրներում: **(Ա10.ՀԵԳ.ԲԱ.5)** | | |
| | | ***Աշխատանքային ռեսուրսներ և միգրացիայի գործընթացներ*** | • Բացատրել միգրացիայի գործընթացը՝ Լիի միգրացիայի մոդելի հիման վրա: **(Ա10.ՀԵԳ.ԲԱ.6)**<br>• Վերլուծել աշխատուժի միջազգային միգրացիան և դրա սոցիալ-տնտեսական հետևանքները: **(Ա10.ՀԵԳ.ԲԱ.7)** | | |
| | | ***Բնակչության տեղաբաշխում և տարաբնակեցում, ուրբանիզացման արդի գործընթացներ*** | • Վերլուծել բնակչության տեղաբաշխման և տարաբնակեցման վրա ազդող գործոններն ու արդի միտումները: **(Ա10.ՀԵԳ.ԲԱ.8)**<br>• Նկարագրել քաղաքների տիպերը, վերլուծել դրանց հատակագծային և քաղաքաշինական տարբերությունները: **(Ա10.ՀԵԳ.ԲԱ.9)**<br>• Վերլուծել ուրբանիզացման արդի գործընթացներն ու խոշոր քաղաքների հիմնախնդիրները: **(Ա10.ՀԵԳ.ԲԱ.10)**<br>• Բնորոշել կայուն քաղաքը: **(Ա10.ՀԵԳ.ԲԱ.11)** | | • Բնորոշել աշխարհի ուրբանիզացված տարածաշրջանները և դրանց զարգացման բնորոշ գծերը: **(Ա12.ՀԵԳ.ԲԱ.1)** |
| | **Աշխարհի քաղաքական բաժանում (ԱՔԲ)** | ***Քաղաքական քարտեզ, դրա ձևավորումը*** | • Բնորոշել աշխարհի քաղաքական բաժանման փուլերը: **(Ա10.ՀԵԳ.ԱՔԲ.1)**<br>• Տարբերակել քաղաքական քարտեզի քանակական և որակական փոփոխությունները: **(Ա10.ՀԵԳ.ԱՔԲ.2)** | | |
| | | ***Պետությունների փիպաբանություն, խմբավորում*** | • Դասակարգել աշխարհի պետությունները տարբեր սկզբունքներով: **(Ա10.ՀԵԳ.ԱՔԲ.3)** | | |
| | | ***Պետական տարածք, սահմաններ, աշխարհաքաղաքականություն*** | • Բացատրել քաղաքական աշխարհագրության ու աշխարհաքաղաքականության էությունը: **(Ա10.ՀԵԳ.ԱՔԲ.4)**<br>• Գնահատել ՀՀ տեղը՝ ժամանակակից գլոբալ և տարածաշրջանային աշխարհաքաղաքական գործընթացների համատեքստում: **(Ա10.ՀԵԳ.ԱՔԲ.5)** | | • Վերլուծել ինքնատիպ տարածաշրջանների և երկրների աշխարհագրական առանձնահատկությունները և զարգացման հնարավորությունները: **(Ա12.ՀԵԳ.ԱՔԲ.1)** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | ***Համաշխարհային տնտեսություն*** | | • Բացատրել Համաշխարհային տնտեսության ժամանակակից ճյուղային և տարածքային կառուցվածքի առանձնահատկությունները: **(Ա11.ՀԵԳ.ՏԿՏ.1)**<br>• Բնորոշել աշխատանքի միջազգային բաժանումը և պետությունների տնտեսական մասնագիտացումը: **(Ա11.ՀԵԳ.ՏԿՏ.2)**<br>• Գնահատել զարգացած և զարգացող երկրների տեղն ու դերը համաշխարհային տնտեսության համակարգում: **(Ա11.ՀԵԳ.ՏԿՏ.3)**<br>• Բացատրել համաշխարհային տնտեսության գլոբալացումն ու միասնացումը (ինտեգրումը): **(Ա11.ՀԵԳ.ՏԿՏ.4)**<br>• Վերլուծել համաշխարհային տնտեսության ճյուղերի տեղաբաշխման գործոններն ու զարգացման արդի միտումները: **(Ա11.ՀԵԳ.ՏԿՏ.5)**<br>• Կատարել կանխատեսումներ համաշխարհային և տարածաշրջանների տնտեսությունների կառուցվածքի զարգացման հեռանկարների վերաբերյալ: **(Ա11.ՀԵԳ.ՏԿՏ.6)** | • Բացատրել «Հյուսիս-հարավ» հակասությունների հիմնախնդրի էությունը: **(Ա12.ՀԵԳ.ՏԿՏ.1)**<br>• Վերլուծել տնտեսական սրընթաց աճ արձանագրած տարածաշրջանների և երկրների աշխարհագրական առանձնահատկությունները: **(Ա12.ՀԵԳ.ՏԿՏ.2)** |
| | | ***Արդյունաբերություն*** | | • Բնութագրել համաշխարհային արդյունաբերության ճյուղային կառուցվածքը: **(Ա11.ՀԵԳ.ՏԿՏ.7)**<br>• Վերլուծել արդյունաբերության առանձին ճյուղերի տեղաբաշխման գործոնները: **(Ա11.ՀԵԳ.ՏԿՏ.8)**<br>• Վերլուծել արդյունաբերության զարգացման ժամանակակից միտումները: **(Ա11.ՀԵԳ.ՏԿՏ.9)**<br>• Վերլուծել համաշխարհային վառելիքաէներգետիկ արդյունաբերության ճյուղային կառուցվածքի և տեղաբաշխման առանձնահատկությունները: **(Ա11.ՀԵԳ.ՏԿՏ.10)**<br>• Գնահատել այլընտրանքային էներգիայի աղբյուրների տարբեր տեսակների հիմնական առավելություններն ու թերությունները: **(Ա11.ՀԵԳ.ՏԿՏ.11)** | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | **Տնտեսության կառուցվածք և տեղաբաշխում (ՏԿՏ)** | ***Գյուղատնտեսություն*** | | • Բնութագրել գյուղատնտեսության կառուցվածքը, գյուղատնտեսության զարգացման ուղղությունները: **(Ա11.ՀԵԳ.ՏԿՏ.12)**<br>• Բնորոշել գյուղատնտեսության ժամանակակից արտադրական տիպերը, մասնագիտացումը, տեղաբաշխումը: **(Ա11.ՀԵԳ.ՏԿՏ.13)**<br>• Գնահատել «կանաչ հեղափոխության» նշանակությունը: **(Ա11.ՀԵԳ.ՏԿՏ.14)** | |
| | | **Տրանսպորտ և կապ** | | • Բնութագրել Համաշխարհային տրանսպորտի և կապի ժամանակակից կառուցվածքը և տեսակները: **(Ա11.ՀԵԳ.ՏԿՏ.15)**<br>• Գնահատել հաղորդակցության նորագույն միջոցների դերը: **(Ա11.ՀԵԳ.ՏԿՏ.16)**<br>• Վերլուծել տրանսպորտային արդի համակարգերն ու զարգացման միտումները: **(Ա11.ՀԵԳ.ՏԿՏ.17)** | |
| | | ***Ոչ արտադրական ոլորտի ճյուղեր*** | | • Բնութագրել ոչ արտադրական ոլորտի ճյուղային կառուցվածքը: **(Ա11.ՀԵԳ.ՏԿՏ.18)**<br>• Գնահատել ոչ արտադրական ոլորտի դերը տնտեսության մեջ: **(Ա11.ՀԵԳ.ՏԿՏ.19)**<br>• Վերլուծել ոչ արտադրական ոլորտի ճյուղերի զարգացման ներուժը և ճյուղային մասնագիտացման միտումները: **(Ա11.ՀԵԳ.ՏԿՏ.20)** | |
| | | ***Միջազգային տնտեսական հարաբերություններ*** | | • Բացատրել համաշխարհային շուկայի էությունը: **(Ա11.ՀԵԳ.ՏԿՏ.21)**<br>• Բնորոշել միջազգային տնտեսական հարաբերությունների հիմնական ձևերը: **(Ա11.ՀԵԳ.ՏԿՏ.22)**<br>• Գնահատել միջազգային տնտեսական հարաբերությունների դերը համաշխարհային տնտեսության զարգացման գործընթացում:**(Ա11.ՀԵԳ.ՏԿՏ.23)** | • Բացատրել Եվրոպական Միության, որպես տարածաշրջանային միասնացման օրինակի առանձնահատկությունները: **(Ա12.ՀԵԳ.ՏԿՏ.3)** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **3. Մարդ-բնություն փոխհարաբերություններ (ՄԲ)** | **Շրջակա միջավայր (ՇՄ)** | ***Բնական պայմաններ և ռեսուրսներ (տեսակները, արդյունավետ օգտագործումը)*** | • Վերլուծել բնական պայմանների ազդեցությունը մարդու տնտեսական գործունեության վրա: **(Ա10.ՄԲ.ՇՄ.1)**<br>• Հասկանալ արդյունավետ ռեսուրսօգտագործման արդի սկզբունքները: **(Ա10.ՄԲ.ՇՄ.2)**<br>• Բացատրել բնական ռեսուրսների փոխարկելիության հնարավորությունները: **(Ա10.ՄԲ.ՇՄ.3)**<br>• Գնահատել մարդկության և առանձին երկրների ապահովվածությունը տարբեր տեսակի բնական ռեսուրսներով: **(Ա10.ՄԲ.ՇՄ.4)** | • Բացատրել միջավայրի էկոլոգիական հավասարակշռությունը: **(Ա11.ՄԲ.ՇՄ.1)**<br>• Վերլուծել էկոլոգիական հավասարակշռության խախտման պատճառներն ու հետևանքները, բնորոշել «էկոլոգիական հետքը»: **(Ա11.ՄԲ.ՇՄ.2)**<br>• Խմբավորել միջավայրի աղտոտիչները՝ ըստ իրենց բնույթի: **(Ա11.ՄԲ.ՇՄ.3)**<br>• Մեկնաբանել բնապահպանական կառավարման համակարգի տարրերը: **(Ա11.ՄԲ.ՇՄ.4)**<br>• Սահմանել ՇՄԱԳ, ՇՄԱՓ և ՌԷԳ հասկացությունները: **(Ա11.ՄԲ.ՇՄ.5)**<br>• Բացատրել կայուն արտադրություն և սպառում գաղափարի էությունը: **(Ա11.ՄԲ.ՇՄ.6)**<br>• Գնահատել շրջանաձև տնտեսության նշանակությունը տնտեսության մոդելավորման համատեքստում: **(Ա11.ՄԲ.ՇՄ.7)**<br>• Մեկնաբանել կայուն գյուղատնտեսության վարման առանձնահատկությունները: **(Ա11.ՄԲ.ՇՄ.8)**<br>• Բնորոշել ջրօգտագործման հիմնական ոլորտները: **(Ա11.ՄԲ.ՇՄ.9)**<br>• Սահմանել ջրի որակական և քանակական սպառումը: **(Ա11.ՄԲ.ՇՄ.10)**<br>• Տարբերակել հողաբարելավման միջոցառումների հիմնական տեսակներն ու ներկայացնել դրանց աշխարհագրական տարածումը: **(Ա11.ՄԲ.ՇՄ.11)**<br>• Վերլուծել հողերի օգտագործման առանձնահատկությունները, աղտոտման պատճառներն ու հետևանքները: **(Ա11.ՄԲ.ՇՄ.12)**<br>• Մեկնաբանել անապատացման երևույթը: **(Ա11.ՄԲ.ՇՄ.13)**<br>• Բացատրել հատուկ պահպանվող տարածքների նշանակությունը: **(Ա11.ՄԲ.ՇՄ.14)**<br>• Մեկնաբանել անտառների կայուն կառավարումը: **(Ա11.ՄԲ.ՇՄ.15)**<br>• Գնահատել էկոհամակարգային ծառայությունների նշանակությունը: **(Ա11.ՄԲ.ՇՄ.16)** | • Վերլուծել լեռնային տարածաշրջանների և երկրների բնատնտեսական առանձնահատկությունները: **(Ա12.ՄԲ.ՇՄ.1)**<br>• Վերլուծել չորային (արիդ) տարածաշրջանների աշխարհագրական առանձնահատկությունները: **(Ա12.ՄԲ.ՇՄ.2)**<br>• Գնահատել օգտակար հանածոների և վառելիքի տարբեր տեսակների շահագործման արդի վիճակն ու հիմնախնդիրները: **(Ա12.ՄԲ.ՇՄ.3)** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | ***Բնական աղետներ (տեսակները, տարածումը, դրանցից պաշտպանությունը)*** | • Բնութագրել երկրադինամիկ երևույթների հետ կապված բնական աղետներն ու դրանց տարածումը: **(Ա10.ՄԲ.ՇՄ.5)**<br>• Բնորոշել մթնոլորտային և ջրաբանական երևույթների հետ կապված բնական աղետները, դրանց տարածումն ու պաշտ-պանությունը: **(Ա10.ՄԲ.ՇՄ.6)** | | |
| | **Մարդկության զարգացման հիմնահարցեր (ՄԶՀ)** | ***Մարդկության համամոլորակային հիմնախնդիրներ*** | | | • Բնորոշել մարդկության հա-մամոլորակային հիմնախնդ-իրները: **(Ա12.ՄԲ.ՄԶՀ.1)**<br>• Բացատրել տարբեր հիմնա-խնդիրների փոխադարձ կապը: **(Ա12.ՄԲ.ՄԶՀ.2)**<br>• Վերլուծել հանքային հումքի և վառելիքաէներգետիկ ռե-սուրսների հիմնախնդիրը: **(Ա12.ՄԲ.ՄԶՀ.3)**<br>• Վերլուծել ժողովրդագրա-կան, պարենային և առողջա-պահական հիմնախնդիրնե-րի բովանդակությունն ու պատճառահետևանքային կապերը: **(Ա12.ՄԲ.ՄԶՀ.4)**<br>• Վերլուծել բնապահպանա-կան և Համաշխարհային օվկիանոսի հիմնախնդիրնե-րի պատճառահետևանքային կապերը: **(Ա12.ՄԲ.ՄԶՀ.5)** |
| | | ***Կայուն զարգացման հայեցակարգ և Հազարամյակի մարտահրավեր-ների նպատակներ*** | | | • Վերլուծել Հազարամյակի մարտահրավերների նպա-տակները: **(Ա12.ՄԲ.ՄԶՀ.6)**<br>• Բացատրել մարդկության կայուն զարգացման հայեցա-կարգի էությունը: **(Ա12.ՄԲ.ՄԶՀ.7)** |

## 5. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

**Ընդհանրական պարզաբանումներ**

1. «Աշխարհագրություն» և «Հայաստանի աշխարհագրություն» առարկաներից սովորողների գնահատման նպատակն է՝

1) պարզել նրանց գիտելիքների, կարողությունների և հմտությունների համապատասխանության աստիճանը առարկայի չափորոշչով և ծրագրով սահմանված պահանջներին,

2) բացահայտել ուսումնառության գործընթացում յուրաքանչյուր սովորողի ձեռքբերումները, բացթողումները, կարիքներն ու դժվարությունները,

3) օգնել ուսուցչին ճշգրտելու յուրաքանչյուր սովորողի և ամբողջ դասարանի հետ տարվող աշխատանքի ծավալն ու բովանդակությունը, հետադարձ կապի միջոցով բարելավելու ուսուցման որակը:

2. Կիրառվում են քանակական (միավորային) և ձևավորող (ուսուցանող) գնահատումներ:

3. Ձևավորող գնահատումն իրականացվում է ծրագրային նյութի յուրացման մակարդակի, սովորողների անհատական կարիքների, ուսումնական գործընթացի արդյունավետության մասին անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու նպատակով:

4. Ձևավորող գնահատման մեթոդներն ու ձևաչափն ընտրում է հանրակրթական ուսումնական հաստատությունը:

5. Միավորային գնահատումն իրականացվում է որոշակի ժամանակահատվածում, ուսումնական նյութի որոշակի ծավալի շրջանակներում սովորողների ձեռքբերումները պարզելու և պաշտոնապես գրանցելու նպատակով:

6. Միավորային գնահատումը սովորաբար իրականացվում է առանձին ծրագրային ամբողջական թեմայի ուսուցման կամ կիսամյակի վերջում:

7. Միավորային գնահատումն իրականացվում է 10 միավորային սանդղակով: Գնահատման այլ սանդղակներ կիրառելիս արդյունքներն արտահայտվում և ամրագրվում են 10 միավորային սանդղակով:

## 6. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Աշխարհագրության դասավանդումը պետք է իրականացվի համագործակցության և հետազոտության վրա հիմնված ուսումնառության սկզբունքով: Հետազոտության վրա հիմնված ուսումնառությունը հենվում է սովորողների ինքնուրույն և համագործակցությամբ իրականացվող հետազոտությունների և գործնական ուսուցման վրա:

6.2. Ուսումնասիրվող նյութի շրջանակում հետազոտվող աշխարհագրական երևույթի կամ օբյեկտի համակողմանի ուսումնասիրությունը, դրանց վերաբերյալ հստակ և

ամբողջական ձևակերպումները, առաջ քաշված հարցերի լուծումները սովորողի իրականացրած հիմնական աշխատանքներն են: Դա հնարավորություն կընձեռի, որ սովորողները ձևակերպեն աշխարհագրական բնական կամ հասարակական օբյեկտի ու երևույթի վերաբերյալ գիտական օրինաչափություններ և առանձնահատկություններ, կարողանան առաջ քաշել գիտական հարցադրումներ և իրականացնել հետազոտություններ:

6.3. Դասավանդող ուսուցիչը պետք է դասավանդման և ուսումնառության գործընթացը համարեցնի սովորողների առանձնահատկություններին, նախասիրություններին և կարողու-թյուններին՝ կիրառելով տարբերակված ուսուցման տարաբնույթ մարտավարություններ: Կարևոր է, որ դասվանդման ընթացքում կիրառված մոտեցումները, աշխատանքների տեսակները և մեթոդները լինեն բազմազան և հետաքրքիր, ուղղակիորեն կապված լինեն ծրագրի նպատակներին և ակնկալվող վերջնարդյունքներին:

6.4. Ուսուցման գործընթացում, կախված թեմայից, դասի նպատակներից, դասարանից, սովորողների առանձնահատկություններից, ուսումնական գործընթացի կազմակերպման առկա հնարավորություններից և այլ հանգամանքներից, տվյալ դասի կամ դասի առանձին հատվածի համար կարող են ընտրվել ուսումնական գործունեության տարբեր տեսակներ՝

- ուսումնական նյութի հաղորդում, բացատրություն, լուսաբանում,
- մոդելների և քարտեզների դիտարկում, ցուցադրում, պատրաստում,
- տեղանքի դիտարկում, ուսումնասիրում, էքսկուրսիաների անցկացում,
- նկարների և ֆիլմերի դիտում, քննարկում,
- ուսումնական ձեռնարկների և այլ աղբյուրների ուսումնասիրություն,
- չափողական, գործնական և փորձնական աշխատանքների կատարում,
- ուսումնական նախագծերի, գրաֆիկական և քարտեզագրական աշխատանքների կատարում,
- հիմնահարցերի հետազոտում, աշխարհագրական խնդիրների և վարժությունների լուծում,
- ստեղծագործական աշխատանքների կատարում,
- տեխնիկական սարքերով և գործիքներով աշխատանքների կատարում,
- խաղերի, մրցույթների, հանդեսների անցկացում,
- իրավիճակների և արդյունքների վերլուծում,
- գրավոր աշխատանքների կատարում,
- նոր տեխնոլոգիաների, համակարգչային ծրագրերի օգտագործում,
- անհատական և խմբային, ինքնուրույն և համագործակցային աշխատանքների կատարում,
- հաշվետվությունների պատրաստում,
- բանավոր և գրավոր հարցադրումների, թեստային աշխատանքների, ստուգարքների անցկացում:

## 7. «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ» (7-8-ՐԴ, 10-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ) ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ» (9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ) ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԾՐԱԳՐԵՐ

### Բացատրագիր

Հանրակրթական դպրոցում համակարգված, ամբողջական և անընդհատ աշխարհագրական կրթությունը սկսվում է 7-րդ դասարանի «Ընդհանուր աշխարհագրություն» դասընթացով: Դասընթացը նպատակաուղղված է քարտեզներ ընթերցելու, դրանցով տարբեր գործնական աշխատանքներ կատարելու, ինչպես նաև Երկրի մակերևույթի, Համաշխարհային օվկիանոսի, կլիմայի, աշխարհագրական գոտիականության և զոնայականության, աշխարհի քաղաքական բաժանման, աշխարհի բնակչության, բնական պայմանների ու ռեսուրսների և համաշխարհային տնտեսության ճյուղային ու տարածական կառուցվածքի վերաբերյալ գիտելիքների և դրանց կիրառման հմտությունների զարգացմանը:

8-րդ դասարանում ուսումնասիրվելու է «Աշխարհագրություն» առարկայի «Տարածաշրջաններ և պետություններ» դասընթացը: Այս դասընթացը կոչված է ամբողջական ու խոր գիտելիքներ տալու աշխարհի տարածաշրջանների ու առանձին պետությունների բնության, բնակչության և տնտեսության մասին: Դասընթացում քննության են առնվում նաև բնական պայմանների և ռեսուրսների տնտեսական գնահատման, պետությունների ու ժողովուրդների քաղաքական, սոցիալական ու մշակութային զարգացման հարցերը:

Ուսումնասիրելով հասարակության տարածքային կազմակերպումը, աշխարհի տարածաշրջաններն ու գլխավոր պետությունները՝ սովորողները ստանում են տնտեսագիտական, ազգագրական ու քաղաքական լրացուցիչ գիտելիքներ: Հատուկ ուշադրություն է հատկացվել ՀՀ անմիջական հարևաններին:

9-րդ դասարանում ուսումնասիրվելու է «Հայաստանի աշխարհագրություն» դասընթացը: Դասընթացի կարևորագույն նպատակն է սովորողին՝ տարբեր մասնագիտական ունակությունների զարգացման ուղղությամբ շարունակական կրթություն ստացող ՀՀ ապագա քաղաքացուն, հաղորդել բազմակողմանի ու համակարգված գիտելիքներ պատմական Հայաստանի աշխարհագրական դիրքի, սահմանների, բնության, ՀՀ և ԱՀ բնական պայմանների ու հարստությունների, պետական կառուցվածքի, բնակչության ու տնտեսության, հասարակության այսօրվա կյանքի, արտաքին տնտեսական կապերի, հեռանկարային զարգացման հնարավորությունների, ժամանակակից աշխարհում նրանց տեղի ու դերի մասին: «Հայաստանի աշխարհագրություն» 9-րդ դասարանի դասընթացը կոչված է լրացնելու ՀՀ հանրակրթական դպրոցի սովորողների աշխարհագրական, ինչպես նաև հայագիտական ու հայրենագիտական գիտելիքները՝ ճանաչելի դարձնելով սեփական հայրենիքի աշխարհագրական առանձնահատկությունները, զարգացնելով շրջակա

միջավայրում ընթացող բնական ու հասարակական երևույթների բազմաբնույթ կապերը դիտարկելու, վերլուծելու և գնահատելու որոշակի կարողություններ:

Ավագ դպրոցի 10-12-րդ դասարանների «Ընդհանուր աշխարհագրություն» դասընթացը նպատակաուղղված է առարկայական ծրագրում ներառված հիմնական (միջին) դպրոցի չափորոշիչներով (հիմնական գաղափարներ և վերջնարդյունքներ) սահմանված գիտելիքների, հմտությունների, դիրքորոշման և արժեքների պարուրաձև զարգացմանը: Օրինակելի ծրագրերում առանձնանում են քարտեզագրական (ԱՏՀ և ԳՏՀ կիրառմամբ), ֆիզիկաաշխարհագրական, աշխարհի բնակչության և համաշխարհային տնտեսության, ինչպես նաև մարդ-բնություն փոխհարաբերությունների, մարդկության կայուն զարգացման ու մարդկության համամոլորակային և տարածաշրջանային հիմնախնդիրների վերլուծությունների պահանջները, որոնց ապահովումը կնպաստի սովորողի ոչ միայն համակարգված աշխարհաճանաչողության, այլև աշխարհագրական մտածողության զարգացմանը:

Աշխարհագրության օրինակելի ծրագրերը տրված են ըստ դասարանների: Տվյալ դասարանի ծրագրում ներկայացվում են յուրաքանչյուր թեմայի՝

- Նպատակը (ները)
- վերջնարդյունքները՝ ըստ սովորողի համար սահմանված կարողունակությունների (գիտելիք, հմտություններ, վերաբերմունք, արժեքներ)
- բովանդակությունը
- գործնական աշխատանքները, թեմատիկ ուսումնասիրությունները
- ընդհանրական խաչվող հասկացությունները
- միջառարկայական կապերը
- կապը Հանրակրթության պետական չափորոշչի հիմնական (կամ միջնակարգ) կրթության վերջնարդյունքների հետ[1]:

[1] Կապերը տրված են ՀՊՉ հիմնական (կամ միջնակարգ) կրթության աստիճանի սկզբնատառով և վերջնարդյունքների համարներով, որոնց առնչվում է տվյալ թեման:

**ՕՐԻՆԱԿԵԼԻ ԾՐԱԳՐԵՐ**
**ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ**
**7-րդ դասարան**
(առաջարկվում է 68 ժամ, որից 9 ժամ՝ պահուստային)

| **Թեմա 1.** |
|---|
| **ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՔԱՐՏԵԶ (8 ժամ)** |
| **Նպատակ** |
| Զարգացնել գիտելիքներ աշխարհագրական քարտեզների և դրանց կազմման մեթոդների վերաբերյալ, ձևավորել քարտեզաչափական խնդիրների լուծման հմտություններ: |
| **Վերջնարդյունքներ** |
| **Աշխարհագրական տեղեկույթ ձեռք բերելու և քարտեզաչափական աշխատանքներ կատարելու նպատակով օգտագործել տարբեր նշանակության քարտեզներ և հատակագծեր, բնորոշել քարտեզի և հատակագծի հիմնական տարրերը, քարտեզների տեսակները, քարտեզագրական պրոյեկցիաներն ու պատկերման եղանակները, կիրառել թվային տարբեր քարտեզներ:**<br><br>Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝<br>1. *Բնորոշել* որևէ օբյեկտի կամ տեղանքի հատակագիծը:<br>2. *Բնորոշել* հատակագծի և քարտեզի ընդհանրություններն ու տարբերությունները:<br>3. *Կազմել* որևէ փոքր տեղանքի մոտավոր հատակագիծը՝ օգտագործելով համապատասխան պայմանական նշաններ:<br>4. *Բնորոշել* ու *սահմանել* աստիճանացանցի տարրերը:<br>5. Քարտեզի կամ գլոբուսի վրա *որոշել* տարբեր կիսագնդերում գտնվող ցանկացած 4 կետերի աշխարհագրական կոորդինատները:<br>6. *Արտահայտել* միևնույն մասշտաբը տարբեր՝ թվային, գծային կամ անվանական եղանակներով, *համեմատել* քարտեզները՝ ըստ մասշտաբի:<br>7. *Կատարել* չափումներ և հաշվարկներ տարբեր մասշտաբների քարտեզներում: |

8. *Լուծել* միևնույն միջօրեականի և հասարակածի վրա գտնվող երկու կետերի միջև հեռավորության որոշման խնդիրներ:
9. *Ներկայացնել* աշխարհագրական քարտեզները՝ ըստ բովանդակության, մասշտաբի:
10. *Տարբերակել* կոնային, գլանային և ազիմուտային պրոյեկցիաները:
11. *Ճանաչել* քարտեզներում կիրառվող պայմանական նշանները, *փարբերակել* դրանց օգտագործման եղանակները՝ ըստ նշանակության:
12. *Նկարագրել* քարտեզագրական տարբեր եղանակներով պատկերված բնական և հասարակական աշխարհագրական օբյեկտներն ու երևույթները (որակական ֆոն, գծային նշաններ, իզոգծեր, արեալներ, քարտեզագրամներ):
13. *Կազմել* «Երկրագնդի կլիմայական գոտիները» թեմատիկ քարտեզ:
14. *Կարդալ* որևէ թեմատիկ քարտեզ:

**Բովանդակություն**

1. Ի՞նչ է ուսումնասիրում աշխարհագրությունը:
2. Տեղանքի հատակագիծ: Մասշտաբ:
3. *Գործնական աշխափանք:* Տեղանքի հատակագծի կազմումը: Կողմնորոշում հատակագծով:
4. Աշխարհագրական քարտեզ: Քարտեզների դասակարգումը՝ ըստ բովանդակության, մասշտաբի և տարածքի ընդգրկման:
5. Աստիճանացանց: Աշխարհագրական կոորդինատներ:
6. Քարտեզագրական պրոյեկցիաներ. կոնային, գլանային, ազիմուտային: Պայմանական նշաններ:
7. *Գործնական աշխափանք:* Քարտեզագրական պատկերման եղանակներ (որակական ֆոն, գծային նշաններ, իզոգծեր, արեալներ, քարտեզագրամներ):
8. «Աշխարհագրական քարտեզ» թեմայի ամփոփում:

| **Գործնական աշխատանք, թեմատիկ ուսումնասիրություն**[2] | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
|---|---|
| *Քարփեզագրական պափկերման եղանակներ*՝<br>• *որակական ֆոն* (ատլասից ընտրված որևէ քարտեզից որակական ֆոնի մեթոդով քարտեզագրված օբյեկտների և (կամ) երևույթների առանձնացում), | *Համակարգեր և համակարգերի մոդելներ*<br>• Քարտեզը որպես բնական և հասարակական որևէ համակարգի տարածական մոդել:<br>*Մասշփաբ, համամասնություն և քանակ* |

[2] Գործնական աշխատանք և թեմատիկ ուսումնասիրություն բաժնում տրված առաջադրանքները կատարվում են ուսուցչի կամ սովորողների նախընտրությամբ:

<table>
<tr><td>

- *գծային նշաններ* (ընդհանուր աշխարհագրական որևէ քարտեզից գծային նշանների դուրսգրում և լեգենդայի կազմում),
- *իզոգծեր* (ֆիզիկական քարտեզների վրա դրանց ճանաչում),
- *արեալներ* (համացանցում ուսումնասիրել որևէ բուսատեսակի կամ կենդանատեսակի տարածման արեալ),
- *քարտեզագրամներ* (համացանցից 2-3 քարտեզագրամների ներբեռնում և ուսումնասիրում՝ նշելով դրանց միջոցով պատկերված երևույթը կամ օբյեկտը):

</td><td>

- Քարտեզի քանակական տվյալներ և որակական տեղեկույթներ:
- Երևույթի կամ օբյեկտի չափերը՝ ըստ սանդղակի:
- Գունային կամ քանակական տվյալների սանդղակներ:

</td></tr>
<tr><td colspan="2">

**Միջառարկայական կապեր**

</td></tr>
<tr><td colspan="2">

**Հայոց լեզու** - Վերլուծել և ընկալել տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանալ դրանց հիմնական գաղափարը: Կազմել ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք, այդ թվում՝ հրապարակային խոսք, կիրառել ոչ վերբալ հաղորդակցման տարատեսակ միջոցներ:<br>
**Բնագիտություն** - Գաղափար ունենալ Երկրի պատկերման մոդելների մասին:<br>
**Հանրահաշիվ** - Հաշվել հեռավորություններ՝ ըստ քարտեզի մասշտաբի, մաս(եր), տոկոս(ներ):

</td></tr>
<tr><td colspan="2">

**Կապը ՀՊՉ հանրակրթական հիմնական ծրագրի ակնկալվող վերջնարդյունքների հետ**

</td></tr>
<tr><td colspan="2">

Հ1, Հ2, Հ4, Հ5, Հ8, Հ9, Հ10, Հ24, Հ25, Հ26, Հ27, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32

</td></tr>
</table>

| Թեմա 2. |
|---|
| **ԵՐԿՐԻ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ: ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՎԿԻԱՆՈՍԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (8 ժամ)** |
| **Նպատակ** |
| Ձևավորել և հարստացնել երկրակեղևի, երկրակեղևի սալերի, Երկրի մակերևույթի, Համաշխարհային օվկիանոսի ջրի շարժի վերաբերյալ գիտելիքները: |
| **Վերջնարդյունքներ** |
| • **Բնութագրել երկրակեղևի կառուցվածքը, դրա զարգացման, սալերի շարժման, մակերևույթի ձևավորման (լեռնագոյացման) գործընթացները, երկրագնդի խոշոր պլատֆորմներն ու գեոսինկլինալային շրջանները, բացատրել Երկրի մակերևույթի մարդածին փոփոխությունները:**<br>• **Բնորոշել Համաշխարհային օվկիանոսի ջրերի շարժման, ջերմության, աղիության հիմնական առանձնահատկությունները:**<br><br>Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝<br>1. *Բնորոշել* աշխարհագրական թաղանթը և դրա հատկանիշները:<br>2. Ընդհանուր գծերով *բնորոշել* երկրաբանական տարբեր դարաշրջաններում երկրագնդի զարգացման գլխավոր գործընթացները:<br>3. *Բացատրել* պլատֆորմի առաջացումը և գեոսինկլինալի զարգացման փուլերը:<br>4. Թվարկել երկրաբանական վաղ անցյալի գերմայրցամաքները, առանձնացնել ժամանակակից մայրցամաքներն ու օվկիանոսները:<br>5. Միևնույն մասշտաբի քարտեզների վրա պատկերված ժամանակակից մայրցամաքների ուրվագծերի համադրմամբ *վերստեղծել* երկրաբանական անցյալում գոյություն ունեցած միասնական մեգամայրցամաքի պատկերը:<br>6. *Հասկանալ*, որ երկրակեղևի փոփոխման գործընթացներով է պայմանավորված երկրակեղևի տվյալ հատվածի ներքին կառուցվածքը, ապարների կազմը, մակերևույթը:<br>7. Երկրագնդի երկրաբանական քարտեզով *գտնել* պլատֆորմների և գեոսինկլինալների տարածման շրջանները, բեկվածքները:<br>8. *Բացատրել* մարդածին գործոնների ազդեցությամբ Երկրի մակերևույթի վրա առաջացած փոփոխությունները, *բնորոշել* մակերևույթի ձևերի ազդեցությունը մարդու գործունեության վրա: |

| |
|---|
| 9. *Ներկայացնել* Համաշխարհային օվկիանոսի հատակի ռելիեֆը:<br>10. *Բացատրել* Համաշխարհային օվկիանոսի ջրի ջերմության և աղիության փոփոխության օրինաչափությունները և առանձին մասերում դրանց առանձնահատկությունները:<br>11. *Ներկայացնել* տարբեր օվկիանոսների կարևոր սառը և տաք հոսանքները:<br>12. *Բացատրել* մակընթացության և տեղատվության երևույթը: |
| **Բովանդակություն** |
| 1. Աշխարհագրական թաղանթ. կառուցվածքը, հատկանիշները:<br>2. Երկրակեղևի կառուցվածքը, զարգացումը, սալերն ու դրանց շարժումը: Երկրաբանական դարաշրջաններ:<br>3. Մայրցամաքներ: Երկրագնդի խոշոր պլատֆորմների ու գեոսինկլինալային շրջանները: Լեռնագոյացում:<br>4. Երկրի մակերևույթի մարդածին փոփոխությունները:<br>5. Համաշխարհային օվկիանոսի հատակի ռելիեֆը:<br>6. Համաշխարհային օվկիանոսի ջրի ջերմությունն ու աղիությունը:<br>7. Ջրի շարժումը Համաշխարհային օվկիանոսում: Մակընթացություն և տեղատվություն:<br>8. «Երկրի մակերևույթի ձևավորում: Համաշխարհային օվկիանոսի աշխարհագրական առանձնահատկությունները» թեմայի ամփոփում: |

| **Գործնական աշխատանք** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
|---|---|
| ____________ | *Պատճառ և հետևանք*<br>• Մեկընթացությունն ու տեղատվությունը որպես տիեզերական մարմինների ձգողության հետևանք<br>*Էներգիա և նյութ*<br>• Երկրակեղևի սալերի տեղաշարժերը որպես Երկրի ձգողականության, ներքին էներգիայի, ապարների խտության արդյունք:<br>*Կայունություն և փոփոխություն*<br>• Պլատֆորմները որպես երկրակեղևի կայուն, իսկ գեոսինկլինալներն անկայուն, փոփոխական տեղամասեր: |

| Միջառարկայական կապեր |
| --- |
| **Հայոց լեզու** - Վերլուծել և ընկալել տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանալ դրանց հիմնական գաղափարը: Կազմել ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք, այդ թվում՝ հրապարակային խոսք, կիրառել ոչ վերբալ հաղորդակցման տարատեսակ միջոցներ:<br>**Բնություն** - Կարողանալ բացատրել երկրակեղևի շարժումները, երկրի մակերևույթը փոփոխող ներծին և արտածին ուժերը: Իմանալ ջրային թաղանթի կառուցվածքային տարրերի մասին: Գաղափար ունենալ լուծույթների մասին:<br>**Ֆիզիկա** - Հասկանալ, որ օվկիանոսի հատակին ճնշումը ենթարկվում է պինդ մարմինների, հեղուկների և գազերի ճնշման օրինաչափություններին: |
| **Կապը ՀՊՉ հանրակրթական հիմնական ծրագրի ակնկալվող վերջնարդյունքների հետ** |
| Հ1, Հ2, Հ8, Հ9, Հ10, Հ11, Հ12, Հ17, Հ24, Հ25, Հ26, Հ27, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32 |

| Թեմա 3. |
| --- |
| **ԵՂԱՆԱԿ ԵՎ ԿԼԻՄԱ: ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԳՈՏԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶՈՆԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (12 ժամ)** |
| **Նպատակ** |
| Ձևավորել գիտելիքներ երկրագնդի աշխարհագրական գոտիների, հիմնական բնական զոնաների, հորիզոնական և վերընթաց գոտիականության վերաբերյալ: |
| **Վերջնարդյունքներ** |
| • **Բնորոշել մթնոլորտի ջերմաստիճանի, ճնշման և խոնավության փոփոխություններով պայմանավորված եղանակային և կլիմայական գործընթացները:**<br>• **Բնութագրել հորիզոնական (լայնակի) զոնայականությունն ու գոտիականությունը (այդ թվում՝ վերընթաց), կլիմաստեղծ գործոնները, բացատրել դրանցով պայմանավորված գործընթացները և կլիմայական գոտիների և բնական զոնաների առանձնացումը:** |

Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. *Ներկայացնել* եղանակաստեղծ տարրերը և դրանց փոխադարձ կապերով պայմանավորված եղանակի փոփոխությունները:
2. *Բացատրել* օդի ջերմաստիճանի օրական և տարեկան ընթացքը, *հաշվել* օդի միջին օրական, տարեկան, ամսական ջերմաստիճանները, դրանց տատանման լայնույթը:
3. *Բացատրել* մթնոլորտային ճնշման փոփոխությունը, տեղական քամիների առաջացումը:
4. *Բնորոշել* քամու ուժը, արագությունը, ուղղությունը՝ դրանք ցույց տալով հողմացույցի վրա:
5. *Կառուցել* քամիների վարդ (ցանկալի է իր բնակավայրի մոտ գտնվող օդերևութաբանական կայանի տվյալների հիման վրա):
6. *Բացատրել* բրիզների և լեռնահովտային քամիների առաջացման մեխանիզմը:
7. *Սահմանել* մթնոլորտի բացարձակ խոնավություն և մթնոլորտի հարաբերական խոնավություն հասկացությունները, տրված տվյալներով *լուծել* խնդիրներ օդի հարաբերական և բացարձակ խոնավության վերաբերյալ:
8. *Բացատրել* երկրագնդի վրա մթնոլորտային տեղումների անհավասարաչափ տեղաբաշխման պատճառները:
9. *Բնորոշել* կլիմա հասկացությունը, *բացատրել* կլիմաստեղծ գործոնները:
10. *Բացատրել* իր բնակավայրի կլիմաստեղծ գործոնները և կլիմայի սեզոնային փոփոխությունները:
11. *Բնորոշել* և *համեմատել* կլիմայի հիմնական տիպերը:
12. *Բացատրել* աշխարհագրական տարբեր լայնություններում օդի ջերմաստիճանների տարբերության գլխավոր պատճառը:
13. *Բացատրել* տարվա ընթացքում Արեգակի ճառագայթների անկման անկյան փոփոխությունը:
14. Ուրվագծային քարտեզի վրա *պատկերել* երկրագնդի ջերմային գոտիները: Երկրագնդի որևէ կիսագնդի ուրվագծային քարտեզի վրա *սփվերարկել* մթնոլորտային ճնշման գոտիները և շարժման գծերի միջոցով *նշել* պասսատները, արևմտյան և արկտիկական (անտարկտիկական) քամիները:
15. *Բացատրել* գերիշխող քամիների և մուսսոնների առաջացման մեխանիզմը, *գնահատել* դրանց ազդեցությունը մայրցամաքների և օվկիանոսների կլիմայի վրա:
16. *Առանձնացնել* և *համեմատել* հիմնական և անցումային կլիմայական գոտիները, *համեմատել* կլիմայական մարզերի հիմնական բնութագրիչները:
17. Տրված տվյալների հիման վրա *կառուցել* որևէ վայրի կլիմայական դիագրամ՝ *նշելով* դրա գտնվելու կլիմական գոտին, մարզը:
18. Օրինակներով *բացատրել* կլիմայի ազդեցությունը մարդու առօրյա գործունեության վրա:
19. Քարտեզի վրա *ցույց տալ* հիմնական բնական զոնաները:
20. *Բնորոշել* բնատարածքային համալիր հասկացության բովանդակությունը:
21. *Համեմատել* տարբեր բնական զոնաների բուսական և կենդանական աշխարհը:
22. *Բացատրել* արևադարձային անտառների պահպանության հիմնախնդիրը կայուն զարգացման համատեքստում:

| **Բովանդակություն** |
|---|
| 1. Եղանակ, եղանակաստեղծ տարրերը: Օդի ջերմաստիճանի չափումը և ընթացքը: Ջերմության անհավասարաչափ բաշխումը Երկրի վրա:<br>2. Մթնոլորտային ճնշում. չափումը, փոփոխությունները: Քամի (ուժը, ուղղությունը և արագությունը): Տեղական քամիներ (բրիզ, լեռնահովտային քամիներ): Քամիների վարդ:<br>3. Մթնոլորտի խոնավությունը (բացարձակ և հարաբերական խոնավություն): Մթնոլորտային տեղումների բաշխումը երկրագնդի վրա<br>*4. Գործնական աշխատանք*<br>5. Կլիմա: Կլիմաստեղծ գործոնները:<br>6. Կլիմայի հիմնական տիպերը: Կլիմայական դիագրամներ (կլիմագրամներ):<br>7. Երկրի տարեկան պտույտը: Կլիմայական եղանակների առաջացումը:<br>8. Մթնոլորտի ընդհանուր շրջանառությունը: Օդային զանգվածներ:<br>9. Կլիմայական գոտիներ և մարզեր, դրանց առանձնացումը:<br>10. Բնատարածքային համալիրներ: Հորիզոնական (լայնակի) զոնայականություն, վերընթաց գոտիականություն:<br>11. Բնական զոնաներ, դրանց աշխարհագրական տարածումը:<br>12. «Եղանակ և կլիմա: Աշխարհագրական զոնայականություն և գոտիականություն» թեմայի ամփոփում: |

| **Գործնական աշխատանք, թեմատիկ ուսումնասիրություն** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
|---|---|
| • Օդի ջերմաստիճանի, ճնշման վերընթաց փոփոխությունների և խոնավության վերաբերյալ խնդիրների լուծում:<br>• Ուրվագծային քարտեզի վրա գծանշել և որակական ֆոնի եղանակով պատկերել երկրագնդի ջերմային գոտիները: | *Օրինաչափություններ*<br>• Օդի ջերմաստիճանի օրական և տարեկան փոփոխությունը:<br>• Արեգակից ստացած ջերմության քանակի նվազում՝ հասարակածից դեպի բևեռներ:<br>• Մայրցամաքում խոնավության նվազում՝ ծովից հեռավորության ավելացմանը զուգընթաց:<br>• Ըստ բարձրության՝ ջերմաստիճանի նվազում, խոնավության՝ ավելացում:<br>*Պատճառ և հետևանք*<br>• Երկրագնդի վրա ջերմության անհավասարաչափ բաշխման գլխավոր պատճառները՝ երկրագնդի գնդաձևությունը, առանցքի թեքությունը և պտույտն իր առանցքի և Արեգակի շուրջ: |

| | |
|---|---|
| • Երկրագնդի ուրվագծային քարտեզի (կիսագնդերի քարտեզ) վրա ստվերարկել մթնոլորտային ճնշման գոտիները:<br>• Շարժման գծերի միջոցով նշել պասսատները, արևմտյան և արկտիկական (անտարկտիկական) քամիները: | • Երկրագնդի վրա ջերմության անհավասարաչափ բաշխման հետևանքով յուրաքանչյուր կիսագնդում առաջանում է օդի շրջանառության երեք օղակ:<br>• Անցումային կլիմայական գոտիները չունեն իրենց օդային զանգվածները, այստեղ տիրապետող են հարևան երկու հիմնական կլիմայական գոտիների օդային զանգվածները՝ պայմանավորված Արեգակի դիրքի փոփոխությամբ:<br>• Ըստ բարձրության՝ կլիմայի փոփոխության պատճառով փոխվում են բնական(վերընթաց) գոտիները:<br>*Համակարգեր և համակարգերի մոդելներ*<br>• Բնական զոնաները՝ նույն կլիմայական գոտում տարբեր ջերմության և խոնավության արդյունք:<br>*Կայունություն և փոփոխություն*<br>• Բնական զոնաների՝ որպես բնական երկրահամակարգերի, տարածման սահմանները: |

**Միջառարկայական կապեր**

**Հայոց լեզու** - Վերլուծել և ընկալել տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանալ դրանց հիմնական գաղափարը: Կազմել ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք, այդ թվում՝ հրապարակային խոսք, կիրառել ոչ վերբալ հաղորդակցման տարատեսակ միջոցներ:
**Բնություն** - Կարողանալ բացատրել մթնոլորտի տաքացումն ու ջերմաստիճանը, մթնոլորտային ճնշումը, օդի խոնավությունը, մթնոլորտային տեղումների առաջացումը, եղանակ և կլիմա հասկացությունները:
**Մաթեմատիկա** - Կարողանալ կատարել թվաբանական գործողություններ տոկոսի, ջերմաստիճանի և օդի ճնշման ցուցանիշների հետ:
**Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն** - Կարողանալ Excel ծրագրով կառուցել կլիմագրամներ:

**Կապը ՀՊՉ հանրակրթական հիմնական ծրագրի ակնկալվող վերջնարդյունքների հետ**

Հ1, Հ2, Հ4, Հ5, Հ7, Հ8, Հ9, Հ12, Հ24, Հ25, Հ26, Հ27, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32

**Թեմա 4.**

**ԱՇԽԱՐՀԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄ (3 ժամ)**

| Նպատակ |
| --- |
| Զևավորել գիտելիքներ աշխարհի քաղաքական բաժանման և դրա փոփոխության գործընթացի, պետությունների դասակարգման և խմբավորման հիմնական սկզբունքների վերաբերյալ: |
| **Վերջնարդյունքներ** |
| **Բնութագրել աշխարհի քաղաքական բաժանումը, ներկայացնել պետությունների խմբավորումները՝ ըստ քանակական և որակական հատկանիշների, պետական ցամաքային, ջրային և օդային տարածքների սահմանները, օրինակների հիման վրա բնորոշել պետական սահմանների ձևերը:**<br>Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝<br>1. *Սահմանել* քաղաքական քարտեզ հասկացությունը և *կիրառել* քաղաքական քարտեզը տեղեկություններ ստանալու համար:<br>2. *Բացատրել* աշխարհի քաղաքական քարտեզի փոփոխման պատճառները:<br>3. *Ներկայացնել* պետական տարածքի և սահմանի տեսակները:<br>4. *Բացատրել* պետության բացառիկ տնտեսական գոտու էությունը:<br>5. *Համեմատել* պետությունները՝ ըստ տարածքի ձևի և ըստ զարգացման մակարդակի:<br>6. *Սահմանել* անկլավ և էքսկլավ հասկացությունները և բերել օրինակներ:<br>7. *Դասակարգել* պետությունները՝ ըստ քանակական և որակական հատկանիշների:<br>8. *Համեմատել* հանրապետական և միապետական կառավարման, ունիտար (միասնական) և դաշնային պետական կառուցվածքի ձևերի էական հատկանիշներն ու քարտեզի վրա *ցույց տալ* այդպիսի երկրներ: |
| **Բովանդակություն** |
| 1. Աշխարհի քաղաքական բաժանումը: Քաղաքական քարտեզ:<br>2. Պետական տարածք և պետական սահման: Պետության տարածքի ձևը:<br>3. Պետությունների խմբավորումը: |

| Գործնական աշխատանք, թեմատիկ ուսումնասիրություն | Ընդհանրական խաչվող հասկացություններ |
|---|---|
| • Քաղաքական քարտեզի վրա տարբերակել պետական սահմանի տեսակները:<br>• Քարտեզի վրա համեմատել պետություն-ների տարածքի ուրվագծերը:<br>• Ուսուցչի օգնությամբ գտնել անկլավային և էքսկլավային տարածքները: | *Օրինաչափություններ*<br>• Դաշնային կառավարումը՝ աշխարհում մեծ և բազմազգ պետություններին բնորոշ հատկանիշ:<br>• Պետական սահմանների անցկացումը բնական օբյեկտներով՝ լեռնաշղթա, գետ, լիճ և այլն:<br>*Պատճառ և հետևանք*<br>• Նախկին գաղութային շատ պետությունների սահմանները՝ որպես երկրաչափական սահմաններ:<br>*Համակարգեր և համակարգերի մոդելներ*<br>• Քաղաքական քարտեզը՝ որպես աշխարհի քաղաքական բաժանման մոդել:<br>*Կայունություն և փոփոխություն*<br>• Պետական կայուն սահմանները կայուն զարգացման երաշխիք: |

| Միջառարկայական կապեր |
|---|
| **Հայոց լեզու** - Վերլուծել և ընկալել տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանալ դրանց հիմնական գաղափարը: Կազմել ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք, այդ թվում՝ հրապարակային խոսք, կիրառել ոչ վերբալ հաղորդակցման տարատեսակ միջոցներ:<br>**Համաշխարհային պատմություն** - Կարողանալ պետությունների թվի փոփոխությունները կապել պատմական կարևոր իրադարձությունների հետ՝ գաղութային համակարգերի և կայսրությունների փլուզումներ, համաշխարհային պատերազմներ և այլն: |

| **Կապը ՀՊՉ հանրակրթական հիմնական ծրագրի ակնկալվող վերջնարդյունքների հետ** |
|---|
| Հ1, Հ2, Հ8, Հ12, Հ16, Հ24, Հ25, Հ26, Հ27, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32 |

| Թեմա 5. |
|---|
| **ԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ (8 ժամ)** |
| **Նպատակ** |
| Զարգացնել բնակչության վերարտադրության, կազմի, տեղաբաշխման և տարաբնակեցման վերաբերյալ գիտելիքներ և վերլուծական հմտություններ, ինչպես նաև աշխարհագրական գործոնների ազդեցությամբ պայմանավորված՝ մարդկանց ազգային ու մշակութային առանձնահատկությունների վերաբերյալ պատշաճ վերաբերմունք և վարքագիծ: |
| **Վերջնարդյունքներ** |
| **Բնորոշել բնակչության որակական և քանակական հիմնական բնութագրիչները, վերլուծել դրանց տեղաբաշխման տարբերություններն ու պատճառահետևանքային կապերը:**<br><br>Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝<br>1. *Բնորոշել* բնակչություն, բնական և մեխանիկական շարժ, վերարտադրության ռեժիմ, միգրացիա, ժողովրդագրական քաղաքականություն, բնակչության կազմ, տեղաբաշխում, տարաբնակեցում հասկացությունների էությունը:<br>2. *Ներկայացնել* բնակչության թվի փոփոխությունների պատճառները:<br>3. *Թվարկել և բացատրել* ծնելիության և մահացության վրա ազդող գործոնները, *համեմատել* դրանք զարգացման տարբեր մակարդակ ունեցող երկրներում:<br>4. *Ներկայացնել* բնակչության բնական վերարտադրության ռեժիմները:<br>5. *Բացատրել* ժողովրդագրական քաղաքականության առանձնահատկությունները՝ ըստ բնակչության բնական վերարտադրության ռեժիմների:<br>6. *Ներկայացնել* բնակչության տեղաբաշխման օրինաչափություններն ու կուտակման գլխավոր արեալներն աշխարհում:<br>7. *Ներկայացնել* միգրացիայի էությունը, տեսակները:<br>8. *Ներկայացնել* բնակչության կազմի տեսակները (սեռային, տարիքային (աշխատանքային ռեսուրսներ), ռասայական, ազգային (էթնիկական), կրոնական, լեզվական) և *բացատրել* դրանց աշխարհագրական առանձնահատկությունները:<br>9. *Համեմատել և վերլուծել* առնվազն երկու տարբեր տիպի պետությունների սեռատարիքային բուրգերը:<br>10. *Վերլուծել* երիտասարդ և ծերացող բնակչություն ունեցող երկրների հիմնական խնդիրները:<br>11. *Բնորոշել* աշխատանքային ռեսուրսները՝ ըստ որակական և քանակական ցուցանիշների:<br>12. *Համեմատել* բնակչության զբաղվածության կառուցվածքը տարբեր տիպի երկրներում: |

13. *Ներկայացնել* տարաբնակեցման հիմնական ձևերը (քաղաքային և գյուղական), դրա աշխարհագրական պատկերը:
14. *Բացատրել* քաղաքներում բնակչության կենտրոնացման գործընթացի արդի միտումները:
15. *Լուծել* բնակչության աշխարհագրության վերաբերյալ մաթեմատիկական խնդիրներ:
16. *Կառուցել և վերլուծել* բնակչության վերաբերյալ գրաֆիկներ ու դիագրամներ:
17. *Ցուցաբերել* հանդուրժողականություն բնակչության ռասայական, ազգային (էթնիկական) և կրոնական տարբերությունների նկատմամբ:
18. *Բացատել* մարդու արտաքին հատկանիշների և մտավոր կարողությունների գերաժևորման և թերարժևորման ընկալումները:

**Բովանդակություն**

1. Աշխարհի բնակչության թիվը և շարժը:
2. Բնակչության վերարտադրությունը: Ժողովրդագրական քաղաքականություն:
3. Բնակչության տեղաբաշխումը: Միգրացիաներ:
4. Աշխարհի բնակչության կազմ. սեռատարիքային կազմ: Աշխատանքային ռեսուրսներ:
5. Բնակչության ռասայական, էթնիկական (ազգային), կրոնական կազմ:
6. Տարաբնակեցում: Քաղաքային և գյուղական բնակավայրեր:
7. Գործնական աշխատանք:
8. «Աշխարհի բնակչության աշխարհագրությունը» թեմայի ամփոփում:

| **Գործնական աշխատանք, թեմատիկ ուսումնասիրություն** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
|---|---|
| *Խնդիրների լուծում և գծապատկերների կազմում.*<br>• *վերարտադրություն* (բնական աճի ցուցանիշի հաշվարկում վերարտադրության տարբեր ռեժիմների երկրներում),<br>• *միգրացիա* (օրինակների միջոցով ցույց տալ միգրացիայի գործընթացների դրսևորումներ), | *Օրինաչափություններ*<br>• Բնակչության ծնելիություն, մահացություն, բնական աճ, բնական աճի պարզ, ընդլայնված, նեղացված ռեժիմներ:<br>• Բնակչության խտության փոփոխություններ:<br>• Երկրների բնակչության սեռատարիքային կազմ:<br>*Պատճառ և հետևանք*<br>• Սոցիալական, քաղաքական, տնտեսական, կրոնական և այլ պատճառներով երկրի ներսում և երկրից այլ երկրներ բնակչության արտագաղթ և ներգաղթ:<br>*Համակարգեր և համակարգերի մոդելներ*<br>• Բնակավայրերի համակարգեր (քաղաքային, գյուղական): |

| | |
|---|---|
| • *խտություն* (որևէ տարածքի համար բնակչության միջին խտության հաշվարկում),<br>• գրաֆիկների, դիագրամների կազմում, վերլուծություն (օրինակ՝ վերարտադրության տարբեր ռեժիմների երկրների բնական աճի դինամիկան ցույց տվող գրաֆիկներ, տարբեր երկրների սեռատարիքային բուրգեր և այլն): | *Կայունություն և փոփոխություն*<br>• Ժողովրդագրական քաղաքականության իրականացում: |

| Միջառարկայական կապեր |
|---|
| **Հայոց լեզու** - Վերլուծել և ընկալել տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանալ դրանց հիմնական գաղափարը: Կազմել ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք, այդ թվում՝ հրապարակային խոսք, կիրառել ոչ վերբալ հաղորդակցման տարատեսակ միջոցներ:<br>**Հասարակագիտություն** - Կարողանալ տարբերակել հասարակության փոքր և մեծ խմբերը տարբեր հատկանիշներով (մշակութային, ազգային և այլն):<br>**Հանրահաշիվ** - Կատարել թվաբանական գործողություններ, հաշվել տոկոս(ներ):<br>**Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն** - Կատարել հաշվարկներ և գրաֆիկական աշխատանքներ՝ օգտագործելով ՏՀՏ հմտությունները: |

| **Կապը ՀՊՉ հանրակրթական հիմնական ծրագրի ակնկալվող վերջնարդյունքների հետ** |
|---|
| Հ1, Հ2, Հ5, Հ7, Հ8, Հ10, Հ12, Հ23, Հ25, Հ26, Հ27, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ39 |

| Թեմա 6. |
| --- |
| **ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ (ՏԵՍԱԿՆԵՐ, ԽՄԲԵՐ) (2 ժամ)** |
| **Նպատակ** |
| Ձևավորել գիտելիքներ բնական պայմանների և ռեսուրսների, դրանց դասակարգման, տեղաբաշխման, սոցիալ-տնտեսական նշանակության և օգտագործման անհրաժեշտության մասին: |
| **Վերջնարդյունքներ** |
| **Բնութագրել բնական պայմաններն ու ռեսուրսները, ներկայացնել դրանց տեսակներն ու տեղաբաշխումը, գնահատել դրանց օգտագործման արդյունավետությունը:**<br>Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝<br>1. *Բնորոշել* բնական պայմաններ և բնական ռեսուրսներ հասկացությունները, դրանց էությունը, տարբերություններն ու առանձնահատկությունները:<br>2. *Դասակարգել* բնական ռեսուրսները՝ ըստ ծագման, ըստ սպառման:<br>3. *Կատարել* ռեսուրսապահովվածության հաշվարկներ:<br>4. *Քարտեզի վրա ցույց տալ* բնական ռեսուրսների հիմնական խմբերի աշխարհագրական տեղաբաշխումն ու *բացատրել* դրա սոցիալ-տնտեսական ազդեցությունները կոնկրետ օրինակով:<br>5. *Գնահատել* աշխարհի հողային ռեսուրսները՝ ըստ նշանակության:<br>6. *Ներկայացնել* ջրային ռեսուրսների օգտագործման, քանակական և որակական սպառման առանձնահատկությունները տնտեսության տարբեր ճյուղերում:<br>7. *Գնահատել* կենսաբանական ռեսուրսների դերը մարդկության կենսագործունեության համար:<br>8. *Բնութագրել* ռեկրեացիոն ռեսուրսները:<br>9. *Բացատրել* այլընտրանքային էներգետիկ ռեսուրսների դերը: |
| **Բովանդակություն** |
| 1. Բնական պայմաններ և ռեսուրսներ: Բնական ռեսուրսների խմբավորումը: Ռեսուրսապահովվածություն:<br>2. Աշխարհի բնական ռեսուրսների հիմնական խմբերը (հողային, հանքային, ջրային, կլիմայական, Համաշխարհային օվկիանոսի, կենսաբանական, ռեկրեացիոն), դրանց տեղաբաշխումը: |

| Գործնական աշխատանք, թեմատիկ ուսումնասիրություն | Ընդհանրական խաչվող հասկացություններ |
|---|---|
| *Ռեսուրսապահովվածության հաշվարկ՝ տարբեր եղանակներով.*<br>• բնակչության 1 շնչի հաշվով (տոննա/մարդ),<br>• պաշարի քանակի և տարեկան արդյունահանման ծավալների հարաբերակցությամբ:<br>*Թեմատիկ ուսումնասիրություն*<br>• Դուբայ՝ անապատից հառնող քաղաքը:<br>• Բնական ռեսուրսները՝ որպես տնտեսական զարգացման գործոն (Պարսից ծոցի երկրների օրինակով):<br>• Քաղցրահամ ջրի հիմնախնդիրը: | *Օրինաչափություններ*<br>• Բնական ռեսուրսները՝ երկրների և տարածաշրջանների տնտեսական մասնագիտացման կարևոր նախադրյալ:<br>*Պատճառ և հետևանք*<br>• Բնական ռեսուրսների օգտագործման ծավալների գերազանցում վերականգնման ծավալներին և դրա հետևանքով պաշարների կրճատում: |

| Միջառարկայական կապեր |
|---|
| **Հայոց լեզու** - Վերլուծել և ընկալել տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանալ դրանց հիմնական գաղափարը: Կազմել ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք, այդ թվում՝ հրապարակային խոսք, կիրառել ոչ վերբալ հաղորդակցման տարատեսակ միջոցներ:<br>**Հասարակագիտություն** - Կարողանալ ընկալել շրջակա միջավայրը որպես գեղագիտական և հոգևոր-մշակութային արժեք:<br>**Բնություն** - Կարողանալ ներկայացնել ընդերքի և քաղցրահամ ջրի արդյունավետ օգտագործումն ու պահպանումը:<br>**Կենսաբանություն** - Գաղափար ունենալ կենսաբազմազանության նշանակության մասին:<br>**Հանրահաշիվ** - Կատարել քանակական տվյալներով հաշվարկներ: |

| **Կապը ՀՊՉ հանրակրթական հիմնական ծրագրի ակնկալվող վերջնարդյունքների հետ** |
|---|
| Հ1, Հ2, Հ7, Հ8, Հ9, Հ11, Հ12, Հ17, Հ18, Հ25, Հ26, Հ27, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32 |

| Թեմա 7. |
|---|
| ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ (18 ժամ) |
| **Նպատակ** |
| Ձևավորել համակարգված գիտելիքներ և վերլուծական հմտություններ համաշխարհային տնտեսության, դրա հիմնական ճյուղերի առանձնահատկությունների և տեղաբաշխման, երկրների և տարածաշրջանների տնտեսական մասնագիտացման ու առևտրատնտեսական հարաբերությունների վերաբերյալ: |
| **Վերջնարդյունքներ** |
| **Բնորոշել համաշխարհային տնտեսության ճյուղային և տարածքային կառուցվածքը, միջազգային տնտեսական հարաբերությունների հիմնական ձևերը, գնահատել տրանսպորտի և կապի դերն ու նշանակությունը:**<br><br>Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝<br>1. *Բնորոշել* ազգային տնտեսությունը, դրա զարգացման փուլերը, ճյուղային և տարածքային կառուցվածքը:<br>2. *Բնորոշել* աշխատանքի աշխարհագրական միջազգային բաժանումը:<br>3. *Սահմանել* համաշխարհային տնտեսություն հասկացությունը, բացատրել ձևավորման նախադրյալները:<br>4. *Բնութագրել* տնտեսության ոլորտներն ու համաշխարհային տնտեսության ճյուղային կառուցվածքը:<br>5. *Բնութագրել* աշխարհի արդյունաբերության ճյուղային կառուցվածքը, *բացատրել* արդյունաբերության գլխավոր ճյուղերի տեղաբաշխման առանձնահատկությունները:<br>6. *Բնութագրել* վառելիքաէներգետիկ արդյունաբերության զարգացման փուլերը, վառելիքային արդյունաբերության և էներգետիկայի ճյուղային կառուցվածքը:<br>7. *Գնահատել* էներգիայի ոչ ավանդական աղբյուրների նշանակությունը:<br>8. *Բնորոշել* մետաղաձուլության ճյուղային կառուցվածքը, *ներկայացնել* մետաղները՝ ըստ խմբերի:<br>9. *Բացատրել* մեքենաշինության դերը ժամանակակից տնտեսության մեջ, *ներկայացնել* ճյուղային կառուցվածքը:<br>10. *Բացատրել* քիմիական արդյունաբերության դերը ժամանակակից տնտեսության մեջ, *ներկայացնել* տեղաբաշխման առանձնահատկությունները:<br>11. *Ներկայացնել* թեթև և սննդի արդյունաբերության հումքային բազան, դրանց տեղաբաշխման առանձնահատկությունները: |

12. *Բացատրել* համաշխարհային տնտեսության կառուցվածքում գյուղատնտեսության նշանակությունը, *նշել* գյուղատնտեսական արտադրության ինտենսիվացման ուղղությունները:
13. *Բացատրել* գյուղատնտեսության դերը երկրների տնտեսության մեջ:
14. *Ներկայացնել* գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքը և զարգացման ուղղությունները:
15. *Բնութագրել* բուսաբուծության և անասնապահության ճյուղային կառուցվածքը և տեղաբաշխման առանձնահատկությունները:
16. *Բացատրել* ձկնորսության և ձկնաբուծության, անտառային և որսորդության տնտեսական նշանակությունը, դրանց տեղաբաշխման առանձնահատկությունները:
17. *Բացատրել* տրանսպորտի և կապի նշանակությունը տնտեսության մեջ և մարդու կյանքում:
18. *Համեմատել* համաշխարհային տրանսպորտի հիմնական տեսակների ցուցանիշներն ու տեղաբաշխման առանձնահատկությունները:
19. *Հաշվել* տրանսպորտային ցանցի խտությունը, ուղևորաշրջանառությունը և բեռնաշրջանառությունը:
20. *Ներկայացնել* կարևոր միջազգային տրանսպորտային ուղիները, ծովային ջրանցքներն ու նեղուցները, դրանց նշանակությունը միջազգային բեռնափոխադրումներում:
21. *Նկարագրել* ոչ արտադրական ոլորտի ճյուղային կառուցվածքը, *գնահատել* ոչ արտադրական ոլորտի դերը հասարակության կյանքում:
22. *Բնորոշել* ոչ արտադրական ոլորտի առանձնահատկությունները զարգացման տարբեր մակարդակ ունեցող երկրներում:
23. *Բացատրել* միջազգային տնտեսական հարաբերությունների նշանակությունը, *ներկայացնել* դրանց հիմնական ձևերը:
24. *Սահմանել* արտաքին առևտրի հաշվեկշիռ հասկացությունը:

**Բովանդակություն**

1. Ազգային տնտեսություն:
2. Աշխատանքի աշխարհագրական միջազգային բաժանում:
3. Համաշխարհային տնտեսություն:
4. Արդյունաբերություն. ընդհանուր բնութագիրը և տեղաբաշխումը:
5. Վառելիքաէներգետիկ արդյունաբերություն:
6. Մետաղաձուլություն և մեքենաշինություն:
7. Քիմիական, թեթև և սննդի արդյունաբերություն:
8. *Կրկնություն:*
9. Գյուղատնտեսությունը. ընդհանուր բնութագիրը:
10. Բուսաբուծություն:

| |
|---|
| 11. Անասնապահություն:<br>12. Ձկնորսություն և ձկնաբուծություն, անտառային տնտեսություն և որսորդություն:<br>13. Տրանսպորտ և կապ:<br>14. Միջազգային տրանսպորտային գլխավոր ուղիները:<br>*15. Գործնական աշխատանք:*<br>16. Ոչ արտադրական ոլորտի ճյուղեր:<br>17. Միջազգային տնտեսական հարաբերություններ:<br>18. «Համաշխարհային տնտեսությունը» թեմայի ամփոփում: |

| **Գործնական աշխատանք, թեմատիկ ուսումնասիրություն** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
|---|---|
| *Գործնական աշխատանք*<br>• Որոշել Մեծ Յոթնյակի բաժինը համաշխարհային տնտեսությունում՝ ըստ հիմնական ճյուղերի:<br>*Տրանսպորտային համակարգը բնութագրող ցուցանիշների հաշվարկ՝*<br>• տրանսպորտային ցանցի խտություն,<br>• ուղևորաշրջանառություն (մարդ·կմ),<br>• բեռնաշրջանառություն (տոննա·կմ):<br>*Թեմատիկ ուսումնասիրություն*<br>• Քննարկել ծովային ելքի բացակայության սոցիալ-տնտեսական հետևանքներն ու ազդեցությունները, կատարել համեմատություններ, այդ թվում՝ ՀՀ-ի և ԱՀ-ի օրինակներով:<br>• Կանաչ հեղափոխություն. 20-րդ դարում գյուղատնտեսության ինտենսիվացման հաջողված փորձն ու օրինակները: | *Օրինաչափություններ*<br>• Համաշխարհային տնտեսության զարգացման արդի փուլին առավելապես բնորոշ է գիտելիքահենք (knowledge-based) արտադրությունների զարգացումը, ոչ արտադրական ոլորտի տեսակարար կշռի ավելացումը, տնտեսական մասնագիտացման նոր տեսակների ձևավորումն ու խորացումը:<br>*Պատճառ և հետևանք*<br>• Համաշխարհային տնտեսության արդի կառուցվածքը որպես պատմական երկարատև զարգացման հետևանք:<br>*Համակարգեր և համակարգերի մոդելներ*<br>• Համաշխարհային տնտեսությունն ու դրա առանձին ոլորտները՝ որպես փոխկապակցված բաղադրիչների ամբողջություն:<br>*Կայունություն և փոփոխություն*<br>• Գիտության և տեխնիկայի բուռն զարգացման արդի պայմաններում տնտեսության առանձին ոլորտներում ու ճյուղերում արդյունավետության և արտադրողականության ավելացում: |

| Միջառարկայական կապեր |
| --- |
| **Հայոց լեզու** - Վերլուծել և ընկալել տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանալ դրանց հիմնական գաղափարը: Կազմել ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք, այդ թվում՝ հրապարակային խոսք, կիրառել ոչ վերբալ հաղորդակցման տարատեսակ միջոցներ:<br>**Համաշխարհային պատմություն** - Իմանալ հասարակության զարգացման պատմական օրինաչափությունների մասին:<br>**Հասարակագիտության** - Գաղափար ունենալ տնտեսական որոշումների կայացման, սակավության հիմնախնդրի և խնայողությունների վերաբերյալ:<br>**Ֆիզիկա** - Գաղափար ունենալ էլետրականության մասին:<br>**Քիմիա** - Գաղափար ունենալ քիմիական երևույթների վերաբերյալ:<br>**Կենսաբանություն** - Գաղափար ունենալ բնության մեջ և մարդու կյանքում կենսաբազմազանության նշանակության մասին:<br>**Հանրահաշիվ** - Կատարել թվաբանական գործողություններ, հաշվել տոկոս(ներ):<br>**Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն** - Կատարել հաշվարկներ և գրաֆիկական աշխատանքներ՝ օգտագործելով ՏՀՏ հմտությունները: |
| **Կապը ՀՊՉ հանրակրթական հիմնական ծրագրի ակնկալվող վերջնարդյունքների հետ** |
| Հ1, Հ2, Հ4, Հ7, Հ8, Հ10, Հ11, Հ12, Հ17, Հ18, Հ24, Հ25, Հ26, Հ27, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32 |

| Պահուստային դասաժամեր (9 ժամ) |
| --- |
| Ուսուցիչը ժամաքանակը տնօրինում է առարկայական չափորոշչային պահանջների իրականացման շրջանակում: Դասաժամերը հատկացվում են սովորողների գործնական, թեմատիկ և կիսամյակային, դաշտային աշխատանքների և հետազոտությունների կատարման համար: |

## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ
**8-րդ դասարան**
(առաջարկվում է 68 ժամ, որից 9 ժամ՝ պահուստային)

| **Տարածաշրջաններ** |
|---|
| **Նպատակ** |
| Ձևավորել գիտելիքներ յուրաքանչյուր տարածաշրջանի բնական պայմանների ու ռեսուրսների, բնակչության, տնտեսության կառուցվածքի ու դրանց տեղաբաշխման աշխարհագրական օրինաչափությունների և տարածաշրջանին բնորոշ հիմնախնդիրների վերաբերյալ: Խթանել հետազոտական և մտածական հմտությունների զարգացումը: |
| **Վերջնարդյունքներ** |
| **Նկարագրել և վերլուծել յուրաքանչյուր տարածաշրջանի աշխարագրական դիրքի, բնական պայմանների և ռեսուրսների առանձնահատկությունները, բնակչության որակական և քանակական բնութագրիչները, տնտեսության ճյուղային ու տարածքային կառուցվածքը:**<br><br>Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝<br>1. Քարտեզի վրա *ցույց տալ* տվյալ տարածաշրջանի սահմանները, պետությունները, *վերհիշել* խոշոր պետությունների կառավարման և պետական կառուցվածքի ձևերը:<br>2. *Բացատրել* աշխարհագրական դիրքի առանձնահատկությունները, *գնահատել* դրա դերը տնտեսության զարգացման տեսանկյունից:<br>3. *Բնութագրել* բնական պայմաններն ու ռեսուրսները, *գնահատել* դրանք տնտեսության զարգացման տեսանկյունից:<br>4. *Ներկայացնել* և *բացատրել* բնակչության բնական աճի, միգրացիայի, կազմի, տեղաբաշխման առանձնահատկությունները, նշանավոր քաղաքները:<br>5. *Տարբերակել* պետությունները՝ ըստ զարգացման մակարդակի:<br>6. *Բացատրել* տարածաշրջանի տնտեսության ճյուղային և տարածքային կառուցվածքի առանձնահատկությունները, *համեմատել* տարբեր երկրների տնտեսական ցուցանիշները:<br>7. *Ներկայացնել* տարածաշրջանի արդի հիմնախնդիրները, *մեկնաբանել* դրանց պատճառներն ու հետևանքները:<br>8. *Կիրառել* տարածաշրջանի, պետության ընդհանուր աշխարհագրական ու թեմատիկ քարտեզները՝ աշխարհագրական տեղեկույթի ստացման և օգտագործման նպատակներով: |

9. *Դիրքորոշում ունենալ* տարածաշրջանի քաղաքակրթությունների, ազգերի ստեղծած մշակութային և քաղաքակրթական արժեքների վերաբերյալ:
10. *Ձևավորել* իրատեսական կարծիք բնակչության՝ աշխարհագրական գործոններով պայմանավորված էթնոմշակութային և այլ առանձնահատկությունների վերաբերյալ:

*Սույն ձևաչափով տրվում են տարածաշրջանի վերաբերյալ սովորողի գիտելիքներին, հմտություններին, դիրքորոշումներին և արժեքներին ներկայացվող ընդհանրական պահանջները: Տարածաշրջանի վերաբերյալ սովորողի կարողունակություններին ներկայացվող լրացուցիչ պահանջները (վերջնարդյունքները) տրված են տվյալ տարածաշրջանի բովանդակությանը կից:*

**Բովանդակություն (բնութագրման սխեման)**

- Աշխարհագրական դիրքը: Բնական պայմանները և ռեսուրսները:
- Տարածաշրջանի կազմը և քաղաքական քարտեզը, աշխարհագրական առանձնահատկությունները:
- Բնակչությունը, բնական աճը, միգրացիաները, կազմը, տեղաբաշխումը, տարաբանակեցումը, նշանավոր քաղաքները;
- Տարածաշրջանի տնտեսության բնութագիրը (ճյուղային և տարածքային կառուցվածքը, մասնագիտացումը), տեղը համաշխարհային տնտեսության մեջ:
- Տարածաշրջանի պետությունների ներդրումը համաշխարհային քաղաքակրթության մեջ:
- Տարածաշրջանի հիմնախնդիրները:

**Պետություններ**

**Նպատակ**

Ձևավորել գիտելիքներ պետության բնական պայմանների ու ռեսուրսների, բնակչության, տնտեսության կառուցվածքի և դրանց տեղաբաշխման աշխարհագրական առանձնահատկությունների վերաբերյալ: Խթանել հետազոտական և մտածական հմտությունների զարգացումը:

**Վերջնարդյունքներ**

**Նկարագրել և վերլուծել պետության աշխարագրական դիրքի, բնական պայմանների և ռեսուրսների առանձնահատկությունները, բնակչության որակական և քանակական բնութագրիչները, տնտեսության ճյուղային ու տարածքային կառուցվածքը:**

Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. *Բնութագրել* պետության կառավարման ձևն ու վարչատարածքային կառուցվածքը:
2. *Ներկայացնել* պետության բնական պայմանների առանձնահատկությունները, *բնութագրել* դրանց ազդեցությունը տնտեսության տարբեր ճյուղերի վրա:
3. *Թվարկել* պետության բնառեսուրսային ներուժը կազմող բնական ռեսուրսների տեսակները, *ներկայացնել* դրանց քանակն ու որակը բնութագրող որոշ ցուցանիշներ:
4. *Գնահատել* աշխարհագրական դիրքը, բնական պայմաններն ու ռեսուրսները որպես պետության զարգացման նախադրյալ:
5. *Բացատրել* բնակչության բնական աճի, միգրացիայի, կազմի, տեղաբաշխման առանձնահատկությունները, *ներկայացնել* տարաբնակեցումը, խոշոր քաղաքները:
6. *Բացատրել* պետության տնտեսության ճյուղային և տարածքային կառուցվածքի առանձնահատկությունները, *համեմատել* առաջատար ճյուղերը:
7. *Հաշվել* պետության բնակչության տեղաբաշխման, վերարտադրության, ռեսուրսապահովվածության ցուցանիշները:
8. *Ներկայացնել* պետության գլխավոր հիմնախնդիրները, *մեկնաբանել* դրանց պատճառներն ու հետևանքները:

*Սույն ձևաչափով տրվում են պետության վերաբերյալ սովորողի գիտելիքներին, հմտություններին, դիրքորոշումներին և արժեքներին ներկայացվող ընդհանրական պահանջները: Պետության վերաբերյալ սովորողի կարողունակություններին ներկայացվող լրացուցիչ պահանջները (վերջնարդյունքները) տրված են տվյալ պետության բովանդակությանը կից:*

**Բովանդակություն (բնութագրման սխեման)**

- Աշխարհագրական դիրքը, բնական պայմանների և ռեսուրսների ընդհանուր բնութագիրը, պետական կարգը, վարչաքաղաքական կառուցվածքը:
- Բնակչությունը. թիվը և շարժը (բնական և մեխանիկական), կազմը, տեղաբաշխումը, տարաբանակեցումը, խոշոր քաղաքները:
- Տնտեսությունը. ճյուղային կառուցվածքը: Արդյունաբերության և գյուղատնտեսության գլխավոր ճյուղերը, դրանց տեղաբաշխումը: Երկրի տեղը աշխատանքի միջազգային բաժանման համակարգում:

**Ընդհանրական խաչվող հասկացություններ**

*Համակարգեր և համակարգերի մոդելներ*
- Բնական ու հասարակական համակարգերի ճյուղային և տարածական կառուցվածքային մոդելները:
- Պետության կայուն զարգացում:

*Կայունություն և փոփոխություն*
- Պետության բնահասարակական համակարգերի փոփոխությունները:

*Օրինաչափություններ*

- Հասարակության տարածքային կազմակերպումը:

*Պատճառ և հետևանք*

- Բնական և հասարակական համակարգերի փոխադարձ կապերը:
- Հիմնախնդիրների դրսևորումները:

**Միջառարկայական կապեր**

**Հայոց լեզու** - Վերլուծել և ընկալել տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանալ դրանց հիմնական գաղափարը: Կազմել ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք, այդ թվում՝ հրապարակային խոսք, կիրառել ոչ վերբալ հաղորդակցման տարատեսակ միջոցներ:
**Համաշխարհային պատմություն** - Գիտելիքներ ունենալ քաղաքական համակարգերի վերաբերյալ: Բացատրել տարածաշրջանի և պետության պատմական զարգացման ազդեցությունը նրա տնտեսության ու հասարակության տարածքային կազմակերպման ժամանակակից առանձնահատկությունների և օրինաչափությունների վրա: Իմանալ Արևմուտքում և Արևելքում միջնադարյան քաղաքակրթությունների զարգացման մասին: Իմանալ Աշխարհագրական մեծ հայտնագործությունների, Վերածննդի, Ռեֆորմացիայի և գիտական հեղափոխության մասին:
**Կենսաբանություն** - Գաղափար ունենալ տարբեր աշխարհամասերում տարածված կենսաբազմազանության վերաբերյալ:
**Հանրահաշիվ** - Կարողանալ կատարել թվաբանական գործողություններ. հաշվել տոկոս, լուծել խնդիրներ:
**Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն** - Օգտագործել ՏՀՏ հմտությունները՝ որպես հետազոտության գործիք, կատարել հաշվարկներ և գրաֆիկական աշխատանքներ:

**Կապը ՀՊՉ հանրակրթական հիմնական ծրագրի ակնկալվող վերջնարդյունքների հետ**

Հ1, Հ2, Հ5, Հ7, Հ8, Հ10, Հ11, Հ12, Հ15, Հ17, Հ18, Հ24, Հ25, Հ26, Հ27, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32

**Թեմա 1.**

**ԱՇԽԱՐՀԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐ. ԵՎՐՈՊԱ (19 ժամ)**

**Նպատակ**

Ձևավորել գիտելիքներ Եվրոպայի բնական պայմանների ու ռեսուրսների, բնակչության և տնտեսության կառուցվածքի և տեղաբաշխման աշխարհագրական առանձնահատկությունների վերաբերյալ: Խթանել հետազոտական և մտածական հմտությունների զարգացումը:

**Լրացուցիչ վերջնարդյունքներ**

Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝

***Աշխարհի փարածաշրջանները***

1. *Սահմանել* բնաաշխարհագրական և հասարակական աշխարհագրական տարածաշրջան հասկացությունները:
2. *Թվարկել* տարածաշրջանների առանձնացման սկզբունքները:
3. Քարտեզի վրա *ցույց տալ* հասարակական աշխարհագրական 18 տարածաշրջանները:

***Եվրոպա: Արևմտյան Եվրոպա***

1. *Բացատրել* ժողովրդագրական ճգնաժամի պատճառները Եվրոպայում:
2. *Բացատրել* Եվրոպական Միության ստեղծման նպատակն ու խնդիրները, *թվարկել* կազմակերպության հիմնական մարմինները:

***Արևելյան Եվրոպա***

1. *Գնահատել* Դանուբ գետի տնտեսական նշանակությունը:
2. *Ներկայացնել* հայկական համայնքի դերն ու ձևավորման առանձնահատկությունները տարածաշրջանում:

***Ռուսաստան***

1. *Բացատրել* Ռուսաստանի կլիմայի բազմազանության պատճառները, *ներկայացնել* հավերժական սառցույթի տարածումը, էկոլոգիական նշանակությունն ու ազդեցությունը մարդու տնտեսական գործունեության վրա:
2. *Բնութագրել* բնակչության կազմի վրա ազդող ժողովրդագրական գործոնները (բնական աճ, միգրացիա):
3. *Վերլուծել* ՌԴ ժողովրդագրական իրադրությունը:
4. *Ներկայացնել* հայկական համայնքի դերը ՌԴ-ում:
5. *Բացատրել* ՌԴ տնտեսական զարգացման ներքին տարբերությունների պատճառներն ու հետևանքները:

***Գերմանիա***

1. *Գնահատել* Գերմանիայի դերը Եվրոպական Միությունում:

***Ֆրանսիա***

1. *Ներկայացնել* զբոսաշրջության դերը Ֆրանսիայի տնտեսության կառուցվածքում:
2. *Բացատրել* երկրի գաղութատիրական անցյալի դերը ժամանակակից միգրացիայի գործընթացներում:

| |
|---|
| 3. *Ներկայացնել* հայկական համայնքի դերը Ֆրանսիայում:<br>***Հյուսիսային Եվրոպա***<br>1. *Բացատրել* բնական պայմանների և բնակչության տեղաբաշխման կապը:<br>2. *Գնահատել* տրանսպորտի և արտաքին տնտեսական կապերի դերը երկրների տնտեսական զարգացման գործում: |
| **Բովանդակություն** |
| 1. Աշխարհի տարածաշրջանները:<br>2. Եվրոպա: Ընդհանուր աշխարհագրական ակնարկ: Եվրոպական Միություն:<br>3. Արևելյան Եվրոպա: Բնական պայմանները և ռեսուրսները:<br>4. Արևելյան Եվրոպա: Բնակչությունը, տնտեսությունը:<br>5. Ռուսաստանի Դաշնություն: Բնական պայմանները և ռեսուրսները:<br>6. Ռուսաստանի Դաշնություն: Բնակչությունը:<br>7. Ռուսաստանի Դաշնություն: Տնտեսությունը:<br>8. *Կրկնություն:*<br>9. Հարավային Եվրոպա: Բնական պայմանները և ռեսուրսները, բնակչությունը:<br>10. Հարավային Եվրոպա: Տնտեսությունը:<br>11. Արևմտյան Եվրոպա: Բնական պայմանները և ռեսուրսները, բնակչությունը:<br>12. Արևմտյան Եվրոպա: Տնտեսությունը:<br>13. Գերմանիայի Դաշնութոուն: Բնական պայմանները և ռեսուրսները, բնակչությունը:<br>14. Գերմանիայի տնտեսությունը:<br>15. Ֆրանսիա: Բնական պայմանները և ռեսուրսները, բնակչությունը:<br>16. Ֆրանսիայի տնտեսությունը:<br>17. Հյուսիսային Եվրոպա: Բնական պայմանները և ռեսուրսները, բնակչությունը:<br>18. Հյուսիսային Եվրոպայի տնտեսությունը:<br>19. *Կրկնություն:* |

| **Գործնական աշխատանք, թեմատիկ ուսումնասիրություն** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
|---|---|
| *Գործնական աշխապանք* | *Կառուցվածք և գործառույթ*<br>• Տարածաշրջանների առանձնացումը: |

| | |
|---|---|
| • Ստվերարկման եղանակով ուրվագծային քարտեզի վրա տարածաշրջանների և երկրների պատկերում:<br>*Թեմատիկ ուսումնասիրություն*<br>• Եվրոպայի քաղաքական քարտեզի ժամանակակից փոփոխությունները:<br>• Ժողովրդագրական ճգնաժամի հիմնախնդիրը Եվրոպայում:<br>• Գոլֆստրիմ օվկիանոսային հոսանքի ազդեցությունը Եվրոպայի կլիմայի վրա:<br>• Հայերն Արևելյան Եվրոպայում (Ռումինիա, Ուկրաինա, Լեհաստան, Բուլղարիա):<br>• Հարավային Եվրոպայի «Գաճաճ պետությունները»:<br>• «Գերմանական տնտեսական հրաշքը»:<br>• Վերականգնվող էներգետիկան Հյուսիսային Եվրոպայի երկրներում:<br>• Ֆրանսիայի էլեկտրաէներգետիկ ոլորտի բնութագրական գծերը (ատոմային և այլընտրանքային էլեկտրաէներգետիկա): | • Եվրոպական Միություն<br>*Մասշտաբ, համամասնություն, քանակ*<br>• Բնակչության թվաքանակի շարժընթացը: |

| Միջառարկայական կապեր |
|---|
| **Հայոց լեզու** - Վերլուծել և ընկալել տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանալ դրանց հիմնական գաղափարը: Կազմել ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք, այդ թվում՝ հրապարակային խոսք, կիրառել ոչ վերբալ հաղորդակցման տարատեսակ միջոցներ:<br>**Համաշխարհային պատմություն** - Իմանալ եվրոպական քաղաքակրթության մեջ հին հունական քաղաքակրթության ներդրման մասին: Գաղափար ունենալ եվրաինտեգրման գործընթացում հունական անտիկ մշակույթի, քրիստոնեության (բողոքականության), Վերածննդի դարաշրջանի արժեհամակարգային դրսևորումների ունեցած նշանակալի դերակատարման մասին:<br>**Հասարակագիտություն** - Կարողանալ ներկայացնել թիմային աշխատանքը նախագծային ուսուցման համատեքստում:<br>**Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն** - Օգտագործել ՏՀՏ հմտությունները՝ որպես գործիք (միջոց) հաշվարկներ և գրաֆիկական աշխատանքներ կատարելու համար: |

| Թեմա 2. |
|---|
| **ԱՍԻԱ (25 ժամ)** |

| Նպատակ |
| --- |
| **Ապահովել Ասիա աշխարհամասի տարածաշրջանների և առանձին պետությունների համալիր աշխարհագրական օրինաչափությունների, առանձնահատկությունների և հիմնախնդիրների վերաբերյալ գիտելիքների, հետազոտական և մտածական հմտությունների զարգացումը:** |
| **Լրացուցիչ վերջնարդյունքներ** |
| Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝<br>**Հարավարևմտյան Ասիա**<br>1. *Գնահատել* տարածաշրջանի վառելիքահումքային և զբոսաշրջային հնարավորությունները:<br>2. *Վերլուծել* տարածաշրջանի հակամարտությունների պատճառները:<br>3. *Ներկայացնել* հայկական համայնքի դերն ու ձևավորման առանձնահատկությունները տարածաշրջանում:<br>4. *Դիրքորոշում ունենալ* տարածաշրջանում առաջացած համաշխարհային կրոնների (քրիստոնեություն, մահմեդականություն) վերաբերյալ:<br>**Վրաստան**<br>1. *Գնահատել* Սև ծովի նշանակությունը Վրաստանի համար:<br>2. *Բացատրել* վրաց-օսական և վրաց-աբխազական հակամարտությունների էությունը:<br>3. *Ներկայացնել* հայկական համայնքի դերն ու ձևավորման առանձնահատկությունները Վրաստանում:<br>**Ադրբեջան**<br>1. *Գնահատել* Կասպից ծովի նշանակությունը Ադրբեջանի համար:<br>2. *Բացատրել* ազգային կազմի փոփոխություններն Ադրբեջանում վերջին տասնամյակներում:<br>**Թուրքիա**<br>1. *Վերլուծել* Թուրքիայի զարգացման ներքին տարբերությունները:<br>2. *Բացատրել* հայ-թուրքական դիվանագիտական հարաբերությունների բացակայության պատճառները և հետևանքները:<br>**Իրան**<br>1. *Բնութագրել* տնտեսության մասնագիտացման ուղղությունները:<br>2. *Գնահատել* հայ-իրանական տնտեսական հարաբերությունների զարգացման հեռանկարները:<br>**Կենտրոնական Ասիա**<br>1. *Բացատրել* կլիմայական պայմանների ազդեցությունն անապատների ու տափաստանների ձևավորման ու տարածման վրա: |

2. *Համեմատել* Կենտրոնական Ասիայի երկրների բնակչության միջին խտությունները, օգտվելով աղբյուրներից՝ *հաշվարկել* Ուզբեկստանում, Տաջիկստանում բնակչության ապահովվածությունը վարելահողերով:

**Հարավային Ասիա**

1. *Բացատրել* մուսսոնների ազդեցությունը տարածաշրջանի կլիմայի վրա:

**Հնդկաստան**

1. *Բացատրել* Հնդկաստանի բնակչության ազգային և կրոնական կազմի առանձնահատկությունները:
2. Բնակչության բնական աճի ցուցանիշների հիման վրա *հաշվել* Հնդկաստանի բնակչության թիվը 2 տարի հետո:

**Հարավարևելյան Ասիա**

1. *Բնորոշել* Հարավարևելյան Ասիայի զբոսաշրջային ծառայությունների ուղղություններն ու հնարավորությունները:
2. *Ներկայացնել* տարածաշրջանի ինտեգրացման գործընթացները:

**Արևելյան Ասիա**

1. *Բացատրել* տարածաշրջանի ռելիեֆային և սեյսմիկ առանձնահատկությունները՝ Տիբեթի բարձրավանդակի, Մեծ Չինական հարթավայրի, Խաղաղօվկիանոսյան գեոսինկլինալային գոտու օրինակներով:
2. *Ներկայացնել* տարածաշրջանում բնակչության խտության փոփոխություններն արևմուտքից արևելք:
3. *Գնահատել* տարածաշրջանի տեղն ու նշանակությունը համաշխարհային տնտեսության մեջ:

**Չինաստան**

1. *Ներկայացնել* Չինաստանի ժողովրդագրական և տարաբնակեցման գործընթացների առանձնահատկությունները:
2. *Վերլուծել* Չինաստանի տնտեսության զարգացման նախադրյալները, հիմնական ուղղություններն ու առանձնահատկությունները:
3. *Բացատրել* Չինաստանի բնակչության և տնտեսության տեղաբաշխման ու մասնագիտացման ներքին տարբերությունները. երկրի արևելյան (Մեծ Չինական հարթավայր) և արևմտյան (Տիբեթ, Սինցզյան-Ույղուրյան, Ներքին Մոնղոլիա) տարածքների օրինակներով, *հաշվել* բնակչության խտության տարբերությունները:

**Ճապոնիա**

1. *Ներկայացնել* Ճապոնիայի տնտեսության զարգացումը սահմանափակող և խոչընդոտող հիմնական գործոնները. Տարածքային ռեսուրսների սահմանափակություն, ակտիվ սեյսմիկություն և հրաբխականություն, արդյունաբերական նշանակության օգտակար հանածոների բացակայություն:
2. *Վերլուծել* Ճապոնիայում գիտելիքահենք տնտեսության զարգացման նախադրյալներն ու հիմնական ուղղությունները:
3. *Բացատրել* ճապոնական հրաշքի էությունը և նախադրյալները:

**Բովանդակություն**

1. Ասիա: Ընդհանուր աշխարհագրական ակնարկ:
2. Հարավարևմտյան Ասիա: Աշխարհագրական դիրքը, բնական պայմանները և ռեսուրսները:
3. Հարավարևմտյան Ասիա: Բնակչությունը: Տնտեսությունը:
4. Վրաստան: Աշխարհագրական դիրքը, բնական պայմանները և ռեսուրսները:
5. Վրաստան: Բնակչությունը, տնտեսությունը:
6. Ադրբեջան: Աշխարհագրական դիրքը, բնական պայմանները և ռեսուրսները:
7. Ադրբեջան: Բնակչությունը, տնտեսությունը:
8. Թուրքիա: Աշխարհագրական դիրքը, բնական պայմանները և ռեսուրսները:
9. Թուրքիա: Բնակչությունը, տնտեսությունը:
10. Իրան: Աշխարհագրական դիրքը, բնական պայմանները և ռեսուրսները:
11. Իրան: Բնակչությունը, տնտեսությունը:
12. *Կրկնություն:*
13. Կենտրոնական Ասիա: Ընդհանուր աշխարհագրական ակնարկ:
14. Հարավային Ասիա: Ընդհանուր աշխարհագրական ակնարկ:
15. Հնդկաստան: Աշխարհագրական դիրքը, բնական պայմանները և ռեսուրսները:
16. Հնդկաստան: Բնակչություն: Տնտեսություն:
17. Հարավարևելյան Ասիա: Աշխարհագրական դիրքը, բնական պայմանները և ռեսուրսները:
18. Հարավարևելյան Ասիա: Բնակչությունը, տնտեսությունը:
19. Արևելյան Ասիա: Ընդհանուր աշխարհագրական ակնարկ:
20. Չինաստան: Աշխարհագրական դիրքը, բնական պայմանները և ռեսուրսները:
21. Չինաստան: Բնակչությունը, տնտեսությունը:
22. Ճապոնիա: Աշխարհագրական դիրքը, բնական պայմանները և ռեսուրսները:
23. Ճապոնիա: Բնակչությունը, տնտեսությունը:
24. *Գործնական աշխատանք:*
25. *Կրկնություն:*

| Գործնական աշխատանք, թեմատիկ ուսումնասիրություն | Ընդհանրական խաչվող հասկացություններ |
|---|---|
| *Գործնական աշխատանք*<br>• Ստվերարկել տարածաշրջաններն ու երկրներն ուրվագծային քարտեզի վրա:<br>• Համեմատել և վերլուծել Սինգապուրի, Մոնղոլիայի և Չինաստանի մեկ շնչի ՀՆԱ-ի ցուցանիշները:<br>• Կազմել Վրաստանից և Իրանից ՀՀ ներմուծվող և արտահանվող ապրանքների ցանկերը:<br>• Քարտեզի վրա նշել Ասիայում առավել տարածված կրոնները և կազմել դավանողների թվակազմի դիագրամ:<br>*Թեմատիկ ուսումնասիրություն*<br>• Կրոնական ուխտագնացություն Երուսաղեմ, Մեքքա:<br>• Սինգապուրյան տնտեսական հրաշք:<br>• Հոնկոնգ և Մակաո (Աոմին). հատուկ վարչական ու տնտեսական կարգավիճակ ունեցող տարածքներ, բրիտանական ու պորտուգալական գաղութացման ազդեցությունը:<br>• Բացատրել Արևելյան և Հարավային Ասիայում մուսսոնային քամիների ազդեցությունը: | *Օրինաչափություններ*<br>• Տնտեսության առանձին ճյուղերի տարածքային կազմակերպում:<br>*Համակարգեր և համակարգերի մոդելներ*<br>•Ինքնատիպ տնտեսական մոդելներ:<br>•Ազատ տնտեսական գոտի:<br>• Տարաբնակեցման համակարգեր:<br>*Մասշտաբ, համամասնություն, քանակ*<br>• Բնակչության շարժընթաց և տեղաբաշխում:<br>*Պատճառ, հետևանք*<br>• Տարածաշրջանային հիմնախնդիրները |

| Միջառարկայական կապեր |
|---|
| **Հայոց լեզու** - Վերլուծել և ընկալել տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանալ դրանց հիմնական գաղափարը: Կազմել ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք, այդ թվում՝ հրապարակային խոսք, կիրառել ոչ վերբալ հաղորդակցման տարատեսակ միջոցներ:<br>**Համաշխարհային պատմություն** - Իմանալ տնտեսության ու հասարակության տարածքային կազմակերպման ժամանակակից առանձնահատկությունները տարածաշրջանի և պետության պատմական զարգացման ազդեցության համատեքստում:<br>**Հասարակագիտություն** - Հասկանալ էժան աշխատուժի առկայության, ապրանքների արտադրության ու ծառայությունների մատուցման մեխանիզմները:<br>**Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն** - Օգտագործել ՏՀՏ հմտությունները՝ որպես հետազոտության գործիք: |

| Թեմա 3. |
|---|
| **ԱՄԵՐԻԿԱ (7 ժամ)** |
| **Նպատակ** |
| Ձևավորել գիտելիքներ Ամերիկա աշխարհամասի և ԱՄՆ-ի բնական պայմանների ու ռեսուրսների, բնակչության, տնտեսության կառուցվածքի և տեղաբաշխման աշխարհագրական օրինաչափությունների և տարածաշրջանին բնորոշ հիմնախնդիրների վերաբերյալ: |
| **Լրացուցիչ վերջնարդյունքներ** |
| Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝<br>***Հյուսիսային Ամերիկա***<br>1. *Բնութագրել* լեռնագրության ու ջրագրության աշխարհագրական պատկերը:<br>2. *Բնորոշել* բնական զոնաների տարածման առանձնահատկությունները:<br>3. *Վերլուծել* բնակչության կազմը (ազգային, կրոնական, ռասայական) և *բացատրել* ժողովրդագրական արդի գործընթացները:<br>4. *Գնահատել* Հյուսիսային Ամերիկայի տեղն ու դերը համաշխարհային տնտեսությունում:<br>***Ամերիկայի Միացյալ Նահանգներ***<br>1. *Վերլուծել* բնառեսուրսային ներուժը և ռեսուրսապահովվածությունը:<br>2. *Բնորոշել* տրանսպորտային համակարգը:<br>3. *Բացատրել* տնտեսաաշխարհագրական ներքին տարբերությունները:<br>4. *Գնահատել* տեղն ու դերը համաշխարհային տնտեսության մեջ:<br>5. *Վերլուծել* տեխնոլոգիական առաջընթացի գլխավոր նախադրյալները:<br>***Լատինական Ամերիկա***<br>1. *Բացատրել* կլիմաստեղծ գործոնների ազդեցությունը մայրցամաքի տարբեր հատվածների վրա:<br>2. *Բնութագրել* լեռնագրության ու ջրագրության աշխարհագրական պատկերը:<br>3. *Բնորոշել* բնական զոնաներն ու դրանց տարածման առանձնահատկությունները:<br>4. *Ներկայացնել* բնական ռեսուրսների տեղաբաշխումը և օգտագործման հիմնախնդիրները:<br>5. *Բնորոշել* բնակչության կազմը (էթնիկ, կրոնական, ռասայական): |

6. *Բացատրել* քաղաքային բնակչության արագ աճի երևույթը Լատինական Ամերիկայում:
7. *Վերլուծել* Լատինական Ամերիկայի երկրների տնտեսական զարգացածության ընդհանրությունները:

**Բովանդակություն**

1. Հյուսիսային Ամերիկա: Ընդհանուր աշխարհագրական ակնարկ:
2. Ամերիկայի Միացյալ Նահանգներ: Աշխարհագրական դիրքը, բնական պայմանները և ռեսուրսները:
3. ԱՄՆ բնակչությունը, տնտեսությունը:
4. ԱՄՆ տնտեսությունը (շարունակություն):
5. Լատինական Ամերիկա: Բնական պայմանները և ռեսուրսները:
6. Լատինական Ամերիկա: Բնակչությունը, տնտեսությունը:
7. «Ամերիկա» թեմայի ամփոփում:

| **Գործնական աշխատանք, թեմատիկ ուսումնասիրություն** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
|---|---|
| *Գործնական աշխատանք*<br>• Ստվերարկել տարածաշրջաններն ու երկրներն ուրվագծային քարտեզի վրա:<br>*Թեմատիկ ուսումնասիրություն*<br>• Վերլուծել հայ համայնքի տեղն ու դերը ԱՄՆ-ի սոցիալ-մշակութային կյանքում և տնտեսության մեջ:<br>• Լատինական Ամերիկայի մշակույթը (պարարվեստ, սպորտ): | *Մասշտաբ, համամասնություն, քանակ*<br>• ԱՄՆ-ի դերակատարումը:<br>• Բնակչության շարժընթացի, կազմի և տեղաբաշխման առանձնահատկությունները:<br>*Օրինաչափություններ*<br>• Տնտեսության առանձին ճյուղերի տարածքային կազմակերպում:<br>*Կայունություն և փոփոխություն*<br>• Տնտեսության կայուն զարգացման կարևորությունն ու բնահասարակական համակարգերում տեղի ունեցող փոփոխությունները: |

**Միջառարկայական կապեր**

**Հայոց լեզու** - Վերլուծել և ընկալել տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանալ դրանց հիմնական գաղափարը: Կազմել ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք, այդ թվում՝ հրապարակային խոսք, կիրառել ոչ վերբալ հաղորդակցման տարատեսակ միջոցներ:
**Համաշխարհային պատմություն** - Գաղափար ունենալ Ամերիկա աշխարհամասի հայտնագործման և վերաբնակեցման պատմությունից:

**Հանրահաշիվ** - Կարողանալ կատարել թվաբանական գործողություններ, հաշվել տոկոս:
**Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն** - Կարողանալ օգտագործել ՏՀՏ հմտությունները՝ կատարել հաշվարկներ և գրաֆիկական աշխատանքներ:

| **Թեմա 4.** |
|---|
| **ԱՖՐԻԿԱ (4 ժամ)** |
| **Նպատակ** |
| Ձևավորել գիտելիքներ Աֆրիկա աշխարհամասի բնական պայմանների ու ռեսուրսների, բնակչության, տնտեսության կառուցվածքի և դրանց տեղաբաշխման աշխարհագրական օրինաչափությունների և տարածաշրջանին բնորոշ հիմնախնդիրների վերաբերյալ, զարգացնել հետազոտական և մտածական հմտություններ: |
| **Լրացուցիչ վերջնարդյունքներ** |
| Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝<br>1. *Բացատրել* պասսատների առաջացման մեխանիզմը և դրա ազդեցությունը մայրցամաքի կլիմայի ձևավորման վրա:<br>2. *Ներկայացնել* Աֆրիկայի օգտակար հանածոների տեղաբաշխումը:<br>3. *Համեմատել* սավանաների և արևադարձային անապատների բնական զոնաները:<br>4. *Բացատրել* ժողովրդագրական պայթյունի երևույթն Աֆրիկայում:<br>5. *Ներկայացնել* Աֆրիկայի բնակչության ռասայական, կրոնական, ազգային ու լեզվական բազմազանությունը:<br>6. *Վերլուծել* գաղութային անցյալի և սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրների փոխառնչությունները: |
| **Բովանդակություն** |
| 1. Աֆրիկա: Մակերևույթը, ջրագրությունը: Օգտակար հանածոները:<br>2. Կլիման: Բնական զոնաները (հասարակածային խոնավ անտառներ,սավանաներ և արևադարձային անապատներ):<br>3. Բնակչությունը:<br>4. Տնտեսությունը: |

| Թեմատիկ ուսումնասիրություն | Ընդհանրական խաչվող հասկացություններ |
|---|---|
| *Թեմատիկ ուսումնասիրություն*<br>• Սահարա անապատ և Կոնգոյի գոգավորություն: բնա-կլիմայական և սոցիալ-տնտեսական հակադրություններ<br>• Նամիբ. անապատ օվկիանոսի ափին: | *Պատճառ և հետևանք, մեխանիզմ և կանխատեսում*<br>• Արևադարձային գոտում օդի վարընթաց շարժման հետևանքները:<br>• Տարածաշրջանային հիմնախնդիրները:<br>*Մասշտաբ, համամասնություն, քանակ*<br>• Բնակչության շարժընթացի, կազմի և տեղաբաշխման առանձնահատկությունները: |

| Միջառարկայական կապեր |
|---|
| **Հայոց լեզու** - Վերլուծել և ընկալել տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանալ դրանց հիմնական գաղափարը: Կազմել ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք, այդ թվում՝ հրապարակային խոսք, կիրառել ոչ վերբալ հաղորդակցման տարատեսակ միջոցներ:<br>**Համաշխարհային պատմություն** - Իմանալ միջէթնիկական հակամարտությունների մասին:<br>**Հանրահաշիվ** -Կարողանալ հաշվել տոկոս: |

| Թեմա 5. |
|---|
| **ԱՎՍՏՐԱԼԻԱ ԵՎ ՕՎԿԻԱՆԻԱ (2 ժամ)** |
| **Նպատակ** |
| Ձևավորել գիտելիքներ Ավստրալիա և Օվկիանիա աշխարհամասի բնական պայմանների ու ռեսուրսների, բնակչության, տնտեսության կառուցվածքի և դրանց տեղաբաշխման աշխարհագրական օրինաչափությունների և տարածաշրջանին բնորոշ հիմնախնդիրների վերաբերյալ, զարգացնել հետազոտական և մտածական հմտություններ: |
| **Լրացուցիչ վերջնարդյունքներ** |
| Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝ |

| |
|---|
| 1. *Համեմատել* Ավստրալիայի և Աֆրիկայի մերձհասարակածային և արևադարձային գոտիների կլիմայական պայմաններն ու ներքին ջրերը:<br>2. *Ներկայացնել* Ավստրալիայի օրգանական աշխարհի յուրահատկությունները, *բացատրել* դրանց պատճառները:<br>3. *Բացատրել* Ավստրալիայի և Օվկիանիայի զբոսաշրջության առանձնահատկությունները: |
| **Բովանդակություն** |
| 1. Ավստրալիա և Օվկիանիա. ընդհանուր աշխարհագրական ակնարկ<br>2. Ավստրալիայի և Օվկիանիայի բնակչությունը և տնտեսությունը |

| **Գործնական աշխատանք, թեմատիկ ուսումնասիրություն** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
|---|---|
| *Թեմատիկ ուսումնասիրություններ*<br>• Մեծ արգելախութ:<br>• Ուլուրու: | *Պատճառ և հետևանք*<br>• Ավստրալիայի և Օվկիանիայի էնդեմիկ օրգանական աշխարհը: |

| |
|---|
| **Միջառարկայական կապեր** |
| **Հայոց լեզու** - Վերլուծել և ընկալել տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանալ դրանց հիմնական գաղափարը: Կազմել ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք, այդ թվում՝ հրապարակային խոսք, կիրառել ոչ վերբալ հաղորդակցման տարատեսակ միջոցներ: |

| |
|---|
| **Թեմա 6.** |
| **ԱՆՏԱՐԿՏԻԿԱ (2 ժամ)** |
| **Նպատակ** |
| Զարգացնել գիտելիքներ Անտարկտիկայի աշխարհագրական առանձնահատկությունների վերաբերյալ: |
| **Վերջնարդյունքներ** |

Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. *Բնութագրել* Անտարկտիդայի մակերևույթի առանձնահատկությունները:
2. *Բացատրել* Անտարկտիկայի կլիմայի առանձնահատկությունները, Անտարկտիդայի սառցածածկի առաջացման պատճառներն ու հետևանքները (ալբեդո):
3. *Գնահատել* Անտարկտիդայի քաղցրահամ ջրի պաշարները, *ուսումնասիրել* և *ներկայացնել* առաջարկներ այն օգտագործելու վերաբերյալ:
4. *Ներկայացնել* օրգանական աշխարհի յուրահատկությունները, *բացատրել* դրանց պատճառները:
5. *Բացատրել* Անտարկտիդայում օզոնային անցքերի առաջացման պատճառներն ու հետևանքները:

**Բովանդակություն**

1. Անտարկտիկա. ընդհանուր աշխարհագրական ակնարկ:
2. «Ամերիկա», «Աֆրիկա», «Ավստրալիա և Օվկիանիա», «Անտարկտիկա» թեմաների կրկնություն:

| Գործնական աշխատանք, թեմատիկ ուսումնասիրություն | Ընդհանրական խաչվող հասկացություններ |
|---|---|
| *Թեմատիկ ուսումնասիրություն*<br>• Օզոնային անցքերը:<br>• Սառցե ալիքներ: | *Պատճառ և հետևանք*<br>• Անտարկտիկայում Արեգակի ճառագայթների անկման անկյան փոքր լինելու հետևանքները:<br>• Անտարկտիդայում և հարակից ծովերում էնդեմիկ օրգանական աշխարհի առաջացումը:<br>• Տարածաշրջանի հիմնախնդիրները: |

**Միջառարկայական կապեր**

**Հայոց լեզու** - Վերլուծել և ընկալել տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանալ դրանց հիմնական գաղափարը: Կազմել ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք, այդ թվում՝ հրապարակային խոսք, կիրառել ոչ վերբալ հաղորդակցման տարատեսակ միջոցներ:

**Պահուստային դասաժամեր (9 ժամ)**

Ուսուցիչը ժամաքանակը տնօրինում է առարկայական չափորոշչային պահանջների իրականացման շրջանակում: Դասաժամերը հատկացվում են սովորողների գործնական, թեմատիկ և կիսամյակային, դաշտային աշխատանքների և հետազոտությունների կատարման համար:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**9-րդ դասարան**

(առաջարկվում է 68 ժամ, որից 9 ժամ՝ պահուստային)

| **Թեմա 1.** |
|---|
| **ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀ (8 ժամ)** |
| **Նպատակ** |
| Ձեռք բերել գիտելիքներ Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական դիրքի, բնական պայմանների ու ռեսուրսների, բնության բաղադրիչների ներքին տարբերությունների վերաբերյալ: |
| **Վերջնարդյունքներ** |
| **Բնորոշել Հայկական լեռնաշխարհի ֆիզիկաաշխարհագրական հիմնական բնութագրիչների՝ օբյեկտների, երևույթների ու գործընթացների ձևավորման և տեղաբաշխման առանձնահատկությունները:**<br><br>Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝<br>1. *Բացատրել* «Հայաստան» հասկացության 3 իմաստները:<br>2. *Համեմատել* Հայկական լեռնաշխարհի և ՀՀ տարածքների մակերեսները:<br>3. *Բացատրել* Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական դիրքի առանձնահատկությունները մեզո (միջին) մակարդակում:<br>4. *Բացատրել* Հայկական լեռնաշխարհի բնական պայմանների առանձնահատկությունները:<br>5. *Նկարագրել* Հայկական լեռնաշխարհի երկրաբանական կառուցվածքը:<br>6. *Ներկայացնել* Հայկական լեռնաշխարհի հիմնական օգտակար հանածոները:<br>7. *Դասակարգել* Հայկական լեռնաշխարհի մակերևույթի հիմնական ձևերը:<br>8. *Քարտեզի վրա ցույց տալ* լեռնագրական գլխավոր միավորները:<br>9. *Բացատրել* սեյսմիկության և հրաբխականության պատճառը:<br>10. *Բացատրել* Հայկական լեռնաշխարհի կլիմաստեղծ գործոնները:<br>11. *Թվարկել և* քարտեզի վրա *ցույց տալ* խոշոր լճերն ու գետերը՝ ըստ ավազանների:<br>12. *Բացատրել* բուսականության և կենդանական աշխարհի ձևավորման ու տարածման առանձնահատկությունները: |

| Բովանդակություն |
|---|
| 1. Հայաստանն աշխարհի քարտեզում: Սահմանները: Աշխարհագրական դիրքը:<br>2. Հայկական լեռնաշխարհի (ՀԼ) երկրաբանական կառուցվածքը: Օգտակար հանածոները:<br>3. Մակերևույթի հիմնական ձևերը:<br>4. Կլիման:<br>5. Ներքին ջրերը:<br>6. Հողերը, բուսականությունը, կենդանական աշխարհը:<br>7. *Գործնական աշխատանք:*<br>8. «Հայկական լեռնաշխարհ» թեմայի ամփոփում: |

| Գործնական աշխատանք | Ընդհանրական խաչվող հասկացություններ |
|---|---|
| • Ուրվագծային քարտեզի վրա Հայկական լեռնաշխարհի խոշոր լեռնաշղթաների, գետերի և լճերի անցկացում:<br>• Հայկական լեռնաշխարհի երկու տարբեր բնակավայրերի կլիմագրամների կառուցում Excel ծրագրով: | *Օրինաչափություններ*<br>• Հայկական լեռնաշխարհում հյուսիսից հարավ և արևմուտքից արևելք մթնոլորտային տեղումների քանակի նվազումը:<br>• Եզրային լեռնաշղթաների արտաքին՝ հողմակողմ լանջերին մթնոլորտային տեղումների առատությունը:<br>• Բարեխառն օդային զանգվածների արևմտյան հոսքը, արևադարձային օդային զանգվածների հոսքը:<br>• Ըստ բարձրության՝ ջերմաստիճանի նվազումը և տեղումների ավելացումը, կլիմայի վերընթաց փոփոխությունը:<br>*Պատճառ և հետևանք*<br>• Հրաբխականություն և սեյսմիկություն:<br>• Հողերի, բուսականության և կենդանական աշխարհի բազմազանություն:<br>• Ձմռան ամիսներին առաջացող ջերմաստիճանային շրջադասություն:<br>• Արտահայտված վերընթաց գոտիականություն:<br>• ՀՀ լճերը՝ ըստ ծագման: |

| Միջառարկայական կապեր |
|---|
| **Հայոց լեզու** - Վերլուծել և ընկալել տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանալ դրանց հիմնական գաղափարը: Կազմել ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք, այդ թվում՝ հրապարակային խոսք, կիրառել ոչ վերբալ հաղորդակցման տարատեսակ միջոցներ:<br>**Հանրահաշիվ** - Կատարել թվաբանական գործողություններ, մասշտաբի հիման վրա մակերեսների հաշվարկներ:<br>**Ինֆորմատիկա** - Կատարել հաշվարկներ և գրաֆիկական աշխատանքներ՝ օգտագործելով ՏՀՏ հմտությունները: |
| **Կապը ՀՊԶ հանրակրթական հիմնական ծրագրի ակնկալվող վերջնարդյունքների հետ** |
| **Հ**1, Հ2, Հ4, Հ5, Հ7, Հ8, Հ9, Հ10, Հ11, Հ12, Հ17, Հ25, Հ26, Հ27, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32 |

| Թեմա 2 |
|---|
| **ՀՀ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (2 ժամ)** |
| **Նպատակ** |
| Զարգացնել ՀՀ աշխարհագրական դիրքի, վարչատարածքային կառուցվածքի ու կառավարման համակարգի վերաբերյալ գիտելիքներ, հետազոտական և մտածական հմտություններ: |
| **Վերջնարդյունքներ** |
| **Ներկայացնել ՀՀ աշխարհագրական դիրքի տարբեր տեսակների, դրանց ներգործության առանձնահատկությունները, ՀՀ պետական սահմանների ձևավորման և վարչատարածքային կառուցվածքի բնորոշ գծերը:**<br><br>Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝<br>1. *Համադրել* ՀՀ ֆիզիկաաշխարհագրական, տնտեսաաշխարհագրական և քաղաքաաշխարհագրական դիրքերի բնորոշ գծերը:<br>2. *Մեկնաբանել* ՀՀ ներկայիս պետական սահմանների ձևավորման վրա պատմական գործընթացների և քաղաքաաշխարհագրական գործոնների ազդեցությունը: |

<table>
<tr><td colspan="2">3. Վերլուծել տնտեսաաշխարհագրական դիրքի  հնարավոր փոփոխության ազդեցությունը ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման վրա:<br>4. Բացատրել ՀՀ պետական կառավարման ձևն ու վարչատարածքային կառուցվածքը, քարտեզի վրա ցույց տալ մարզերն ու մարզկենտրոնները:<br>5. Վելուծել վարչատարածքային կառուցվածքի փոփոխության սոցիալ-տնտեսական ազդեցությունը:<br>6. Կիրառել ՀՀ վարչական քարտեզը՝ աշխարհագրական տեղեկույթի ստացման և օգտագործման նպատակներով:</td></tr>
<tr><th colspan="2">Բովանդակություն</th></tr>
<tr><td colspan="2">1. Ընդհանուր ակնարկ: Հայաստանի Հանրապետության (ՀՀ) պետական տարածքն ու սահմանները, դրանց ձևավորումը, աշխարհագրական դիրքը:<br>2. ՀՀ պետական կառավարման ձևը, վարչատարածքային կառուցվածքը և տարածքային կառավարումը: Համայնքների խոշորացումը:</td></tr>
<tr><th>Գործնական աշխատանք</th><th>Ընդհանրական խաչվող հասկացություններ</th></tr>
<tr><td>• Ուրվագծային քարտեզի վրա նշել ՀՀ մարզերը՝ կենտրոններով:</td><td>Պատճառ և հետևանք.<br>• ՏԱԴ-ի և ՔԱԴ-ի փոփոխությունների ազդեցությունները:<br>• Վարչատարածքային կառուցվածքի ձևավորման սկզբունքները:<br>Կառուցվածք և գործառույթ<br>• ՀՀ վարչատարածքային բաժանումն ու կառուցվածքը, պետական կառավարում և տեղական ինքնակառավարում:<br>Մասշտաբ, համամասնություն և քանակ<br>• Համայնքների խոշորացումը, քանակական և որակական փոփոխությունների կապը:</td></tr>
<tr><th colspan="2">Միջառարկայական կապեր</th></tr>
<tr><td colspan="2">Հայոց լեզու - Վերլուծել և ընկալել տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանալ դրանց հիմնական գաղափարը: Կազմել ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ  բանավոր և գրավոր խոսք, այդ թվում՝ հրապարակային խոսք, կիրառել ոչ վերբալ հաղորդակցման տարատեսակ միջոցներ:</td></tr>
</table>

| |
|---|
| **Հայոց պատմություն** - Կարողանալ բնութագրել միջազգային իրադարձությունների ազդեցությունը ՀՀ սահմանների և տարածքի ձևավորման վրա: Գաղափար ունենալ Հայաստանի առաջին հանրապետության կայացման գործընթացի վերաբերյալ:<br>**Հասարակագիտություն** - Իմանալ ՀՀ պետական իշխանության գործառույթների մասին: |
| **Կապը ՀՊՉ հանրակրթական հիմնական ծրագրի ակնկալվող վերջնարդյունքների հետ** |
| **Հ**1, Հ2, Հ4, Հ5, Հ8, Հ9, Հ10, Հ11, Հ12, Հ15, Հ16, Հ17, Հ18, Հ25, Հ26, Հ27, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32 |

| **Թեմա 3** |
|---|
| **ՀՀ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ (12 ժամ)** |
| **Նպատակ** |
| Ապահովել ՀՀ բնության օբյեկտների և երևույթների տարածական օրինաչափությունների և առանձնահատկությունների վերաբերյալ գիտելիքների և վերլուծական հմտությունների ձևավորում: |
| **Վերջնարդյունքներ** |

**Վերլուծել ՀՀ ֆիզիկաաշխարհագրական հիմնական բնութագրիչների՝ օբյեկտների, երևույթների ու գործընթացների ձևավորման և տեղաբաշխման առանձնահատկությունները:**

Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. *Բնորոշել* ՀՀ ռելիեֆն ու դրա փոփոխությունները, *ներկայացնել* մակերևույթի ձևավորման հիմնական երկրաբանական գործընթացները:
2. *Ճանաչել* մետաղական և ոչ մետաղական հանածոների պայմանական նշանները և քարտեզի վրա *ցույց տալ* դրանց խոշոր հանքավայրերը:
3. *Բնորոշել* ՀՀ մակերևույթի ծալքաբեկորավոր լեռների, հրաբխային լեռնավահանների և միջլեռնային գոգավորությունների տարածման առանձնահատկությունները:
4. Քարտեզի վրա *ցույց տալ* ՀՀ ռելիեֆի հիմնական միավորները (ծալքաբեկորավոր խոշոր լեռնային համակարգեր, լեռնագագաթներ, հրաբխային լեռնավահաններ, սարավանդներ, միջլեռնային խոշոր գոգավորություններ):
5. *Բնութագրել* ՀՀ կլիմայական առանձնահատկություններն ու դրանց ազդեցությունը տնտեսության վրա:
6. *Բացատրել* օդային զանգվածների հիմնական հոսքերի և մակերևույթի լեռնային բնույթի ազդեցությունը կլիմայի վրա:*Բացատրել* լեռնահովտային քամիների և օդի ջերմաստիճանային շրջադասության առաջացման մեխանիզմը:
7. *Ներկայացնել* ՀՀ գետերի գլխավոր հատկանիշները, քարտեզի վրա *ցույց տալ* խոշոր գետերը:
8. *Համեմատել* Արաքսի և Կուրի ավազանների ջրագրական ցանցերի առանձնահատկությունները:
9. *Ըստ ծագման դասակարգել և քարտեզի վրա ցույց տալ* ՀՀ նշանավոր լճերը:

10. *Վերլուծել* ՀՀ ջրային ռեսուրսների տեղաբաշխման առանձնահատկությունները, տնտեսության տարբեր ճյուղերի ջրօգտագործման ընդհանուր պատկերը:
11. *Բացատրել* ՀՀ հողատիպերի, բուսական և կենդանական աշխարհի վերընթաց գոտիական տարածման օրինաչափություններն և առանձնահատկությունները, դրանց ազդեցությունը մարդու գործունեության վրա:
12. *Բնութագրել* ՀՀ վերընթաց լանդշաֆտային գոտիներն ու բնության բաղադրիչների վերընթաց գոտիականության առանձնահատկությունները:
13. *Ներկայացնել* ՀՀ բնօգտագործման և բնապահպանական գլխավոր հիմնախնդիրները (օդային ավազանի, հողային, ջրային ռեսուրսների պահպանություն, ռացիոնալ օգտագործում):
14. *Մշակել* միջոցառումներ ՀՀ և ԱՀ բնության հանդեպ գրագետ վերաբերմունքի և վարքագծի շարունակական դրսևորման ուղղությամբ:
15. *Ներկայացնել* ՀՀ առավել բնորոշ բնական աղետներն ու պաշտպանության միջոցառումները:
16. *Ներկայացնել* և քարտեզի վրա *ցույց տալ* ՀՀ հատուկ պահպանվող տարածքները, *հիմնավորել* դրանց առանձնացման և ընդարձակման անհրաժեշտությունը:
17. *Արժևորել* ՀՀ և ԱՀ բնական օբյեկտները, բնության տարրերն ու երևույթները կայուն բնօգտագործման, միջավայրաստեղծ և ռեկրեացիոն նպատակադրումներով:
18. *Բացատրել* ՀՀ Կարմիր գրքերի նշանակությունը:
19. *Կիրառել* ՀՀ ընդհանուր և թեմատիկ ֆիզիկաաշխարհագրական քարտեզները՝ համապատասխան աշխարհագրական տեղեկույթի ստացման և օգտագործման նպատակներով:

**Բովանդակություն**

1. ՀՀ մակերևույթը, դրա ձևավորումը, ռելիեֆի հիմնական ձևերը: Օգտակար հանածոները:
2. ՀՀ կլիմայի ընդհանուր բնութագիրը:
3. Տարվա կլիմայական եղանակները: Կլիմայի վերընթաց գոտիականությունը:
4. ՀՀ ջրագրությունը: Գետերը:
5. ՀՀ ջրագրությունը: Լճերը, Սևանա լիճ: Ստորգետնյա ջրերը: Ջրային ռեսուրսների պահպանությունը:
6. ՀՀ հողային ծածկույթը: Բուսականությունը: Կենդանական աշխարհը:
7. ՀՀ լանդշաֆտները: Վերընթաց գոտիականություն:
8. *Գործնական աշխատանք:*
9. Արդյունավետ և կայուն բնօգտագործման ու բնապահպանության հիմնախնդիրները ՀՀ-ում:
10. Հատուկ պահպանվող տարածքները: ՀՀ «Կարմիր գիրքը»:

11.Բնական աղետներ․ տեսակները, տարածվածությունը, պաշտպանությունը:
12. *Էքսկուրսիա բնության գրկում:*
13. «ՀՀ բնությունը» թեմայի ամփոփում:

| Գործնական աշխատանք, թեմատիկ ուսումնասիրություն | Ընդհանրական խաչվող հասկացություններ |
|---|---|
| *Գործնական աշխատանք*<br>• Ուրվագծային քարտեզի վրա ՀԼ , ՀՀ, ԱՀ հիմնական լեռնագրական միավորների անցկացում:<br>*Թեմատիկ ուսումնասիրություն*<br>• Բնակավայրի հարակից տարածքի մակերևույթի, կլիմայի, ջրագրական օբյեկտների, բնական լանդշաֆտների ուսումնասիրություն:<br>• Սովորողի շրջակա տարածքի բնորոշ բուսատեսակներն ու կենդանատեսակները թեմայով: | *Օրինաչափություններ*<br>• Օդի ջերմաստիճանի, մթնոլորտային տեղումների, բնական լանդշաֆտների փոփոխությունները վերընթաց ուղղությամբ:<br>• Խոնավապահովվածության փոփոխությունը՝ կախված լեռնալանջի դիրքադրությունից:<br>*Պատճառ և հետևանք*<br>• Հրաբխային շրջաններում փոքր հոսքն ու գետային նոսր ցանցը, իսկ ծալքաբեկորավոր լեռների շրջանում՝ մեծ հոսքն ու գետային խիտ ցանցը:<br>• Արարատյան դաշտում և միջլեռնային գոգավորությունների հատակային մասերում արտեզյան ավազանների առաջացումը:<br>• Լեռնահովտային քամիների առաջացումը:<br>• Ջերմաստիճանային շրջադասության առաջացումը:<br>*Կայունություն և փոփոխություն*<br>• Բնական ռեսուրսների և բնական լանդշաֆտների կայուն օգտագործում ու վերականգնում, բնական գեոհամակարգերի փոփոխություն: |

**Միջառարկայական կապեր**

**Հայոց լեզու** - Վերլուծել և ընկալել տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանալ դրանց հիմնական գաղափարը: Կազմել ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք, այդ թվում՝ հրապարակային խոսք, կիրառել ոչ վերբալ հաղորդակցման տարատեսակ միջոցներ:
**Ֆիզիկա** - Լուծել խնդիրներ օդի ջերմաստիճանի և ճնշման վերընթաց փոփոխության վերաբերյալ:

| |
|---|
| **Կենսաբանություն** - Գաղափար ունենալ ՀՀ տարածված կենսաբազմազանության, ինչպես նաև Կարմիր գրքերում գրանցված բույսերի, կենդանիների, սնկերի տեսակների մասին: |
| **Կապը ՀՊՉ հանրակրթական հիմնական ծրագրի ակնկալվող վերջնարդյունքների հետ** |
| **Հ**1, Հ2, Հ4, Հ5, Հ7, Հ8, Հ9, Հ10, Հ11, Հ12, Հ15, Հ16, Հ17, Հ18, Հ25, Հ26, Հ27, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32 |

| **Թեմա 4.** |
|---|
| **ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ (8 ժամ)** |
| **Նպատակ** |
| Ձևավորել գիտելիքներ ՀՀ բնակչության վերարտադրության, կազմի, տեղաբաշխման և տարաբնակեցման օրինաչափությունների և առանձնահատկությունների վերաբերյալ: |
| **Վերջնարդյունքներ** |
| **Ներկայացնել և վերլուծել ՀՀ բնակչության թվի և դրա շարժընթացի, կազմի, տեղաբաշխման և տարաբնակեցման առանձնահատկությունները:**<br><br>Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝<br>1. *Բացատրել* Հայաստանում բնակչության թվաքանակի շարժընթացը 19-րդ դարից մինչև մեր օրերը:<br>2. *Վերլուծել* ՀՀ բնակչության բնական և մեխանիկական շարժերի ցուցանիշների դինամիկան, ժողովրդագրական քաղաքականության առանձնահատկությունները:<br>3. *Գնահատել* միգրացիայի սոցիալ-տնտեսական հետևանքները ՀՀ-ում:<br>4. *Ներկայացնել* ՀՀ բնակչության ազգային, կրոնական և սեռատարիքային կազմի առանձնահատկությունները:<br>5. *Վերլուծել* ՀՀ աշխատանքային ռեսուրսների որակական և քանակական ցուցանիշները:<br>6. *Բնորոշել* ՀՀ բնակչության սոցիալական հիմնական խմբերը:<br>7. *Ներկայացնել* ՀՀ բնակչության տեղաբաշխման և տարաբնակեցման առանձնահատկությունները: |

| |
|---|
| 8. Քարտեզի վրա *ցույց տալ* ՀՀ քաղաքները՝ ըստ մարզերի:<br>9. *Ներկայացնել* մայրաքաղաք Երևանի հիմնախնդիրները, *առաջարկել* դրանց լուծման հնարավոր ուղիներ:<br>10. *Բացատրել* գյուղական տարաբնակեցման առանձնահատկություններն ու փոքր գյուղերի հիմնախնդիրները ՀՀ-ում:<br>11. *Կիրառել* ՀՀ բնակչության և տարաբնակեցման քարտեզները՝ աշխարհագրական տեղեկույթի ստացման և օգտագործման նպատակներով: |
| **Բովանդակություն** |
| 1. ՀՀ բնակչության թվաքանակի շարժընթացը:<br>2. ՀՀ բնակչության թվի բնական և մեխանիկական շարժերը:<br>3. ՀՀ բնակչության կազմը: Աշխատանքային ռեսուրսները:<br>4. ՀՀ բնակչության տեղաբաշխումը: Տարաբնակեցումը:<br>5. Մայրաքաղաք Երևանը:<br>6. ՀՀ գլխավոր քաղաքները:<br>7. *Գործնական աշխատանք:*<br>8. «ՀՀ բնակչությունը» թեմայի ամփոփում: |

| **Գործնական աշխատանք, թեմատիկ ուսումնասիրություն** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
|---|---|
| *Խնդիրների լուծում և գծապատկերների կազմում*<br>• Վերարտադրություն (հաշվել ՀՀ-ի բնակչության թիվը 2 տարի անց, եթե բնական աճի ցուցանիշն անփոփոխ է, տարեկան ներգաղթել է 3000 մարդ, իսկ արտագաղթել 2500 մարդ):<br>• Միգրացիա (ուսումնասիրել ՀՀ-ի բնակչության հիմնական միգրացիայի հոսքերն ու ուղղությունները):<br>• Խտություն (հաշվել բնակչության տեղաբաշխման ցուցանիշներ, գտնել օրինաչափություններ):<br>• Կազմել ՀՀ սեռատարիքային բուրգը՝ օգտվելով armstat.am կայքից:<br>*Թեմատիկ ուսումնասիրություն* | *Օրինաչափություններ*<br>• Բնակչության տեղաբաշխման և խտության տարբերությունները՝ ըստ բացարձակ բարձրության:<br>• Վերարտադրության ռեժիմն ու ժողովրդագրական քաղաքականության համապատասխան տեսակը:<br>*Պատճառ և հետևանք*<br>• Բնակչության թվաքանակի շարժընթացը:<br>• Բնակչության ներգաղթն ու արտագաղթը:<br>*Կառուցվածք և գործառույթ*<br>• Բնակավայրերի ցանցը, գլխավոր տարաբնակեցման գոտին: |

| | |
|---|---|
| • ՀՀ միգրացիայի արդի ցուցանիշներն ու պատճառները։<br>• ՀՀ սեռատարիքային բուրգը։<br>• ՀՀ բնակավայրերի ցանցի կառուցվածքը։ | |

| Միջառարկայական կապեր |
|---|
| **Հայոց լեզու** - Վերլուծել և ընկալել տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանալ դրանց հիմնական գաղափարը: Կազմել ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ  բանավոր և գրավոր խոսք, այդ թվում՝ հրապարակային խոսք, կիրառել ոչ վերբալ հաղորդակցման տարատեսակ միջոցներ:<br>**Հանրահաշիվ** - Կատարել թվաբանական գործողություններ, հաշվել տոկոս:<br>**Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն** - Կատարել հաշվարկներ և գրաֆիկական աշխատանքներ՝ օգտագործելով ՏՀՏ հմտությունները: |
| **Կապը ՀՊՉ հանրակրթական հիմնական ծրագրի ակնկալվող վերջնարդյունքների հետ** |
| **Հ**1, Հ2, Հ4, Հ7, Հ8, Հ10, Հ12, Հ15, Հ16, Հ17, Հ18, Հ23, Հ25, Հ26, Հ27, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ39 |

| **Թեմա 5** |
| --- |
| **ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ (26 ժամ)** |
| **Նպատակ** |
| Ձևավորել գիտելիքներ ՀՀ տնտեսության ճյուղային կառուցվածքի, զարգացման գործոնների և տարածական բաշխվածության վերաբերյալ: |
| **Վերջնարդյունքներ** |
| **Բացատրել և վերլուծել ՀՀ տնտեսության ճյուղային և տարածքային կառուցվածքի ու մասնագիտացման առանձնահատկությունները:**<br><br>Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝<br>1. *Ներկայացնել* Հայաստանի տնտեսության զարգացման գործընթացը 19-րդ դարի կեսերից մինչև մեր օրերը:<br>2. *Վերլուծել* ՀՀ տնտեսության զարգացման բնական (բնառեսուրսային) նախադրյալներն ու առանձնահատկությունները:<br>3. *Բացատրել* տնտեսության և դրա առանձին ճյուղերի տեղաբաշման վրա ազդող գործոնները:<br>4. *Բնորոշել* ՀՀ արդյունաբերությունը, *բացատրել* ճյուղային կառուցվածքն ու տեղաբաշխման առանձնահատկությունները:<br>5. *Հիմնավորել* արդյունաբերության ճյուղային կառուցվածքի ձևավորման ու զարգացման առանձնահատկությունները:<br>6. *Նկարագրել* ՀՀ վառելիքաէներգետիկ համալիրը:<br>7. *Բացատրել* հանքագործական արդյունաբերության զարգացման գործոնները, *գնահատել* հանքագործական արդյունաբերության նշանակությունը ՀՀ տնտեսական համակարգում:<br>8. *Բնորոշել* վերամշակող արդյունաբերությունը, *մեկնաբանել* վերամշակող արդյունաբերության ճյուղերի զարգացման ներուժը:<br>9. *Բնութագրել* ՀՀ հողային ֆոնդի կառուցվածքն ու բարելավման միջոցառումները:<br>10. *Ներկայացնել* ՀՀ գյուղատնտեսության զարգացման նախադրյալները, ճյուղային կառուցվածքը, տեղաբաշխումն ու մասնագիտացումը:<br>11. *Թվարկել* արտահանման ներուժ ունեցող գյուղատնտեսական ճյուղերը, *գնահատել* դրանց զարգացման հեռանկարները:<br>12. *Բացատրել* սննդի արդյունաբերության ճյուղերի տեղաբաշխման առանձնահատկությունները: |

13. *Բնութագրել* ՀՀ տրանսպորտային ցանցի առանձնահատկությունները, *նկարագրել* տրանսպորտի հիմնական տեսակներն ու տրանսպորտային հանգույցները:
14. *Ներկայացնել* ՀՀ տնտեսության ոչ արտադրական՝ սպասարկման ոլորտի կառուցվածքը, արդի դերն ու հեռանկարային նշանակությունը:
15. *Հիմնավորել* գիտելիքահենք տնտեսության առանձնահատուկ կարևորությունն ու զարգացման նախադրյալները:
16. *Բնորոշել* Հայաստանի Հանրապետության տեղն ու դերը համաշխարհային տնտեսության համակարգում:
17. *Վերլուծել* ՀՀ արտաքին տնտեսական կապերի աշխարհագրությունն ու միջազգային տնտեսական ինտեգրացման ու մասնագիտացման առանձնահատկությունները:
18. *Գնահատել* ՀՀ տնտեսական զարգացման և մասնագիտացման ներքին տարբերությունները՝ ըստ վարչական մարզերի:
19. *Կիրառել* ՀՀ արդյունաբերության, գյուղատնտեսության և տրանսպորտի քարտեզները՝ համապատասխան աշխարհագրական տեղեկույթի ստացման և օգտագործման նպատակներով:

**Բովանդակություն**

1. ՀՀ տնտեսության ընդհանուր բնութագիրը:
2. ՀՀ արդյունաբերությունը. ընդհանուր բնութագիրը, ճյուղային կառուցվածքը
3. Վառելիքաէներգետիկ համալիրը:
4. Մետալուրգիական արդյունաբերություն:
5. Վերամշակող արդյունաբերություն:
6. Վերամշակող արդյունաբերություն (շարունակություն):
7. *Գործնական աշխատանք:*
8. ՀՀ գյուղատնտեսությունը. ընդհանուր բնութագիրը:
9. Հողային ֆոնդը: Գյուղատնտեսական հողաբարելավումը:
10. Բուսաբուծություն:
11. Անասնապահություն:
12. Գյուղատնտեսական մթերքների վերամշակում: Ագրոարդյունաբերական համալիր:
13. *Գործնական աշխատանք:*
14. ՀՀ տրանսպորտը. ընդհանուր բնութագիրը:
15. Տրանսպորտի գլխավոր տեսակները:
16. ՀՀ ոչ արտադրական ոլորտը. ընդհանուր բնութագիրը: Կրթության և գիտության ճյուղերը:
17. Մշակույթը, առողջապահությունը, առևտուրը և այլ ճյուղեր:

18. Ձբոսաշրջությունը:
19. ՀՀ-ն՝ միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում: Արտաքին տնտեսական կապերն ու ինտեգրացումը:
20. «ՀՀ տնտեսությունը» թեմայի ափոփում:
21. ՀՀ վարչական մարզերը[3]. համալիր աշխարհագրական բնութագիրը (առնվազն 6 ժամ):

- Արագածոտնի մարզ
- Արարատի մարզ
- Արմավիրի մարզ
- Գեղարքունիքի մարզ
- Լոռու մարզ
- Կոտայքի մարզ
- Շիրակի մարզ
- Սյունիքի մարզ
- Վայոց ձորի մարզ
- Տավուշի մարզ

| **Գործնական աշխատանք, թեմատիկ ուսումնասիրություն** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
| --- | --- |
| *Գործնական աշխատանք*<br>• Հաշվել վերականգնվող էներգետիկայի բաժինը ՀՀ էներգետիկ համակարգում:<br>• Կազմել գյուղատնտեսության և արդյունաբերության արտադրական կապերի գծապատկերը:<br>*Թեմատիկ ուսումնասիրություն*<br>• Գործող հանքերի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:<br>• Պոչամբարների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:<br>*Ուսումնական նախագիծ*<br>ՀՀ վարչական մարզեր | *Օրինաչափություններ*<br>• ՀՀ տնտեսության զարգացման օրինաչափությունները:<br>*Պատճառ և հետևանք*<br>• Տնտեսության տարածքային կազմակերպման և մասնագիտացման առանձնահատկությունները:<br>• Տնտեսական զարգացման հեռանկարային ուղղությունների կանխատեսում:<br>*Համակարգեր և մոդելներ*<br>• ՀՀ տնտեսությունը որպես փոխկապակցված ճյուղերի (ոլորտների) միասնություն: |

[3] ՀՀ վարչական մարզերը կարող են ուսումնասիրվել որպես ուսումնական նախագիծ:

| Միջառարկայական կապեր |
|---|
| **Հայոց լեզու** - Վերլուծել և ընկալել տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանալ դրանց հիմնական գաղափարը: Կազմել ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք, այդ թվում՝ հրապարակային խոսք, կիրառել ոչ վերբալ հաղորդակցման տարատեսակ միջոցներ:<br>**Հայոց պատմություն** - Իմանալ Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության (ՀԽՍՀ) հասարակության զարգացման տնտեսական մոդելների մասին:<br>**Հասարակագիտություն** - Կարողանալ ներկայացնել արտադրական կապերը որպես հանրային բարիքի ստեղծման համակարգ:<br>**Ֆիզիկա** - Գաղափար ունենալ էլեկտրականությունից և դրա չափման մեծություններից:<br>**Քիմիա** - Իմանալ շրջակա միջավայրի վրա քիմիական նյութերի ազդեցության մասին:<br>**Կենսաբանություն** - Գաղափար ունենալ բնության մեջ և մարդու կյանքում կենսաբազմազանության նշանակության մասին:<br>**Հանրահաշիվ** - Կարողանալ կատարել թվաբանական գործողություններ, հաշվել տոկոս:<br>**Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն** - Կարողանալ կատարել հաշվարկներ և գրաֆիկական աշխատանքներ՝ օգտագործելով ՏՀՏ հմտությունները: |
| **Կապը ՀՊՉ հանրակրթական հիմնական ծրագրի ակնկալվող վերջնարդյունքների հետ** |
| **Հ**1, Հ2, Հ4, Հ7, Հ8, Հ9, Հ10, Հ11, Հ12, Հ15, Հ16, Հ17, Հ18, Հ25, Հ26, Հ27, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ45 |

| Թեմա 6. | |
|---|---|
| **ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (3 ժամ)** | |
| **Նպատակ** | |
| Ձևավորել Արցախի Հանրապետության պատմաաշխարհագրական նկարագրի, բնության, բնական պայմանների և ռեսուրսների, բնակչության և տնտեսության վերաբերյալ գիտելիքներ, զարգացնել հետազոտական և մտածական հմտություններ: | |
| **Վերջնարդյունքներ** | |
| **Ներկայացնել Արցախի Հանրապետության համալիր աշխարհագրական բնութագիրը:**<br><br>Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝<br>1. *Բնորոշել* Արցախի սահմանների ձևավորման առանձնահատկությունները:<br>2. *Գնահատել* բնական պայմաններն ու ռեսուրսները տնտեսական զարգացման տեսանկյունից:<br>3. *Ներկայացնել* ԱՀ պետական կառավարման ձևն ու վարչատարածքային կառուցվածքը:<br>4. *Վերլուծել* բնակչության բնական և մեխանիկական շարժերը, *բացատրել* տեղաբաշխման և տարաբնակեցման ընդհանուր առանձնահատկությունները:<br>5. *Վերլուծել* տնտեսության ընդհանուր առանձնահատկությունները, ճյուղային և տարածքային կառուցվածքի բնորոշ գծերը:<br>6. *Բացատրել* արցախյան հիմնախնդրի էությունը: | |
| **Բովանդակություն** | |
| 1. Արցախի Հանրապետություն (ԱՀ): Ընդհանուր բնութագիրը:<br>2. Բնակչությունը:<br>3. Տնտեսությունը: | |
| **Գործնական աշխատանք** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
| • Ուրվագծային քարտեզի վրա անցկացնել Արցախի Հանրապետության խոշոր լեռնաշղթաները, գետերն ու լճերը: | *Օրինաչափություններ*<br>• Օդի ջերմաստիճանի, տեղումների, բնական լանդշաֆտների փոփոխությունները վերընթաց ուղղությամբ: |

| | |
|---|---|
| • Կատարել հաշվարկներ բնակչության թվի փոփոխության, շարժի, տեղաբաշխման և տարաբնակեցման վերաբերյալ: | *Պատճառ և հետևանք*<br>• Արդի ժողովրդագրական իրավիճակի բնորոշ գծերը:<br>• Տնտեսության կառուցվածքը, զարգացման հեռանկարները:<br>• Արտաքին տնտեսական կապերի աշխարհագրությունը: |
| **Միջառարկայական կապերը** | |
| **Հայոց լեզու** - Վերլուծել և ընկալել տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանալ դրանց հիմնական գաղափարը: Կազմել ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք, այդ թվում՝ հրապարակային խոսք, կիրառել ոչ վերբալ հաղորդակցման տարատեսակ միջոցներ:<br>**Հայոց պատմություն** - Իմանալ ՀՀ-ի և ԼՂՀ-ի անկախացման գործընթացի մասին: Կիրառել Արցախի Հանրապետության ձևավորման վերաբերյալ պատմաքաղաքական գիտելիքները:<br>**Հանրահաշիվ** - Կատարել թվաբանական գործողություններ բնակչության թվի փոփոխության վերաբերյալ: | |
| **Կապը ՀՊՉ հանրակրթական հիմնական ծրագրի ակնկալվող վերջնարդյունքների հետ** | |
| **Հ**1, Հ2, Հ4, Հ7, Հ8, Հ9, Հ10, Հ11, Հ12, Հ15, Հ16, Հ17, Հ18, Հ25, Հ26, Հ27, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ45 | |

| **Պահուստային դասաժամեր (9 ժամ)** |
|---|
| Ուսուցիչը ժամաքանակը տնօրինում է առարկայական չափորոշչային պահանջների իրականացման շրջանակում: Դասաժամերը հատկացվում են սովորողների գործնական, թեմատիկ և կիսամյակային, դաշտային աշխատանքների և հետազոտությունների կատարման համար: |

**ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ**
**10-րդ դասարան**
(առաջարկվում է 68 ժամ, որից 10 ժամ՝ պահուստային)

| **Թեմա 1.** |
|---|
| **ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐ: ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅՈՒՆ (13 ժամ)** |
| **Նպատակ** |
| Հարստացնել գիտելիքները աշխարհագրական գիտության, մտածողության, տեղորոշման և քարտեզագրության վերաբերյալ, զարգացնել դրանց առնչվող մտածողություն և կիրառական ու հմտություններ: |
| **Վերջնարդյունքներ** |
| **Ձեռք բերել հմտություններ քարտեզների դասակարգման, տեղագրական քարտեզների վրա հեռավորությունների, երկարությունների, անկյունների, թեքությունների որոշման, ռելիեֆի կտրվածքի կազմման, ԱՏՀ և ԳՏՀ (գլոբալ տեղորոշման համակարգ) միջոցով կիրառական աշխատանքների կատարման ուղղությամբ:**<br><br>Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝<br>1. *Վերլուծել* աշխարհագրական գիտության զարգացման պատմական փուլերի հիմնական առանձնահատկությունները:<br>2. *Տարբերակել* աշխարհագրական մտածողության չորս հիմնական հատկանիշները:<br>3. *Բացատրել* աշխարհագրական հետազոտության որոշ (նկարագրական, համեմատական, դաշտային հետազոտության, քարտեզագրական, մաթեմատիկական, վիճակագրական, ԱՏՀ) մեթոդների կիրառական նշանակությունը:<br>4. *Դասակարգել* քարտեզները՝ ըստ տարբեր հատկանիշների (պրոյեկցիա, մասշտաբ, բովանդակություն, տարածքի ընդգրկում, պատկերման եղանակ և այլն):<br>5. *Կազմել* քարտեզագրամներ և քարտեզադիագրամներ:<br>6. *Բացատրել* քարտեզագրական պրոյեկցիաների և աղավաղումների կապը:<br>7. *Կազմել* որևէ բովանդակության քարտեզի պայմանական նշանների լեգենդա: |

8. *Համեմատել* հավասարանկյուն, հավասարամեծ և ազատ պրոյեկցիաների առանձնահատկությունները քարտեզագրական աղավաղումների տեսանկյունից և *բացատրել* այդ մեթոդներով պատկերված քարտեզների կիրառական նշանակությունը:
9. *Ընտրել* որևէ խոշորամասշտաբ տեղագրական քարտեզ, *կազմել* դրա համարակալման անվանակարգը և պայմանական նշանների լեգենդան:
10. *Որոշել* որևէ տեղագրական քարտեզի վրա տարված ազիմուտները, ուղղության անկյունները, ուղղության(գծի) մագնիսական հակումը և մագնիսական խոտորումը:
11. *Որոշել* լանջի թեքությունը՝ տեղագրական քարտեզի համադրման սանդղակի միջոցով:
12. *Պատկերագծել* տեղանքի դրական (լեռ) և բացասական (գոգավորություն, լեռնահովիտ) ռելիեֆի ձևեր, *կազմել* ռելիեֆի կտրվածք:
13. Տարբեր մեթոդներով քարտեզի վրա *չափել* որևէ տարածքի մակերեսը, կորագիծ տեսք ունեցող օբյեկտների (գետ, տրանսպորտային ուղի) երկարությունը:
14. *Բացատրել* ԱՏՀ-ի էությունը և կիրառությունը:
15. *Կիրառել* գլոբալ տեղորոշման համակարգի (GPS) տեխնիկական միջոցները տեղանքում և ԱՏՀ (GIS) միջավայրում՝ առօրյա կյանքում ու հետազոտական նպատակներով խնդիրներ լուծելիս:
16. ԱՏՀ-ի կիրառմամբ *կազմել* ՀՀ վարչական քարտեզը:

**Բովանդակություն**

1. Աշխարհագրական գիտության պատմական զարգացումը, կառուցվածքը և արդի խնդիրները: Աշխարհագրական մշակույթ և մտածողություն:
2. Աշխարհագրության հետազոտության մեթոդները:
3. *Գործնական աշխատանք:*
4. Աշխարհագրական հետազոտության մեթոդները (շարունակություն):
5. *Գործնական աշխատանք:*
6. Աշխարհագրական քարտեզներ (դասակարգումը, պայմանական նշաններ, պրոյեկցիաներ, աղավաղումներ):
7. Տեղագրական քարտեզներ:
8. *Գործնական աշխատանք:*
9. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ (ԱՏՀ) և թվային քարտեզներ: Գլոբալ տեղորոշման համակարգ (ԳՏՀ):
10. *Գործնական աշխատանք:*
11. «Աշխարհագրության ներածություն և մեթոդներ: Քարտեզագրություն» թեմայի ամփոփում:

| Գործնական աշխատանք, թեմատիկ ուսումնասիրություն | Ընդհանրական խաչվող հասկացություններ |
|---|---|
| • Դաշտային հետազոտության մեթոդի միջոցով հաշվել մոտակա գետակի կամ գետի ջրի ծախսը, օրական հոսքը:<br>• Մաթեմատիկական մեթոդով հաշվել աստիճանային կոռելյացիայի գործակիցը:<br>• Լանջի թեքության որոշում համադրման սանդղակի միջոցով, մակերեսների և կորագծերի չափում, ռելիեֆի պատկերագծում, կտրվածքի կազմում:<br>• Տեղագրական քարտեզում ազիմուտների և ուղղության անկյունների որոշում:<br>• ԱՏՀ-ի կիրառմամբ ՀՀ վարչական քարտեզի կազմում: | *Համակարգեր և համակարգերի մոդելներ*<br>• Երկրագնդի կամ նրա առանձին հատվածի պատկերման երկրաչափական մոդելներ:<br>*Կառուցվածք և գործառույթ*<br>• Աշխարհագրություն գիտության կառուցվածքը:<br>*Մասշտաբ, համամասնություն և քանակ*<br>• Քարտեզի և գլոբուսի մասշտաբ, համադրման սանդղակ, հորիզոնականներ և իզոհիպսեր, կիլոմետրային ցանց, աստիճանների (ռոպեներ, վայրկյաններ) շրջանակ:<br>• Ուղղության անկյուններ, մագնիսական հակում, մագնիսական խոտորում, լանջերի թեքություններ, գունային (որակական) կամ քանակական տվյալների սանդղակներ: |

| Միջառարկայական կապեր |
|---|
| **Հայոց լեզու** - Վերլուծել և ընկալել տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանալ դրանց հիմնական գաղափարը: Կազմել ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք, այդ թվում՝ հրապարակային խոսք, կիրառել ոչ վերբալ հաղորդակցման տարատեսակ միջոցներ:<br>**Ֆիզիկա** - Գաղափար ունենալ Երկրի մագնիսական դաշտի, մագնիսական բևեռների վերաբերյալ:<br>**Երկրաչափության** - Հաշվել մակերեսներ՝ ըստ քարտեզի մասշտաբի, ուղղության անկյուններ, ազիմուտներ, աշխարհագրական կոորդինատներ՝ ըստ GPS-ի: Կարողանալ տարբերակել քարտեզագրական պրոյեկցիաները՝ ըստ երկրաչափական մարմինների, հաշվել կորագծերի երկարություններ ըստ քարտեզի մասշտաբի: |

| **Կապը ՀՊՉ հանրակրթական միջնակարգ ծրագրի ակնկալվող վերջնարդյունքների հետ** |
| --- |
| Մ4, Մ5, Մ6, Մ10, Մ11, Մ14, Մ15, Մ21, Մ29 |

| **Թեմա 2.** |
| --- |
| **ԵՐԿՐԱԳՈՒՆԴ (10 ժամ)** |
| **Նպատակ** |
| Զարգացնել գիտելիքներ և հմտություններ Երկրի ձևաչափական տարրերի, լանջային գործընթացների, պտույտների և դրանց հետևանքների վերաբերյալ: |
| **Վերջնարդյունքներ** |
| • **Վերլուծել Երկրի ներքին կառուցվածքի առանձնահատկությունները, սալերի տեկտոնիկան, ռելիեֆագոյացումը, հողմահարումը, լանջային գործընթացները, բնական աղետները և դրանց տարածման աշխարհագրությունը:**<br>• **Բացատրել Երկրի՝ իր առանցքի շուրջը պտույտի հետևանքով ժամային գոտիների առանձնացումը, Երկրի օրական և տարեկան պտույտների ազդեցությունը բնական գործընթացների և մարդու գործունեության վրա:**<br><br>Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝<br>1. *Բնորոշել* Երկիր մոլորակի ձևը, չափերն ու ներքին կառուցվածքը:<br>2. *Բացատրել* սալերի տեկտոնական շարժման պատճառներն ու հետևանքները:<br>3. *Բնորոշել* սալերի սահմաններում ընթացող տարբեր տեկտոնական գործընթացները (կղզային աղեղների, օվկիանոսային փողրակների, միջին օվկիանոսային և մայրցամաքային լեռնաշղթաների առաջացումը):<br>4. *Վերլուծել* գործող հրաբուխների և երկրաշարժերի աշխարհագրական տարածման առանձնահատկությունները:<br>5. *Ներկայացնել* ռելիեֆաստեղծ հիմնական գործոններն ու ռելիեֆի ձևերը:<br>6. *Բացատրել* ապարների երկրաբանական շրջապտույտը:<br>7. *Վերլուծել* մարդու ազդեցությունը Երկրի մակերևույթի ձևավորման գործընթացներում: |

8. *Որոշել* կլիմայական տարբեր պայմաններում գերակշռող հողմահարման տեսակը:
9. *Բնորոշել* հիմնական լանջային գործընթացները (սողանք, քարաթափում, սոլիֆլյուկցիա, սելավ և այլն):
10. *Բնորոշել* բնական աղետների առաջացման և տարածման աշխարհագրական առանձնահատկությունները:
11. *Վերլուծել* երկրագնդի օրական և տարեկան պտույտի աշխարհագրական հետևանքները:
12. *Տարբերակել* համաշխարհային, գոտիական, տեղական և դեկրետային ժամանակները:
13. *Որոշել* Երկրի մակերևույթի որևէ կետում տեղական և գոտիական ժամանակը՝ աշխարհագրական կոորդինատների միջոցով:

**Բովանդակություն**

1. Երկրի ձևը, չափերը, ներքին կառուցվածքը: Ապարներ, դրանց երկրաբանական շրջապտույտը:
2. Սալերի տեկտոնական շարժումը: Պլատֆորմներ և գեոսինկլինալներ:
3. Հողմահարում: Երկրի մակերևույթի միկրոձևեր:
4. Լանջային պրոցեսներ. մարդու ազդեցությունը:
5. Բնական աղետներ․ առաջացումը, դասակարգումը, տեսակները:
6. *Կրկնություն:*
7. Երկրի պտույտն իր առանցքի շուրջը, դրա աշխարհագրական հետևանքները:
8. Երկրագնդի ժամային գոտիները: Տեղական և գոտիական ժամանակ: *Գործնական աշխատանք:* Ժամային գոտիների որոշման վերաբերյալ խնդիրների լուծում:
9. Երկրի տարեկան պտույտը, դրա աշխարհագրական հետևանքները:
10. «Երկրագունդ» թեմայի ամփոփում:

| **Գործնական աշխատանք,<br>թեմատիկ ուսումնասիրություն** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
|---|---|
| • Պելտյերի գծապատկերի միջոցով ջերմաստիճան-խոնավություն ցուցանիշներով հողմահարման գերակշռող տեսակի որոշում: | *Համակարգեր և համակարգերի մոդելներ*<br>• Ծանրության (գրավիտացիոն) ուժ:<br>*Պատճառ և հետևանք*<br>• Երկրի պտույտն Արեգակի շուրջը և տարվա եղանակները:<br>• Միջնապատյանում նյութի շարժման պատճառներն ու հետևանքները:<br>• Կորիոլիսի ուժի՝ Երկրի պտույտի շեղող ուժի հետևանքները: |

| | |
|---|---|
| | *Օրինաչափություններ*<br>• Երկրի ժամային գոտիների առանձնացումը և տեղական ու գոտիական ժամանակները:<br>• Երկրի մակերևույթի քայքայման ինտեսիվությունը՝ պայմանավորված կլիմայական գործոնների ազդեցությամբ: |
| **Միջառարկայական կապեր** | |
| **Հայոց լեզու** - Վերլուծել և ընկալել տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանալ դրանց հիմնական գաղափարը: Կազմել ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ  բանավոր և գրավոր խոսք, այդ թվում՝ հրապարակային խոսք, կիրառել ոչ վերբալ հաղորդակցման տարատեսակ միջոցներ:<br>**Ֆիզիկա** - Գիտելիք ունենալ ծանրության ուժի մասին:<br>**Երկրաչափություն** - Կարողանալ հաշվարկել տեղական, գոտիական և համաշխարհային ժամանակները: | |
| **Կապը ՀՊՉ հանրակրթական միջնակարգ ծրագրի ակնկալվող վերջնարդյունքների հետ** | |
| Մ4, Մ5, Մ6, Մ8, Մ9, Մ10, Մ11, Մ12, Մ14, Մ15, Մ21, Մ29 | |

<table>
<tr><th colspan="2">Թեմա 3.</th></tr>
<tr><td colspan="2">ԵՂԱՆԱԿԱՅԻՆ ԵՎ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ (4 ժամ)</td></tr>
<tr><th colspan="2">Նպատակ</th></tr>
<tr><td colspan="2">Զարգացնել և համակարգել եղանակային և կլիմայական պայմանների, դրանց ձևավորման, ազդեցության և աշխարհագրական առանձնահատկությունների վերաբերյալ գիտելիքները:</td></tr>
<tr><th colspan="2">Վերջնարդյունքներ</th></tr>
<tr><td colspan="2">Վերլուծել համամոլորակային և տեղական ջերմային հաշվեկշիռների կապը ջերմոցային էֆեկտի հետ, մեկնաբանել քաղաքային միկրոկլիմայի առանձնահատկությունները:<br><br>Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝<br>1. Վերլուծել համամոլորակային և տեղական ջերմային հաշվեկշիռները:<br>2. Բացատրել հիմնական եղանակային երևույթներն ու գործընթացները (կարկուտ, մառախուղ, ցող, եղյամ, ջերմաստիճանի ուղղաձիգ փոփոխություն և այլն):<br>3. Բացատրել Երկրի ջերմոցային էֆեկտի էությունը:<br>4. Բացատրել քաղաքային միկրոկլիմայի առանձնահատկությունները:</td></tr>
<tr><th colspan="2">Բովանդակություն</th></tr>
<tr><td colspan="2">1. Համամոլորակային և տեղական (լոկալ) ջերմային հաշվեկշիռներ:<br>2. Եղանակային պայմաններ և երևույթներ:<br>3. Քաղաքային միկրոկլիմա:<br>4. Գործնական աշխատանք:</td></tr>
<tr><th>Գործնական աշխատանք, թեմատիկ ուսումնասիրություն</th><th>Ընդհանրական խաչվող հասկացություններ</th></tr>
<tr><td>• Ագրոկլիմայական ռեսուրսներ:<br>• Բնության օրացույց:</td><td>Օրինաչափություններ</td></tr>
</table>

| | |
|---|---|
| | • Տվյալ վայրի ստացած արեգակնային ջերմության քանակի նվազում հասարակածից դեպի բևեռներ ուղղությամբ:<br>• Խոնավության նվազում ծովից տվյալ վայրի հեռավորության աճին զուգընթաց:<br>• Տեղանքի բացարձակ բարձրության աճին զուգընթաց ջերմաստիճանի նվազում և տեղումների ավելացում:<br>*Պատճառ և հետևանք, մեխանիզմ և կանխատեսում*<br>• Երկրագնդի մակերևույթի վրա ջերմության անհավասարաչափ բաշխվածություն:<br>*Համակարգեր և համակարգերի մոդելներ*<br>• Ջերմոցային էֆեկտ: |

| **Միջառարկայական կապեր** |
|---|
| **Հայոց լեզու** - Վերլուծել և ընկալել տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանալ դրանց հիմնական գաղափարը: Կազմել ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք, այդ թվում՝ հրապարակային խոսք, կիրառել ոչ վերբալ հաղորդակցման տարատեսակ միջոցներ:<br>**Ֆիզիկա** - Կարողանալ բացատրել օդի ջերմաստիճանի և ճնշման կապը, կիրառել ջերմային հաշվեկշռի հավասարումը:<br>**Քիմիա** - Իմանալ շրջակա միջավայրի վրա քիմիական նյութերի ազդեցության մասին:<br>**Երկրաչափություն** - Կարողանալ որոշել անկյուններ: |
| **Կապը ՀՊՉ հանրակրթական միջնակարգ ծրագրի ակնկալվող վերջնարդյունքների հետ** |
| Մ4, Մ5, Մ6, Մ8, Մ9, Մ10, Մ11, Մ12, Մ14, Մ15, Մ21, Մ29 |

| Թեմա 4. |
| --- |
| **ԳԵՏԱՅԻՆ ՋՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (5 ժամ)** |
| **Նպատակ** |
| Զարգացնել գետերի, գետային հոսքի, գետավազանների ու դրանցում տեղի ունեցող գործընթացների վերաբերյալ գիտելիքներ և վերլուծական հմտություններ: |
| **Վերջնարդյունքներ** |
| **Բնորոշել ջրհավաք ավազանը որպես համակարգ, կիրառել գետի ջրաբանական բնութագրիչները գետահունային գործընթացների որոշման նպատակով:**<br><br>Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝<br>1. *Բնորոշել* ջրհավաք ավազանը որպես համակարգ, ջրաբանական բնութագրիչներն օգտագործել գետահունային գործընթացների բացատրության նպատակով:<br>2. *Բացատրել* հիդրոգրաֆի առանձնահատկությունները:<br>3. *Բացատրել* գետահունային գործընացները Հյուլստրոմի դիագրամի միջոցով:<br>4. *Հաշվել* գետի ծախսը, հոսքը, անկումը և թեքությունը, հոսքի մոդուլը:<br>5. *Հիմնավորել* ջրային ռեսուրսների գետավազանային արդյունավետ կառավարման անհրաժեշտությունը:<br>6. *Բացատրել* ջրաբանական գործընթացների վրա մարդու ներգործության դրական և բացասական հետևանքներն օրինակների միջոցով: |
| **Բովանդակություն** |
| 1. Ջրհավաք ավազանը որպես համակարգ: Գետի բնութագրիչները: Հիդրոգրաֆ:<br>2. Գետահունային գործընթացներ: Հյուլստրոմի կորը:<br>3. Մարդու ազդեցությունը ջրաբանական գործընթացների վրա:<br>4. *Գործնական աշխատանք:*<br>5. «Գետային ջրաբանություն» թեմայի ամփոփում: |

| Գործնական աշխատանք, թեմատիկ ուսումնասիրություն | Ընդհանրական խաչվող հասկացություններ |
|---|---|
| • Հիդրոգրաֆների վերլուծություն: | *Համակարգեր և համակարգերի մոդելներ*<br>• Ջրհավաք ավազանի մուտքային և ելքային բաղադրիչները:<br>*Պատճառ և հետևանք, մեխանիզմ և կանխատեսում*<br>• Հիդրոգրաֆի ձևի կապը ջրհավաք ավազանի բնութագրիչների հետ:<br>*Մասշտաբ, համամասնություն և քանակ*<br>• Մարդու գործունեության ազդեցությունները գետավազանային գործընթացների վրա:<br>• Ջրհավաք ավազանի տարածք, գետի ծախս և հոսք:<br>*Օրինաչափություններ*<br>• Գետի ջրի արագության նվազումն ակունքից գետաբերան:<br>• Մասնիկների չափի և արագության կապը գետահունային գործընթացների հետ: |

| Միջառարկայական կապեր |
|---|
| **Հայոց լեզու**- Վերլուծել և ընկալել տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանալ դրանց հիմնական գաղափարը: Կազմել ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք, այդ թվում՝ հրապարակային խոսք, կիրառել ոչ վերբալ հաղորդակցման տարատեսակ միջոցներ:<br>**Ֆիզիկա** - Կարողանալ տարբերակել ջրի լամինար և տուրբուլենտ շարժումները: Օգտագործել հոսող ջրի ճնշման մասին գիտելիքները էրոզիայի ինտենսիվությունը, ջրաէներգետիկ ներուժը բացատրելու համար:<br>**Հանրահաշիվ** - Կարողանալ լուծել խնդիրներ գետի ծախսի, հոսքի վերաբերյալ: |

| Կապը ՀՊՉ հանրակրթական միջնակարգ ծրագրի ակնկալվող վերջնարդյունքների հետ |
|---|
| Մ4, Մ5, Մ6, Մ8, Մ9, Մ10, Մ11, Մ12, Մ14, Մ15, Մ21, Մ29 |

| Թեմա 5. |
|---|
| **ԱՇԽԱՐՀԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ (7 ժամ)** |
| **Նպատակ** |
| Զարգացնել աշխարհի քաղաքական բաժանման, պետությունների դասակարգման և տիպաբանության, աշխարհաքաղաքականության և ՀՀ-ի վրա դրա ազդեցությունների վերաբերյալ գիտելիքներ ու մտածական հմտություններ: |
| **Վերջնարդյունքներ** |
| **Բացատրել ժամանակակից աշխարհի քաղաքաաշխարհագրական գործընթացներն ու աշխարհաքաղաքականությունը:**<br><br>Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝<br>1. *Վերլուծել* քաղաքական քարտեզի քանակական և որակական փոփոխությունները:<br>2. *Բնորոշել* աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորման հիմնական փուլերը, *վերլուծել* քաղաքական բաժանումները պայմանավորող հիմնական գործոնները:<br>3. *Բացատրել* աշխարհի քաղաքական բաժանման ժամանակակից գործընթացները, *վերլուծել* դրանց ընթացքի առանձնահատկությունները:<br>4. *Համադրել* երկրի քաղաքաաշխարհագրական և տնտեսաաշխարհագրական դիրքերը, *գնահատել* դրանց ազդեցությունը համաշխարհային, տարածաշրջանային և տեղական մակարդակներով:<br>5. *Բնորոշել* զարգացած և զարգացող երկրները, *առանձնացնել* զարգացած և զարգացող երկրները՝ ըստ ենթախմբերի:<br>6. *Դասակարգել* պետությունները՝ ըստ կառավարման և պետական տարածքային կառուցվածքի ձևերի:<br>7. *Բացատրել* քաղաքական աշխարհագրության ու աշխարհաքաղաքականության էությունը:<br>8. *Բնորոշել* աշխարհաքաղաքականության հիմնական տեսություններն ու հայեցակարգերը:<br>9. *Վերլուծել* աշխարհաքաղաքականության ազդեցությունը պետությունների առաջացման, զարգացման գործընթացների վրա:<br>10. *Գնահատել* ՀՀ-ի տեղը՝ ժամանակակից համամոլորակային և տարածաշրջանային աշխարհաքաղաքական գործընթացների համատեքստում: |
| **Բովանդակություն** |
| 1. Աշխարհի քաղաքական բաժանումը (հնագույն ժամանակներից մինչև XX դարի սկիզբը):<br>2. Աշխարհի քաղաքական բաժանումը (նորագույն ժամանակներ): |

3. Աշխարհի երկրների դասակարգումն ու տիպաբանությունը (զարգացած և զարգացող երկրներ, պետությունների դասակարգումը՝ ըստ կառավարման ձևի և պետական կառուցվածքի):
4. Քաղաքական աշխարհագրություն և աշխարհաքաղաքականություն:
5. ՀՀ-ն ժամանակակից աշխարհաքաղաքական գործընթացներում:
6. *Գործնական աշխատանք:*
7. «Աշխարհի քաղաքական բաժանումը» թեմայի ամփոփում:

| **Գործնական աշխատանք, թեմատիկ ուսումնասիրություն** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
|---|---|
| • Աշխարհի քաղաքական քարտեզի փոփոխությունները Երկրորդ աշխարհամարտից հետո:<br>• Պետությունների առանձնացումը՝ ըստ աշխարհագրական դիրքի:<br>• Դասակարգել պետությունները՝ ըստ զարգացման մակարդակների: | *Օրինաչափություններ*<br>• Քաղաքաաշխարհագրական և տնտեսաաշխարհագրական դիրքերը պետությունների զագացման առանցքային գործոն:<br>• Արդի աշխարհում աշխարհաքաղաքական գլոբալ կենտրոնների ազդեցության վճռորոշ լինելը աշխարհաքաղաքական բոլոր գործընթացների վրա:<br>*Պատճառ և հետևանք*<br>• Եվրոպայի պետությունների տարածքների ընդարձակումը Աշխարհագրական մեծ հայտնագործությունների շնորհիվ:<br>• Աշխարհաքաղաքական որոշ գործընթացներ պատմական տարբեր ժամանակաշրջաններում որպես աշխարհագրական գործոնների հետևանք:<br>*Կառուցվածք և գործառույթ*<br>• Պետական կառավարման ձև, տարածքային կառուցվածք:<br>*Կայունություն և փոփոխություն*<br>• Պետությունների սահմաններ, կառավարման ձև և վարչատարածքային կառուցվածք:<br>*Մասշտաբ, համամասնություն, քանակ*<br>• Պատմականորեն աշխարհի քաղաքական բաժանման միավորների՝ պետությունների թվաքանակի աճը: |

| Միջառարկայական կապեր |
| --- |
| **Հայոց լեզու** - Վերլուծել և ընկալել տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանալ դրանց հիմնական գաղափարը: Կազմել ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք, այդ թվում՝ հրապարակային խոսք, կիրառել ոչ վերբալ հաղորդակցման տարատեսակ միջոցներ:<br>**Համաշխարհային պատմություն** - Իմանալ Աշխարհագրական մեծ հայտնագործությունների պատմական նշանակությունը, գաղութային համակարգերի, կայսրությունների փլուզումների և համաշխարհային պատերազմների ազդեցությունն աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորման վրա: Կարողանալ որևէ տարածքի պատմամշակութային զարգացումը պայմանավորել նաև աշխարհագրական գործոններով:<br>**Հասարակագիտություն** - Գաղափար ունենալ պետության հատկանիշների և գործառույթների, պետական կարգի, կառուցվածքի և կառավարման ձևի մասին: |
| **Կապը ՀՊՉ հանրակրթական միջնակարգ ծրագրի ակնկալվող վերջնարդյունքների հետ** |
| Մ14, Մ15, Մ16, Մ18 |

| Թեմա 6. |
| --- |
| **ԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ (11 ժամ)** |
| **Նպատակ** |
| Զարգացնել բնակչության բնութագրիչների, դրանց տարածական և ժամանակային փոփոխությունների վերաբերյալ գիտելիքներ և հմտություններ, ինչպես նաև մարդկանց ազգային ու մշակութային առանձնահատկությունների վերաբերյալ պատշաճ վերաբերմունք և վարքագիծ: |
| **Վերջնարդյունքներ** |
| **Վերլուծել ժողովրդագրական գործընթացներն ու դրանց զարգացման միտումները, բնակչության տեղաբաշխման և տարաբնակեցման ժամանակակից առանձնահատկությունները:**<br>Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝ |

1. *Ներկայացնել* աշխարհի բնակչության թվի շարժընթացի բնորոշ գծերը պատմական տարբեր ժամանակահատվածներում, *բացատրել* բնակչության թվի շարժի աշխարհագրական առանձնահատկությունները:
2. *Վերլուծել* աշխարհի բնակչության թվի ավելացման հիմնախնդիրը Թ. Մալթուսի և Է. Բոսերուպի տեսությունների համատեքստում:
3. *Ներկայացնել* բնակչության վերարտադրության տիպերը:
4. *Բացատրել* «ժողովրդագրական պայթյունը» և «ժողովրդագրական ճգնաժամը»:
5. *Վերլուծել* բնակչության բնական շարժի և ժողովրդագրական քաղաքականության պատճառահետևանքային կապերն ու դրանց կառավարման ուղղությամբ իրականացվող միջոցառումները:
6. *Վերլուծել* ժողովրդագրական անցման փուլերը:
7. *Վերլուծել* ծնելիության բարձր ցուցանիշ ունեցող աֆրիկյան որևէ երկրի բնակչության վերարտադրության պատկերը, *գտնել* պատճառահետևանքային կապերն ու *կապարել* հետևություններ:
8. *Վերլուծել* բնակչության տեղաբաշխման վրա ազդող գործոնները:
9. *Բացատրել* միգրացիայի գործընթացը Լիի միգրացիայի մոդելի հիման վրա, *ներկայացնել* միջազգային միգրացիայի հիմնական ուղղությունները:
10. *Վերլուծել* արդի միգրացիայի գործընթացներն ու դրանց հետևանքները, *գնահատել* միգրացիայի կարգավորման անհրաժեշտությունը:
11. *Վերլուծել* աշխատուժի միջազգային միգրացիայի գործընթացները, դրանց պատճառներն ու հետևանքները:
12. *Վերլուծել* բնակչության սեռատարիքային կազմի առանձնահատկությունները տարբեր տիպի երկրներում:
13. *Բացատրել* բնակչության կյանքի միջին տևողության և կենսամակարդակի տարբերությունները զարգացման տարբեր մակարդակների երկրներում:
14. *Ներկայացնել* տարաբնակեցման հիմնական ձևերը, *համեմատել* դրանց աշխարհագրական տարբերությունները, *վերլուծել* տարաբնակեցման վրա ազդող գործոններն ու արդի միտումները:
15. *Վերլուծել* ուրբանիզացման գործընթացները, դրա գործոնները, զարգացման միտումները, խոշոր քաղաքների հիմնախնդիրները:
16. *Նկարագրել* քաղաքների տիպերը, *վերլուծել* դրանց հատակագծային և քաղաքաշինական տարբերությունները:
17. *Բնորոշել* կայուն քաղաքը, օրինակների միջոցով *գնահատել* քաղաքների զարգացման կարևորությունն ու հեռանկարը:

| **Բովանդակություն** |
|---|

1. Աշխարհի բնակչության թիվը և շարժը:
2. Բնակչության վերարտադրություն: Ժողովրդագրական անցման տեսությունը:
3. Բնակչության տեղաբաշխման գործոնները:
4. Արդի միգրացիայի գործընթացները, դրանց հետևանքներն ու կարգավորման հիմնախնդիրը:
5. *Գործնական աշխատանք:*
6. Բնակչության սեռատարիքային կազմը:
7. Տարաբնակեցումը և դրա ձևերը:
8. Ուրբանիզացում, գործոնները և զարգացման միտումները:
9. Քաղաքների տիպերը:
10. *Գործնական աշխատանք:*
11. «Աշխարհի բնակչություն» թեմայի ամփոփում:

| Գործնական աշխատանք, թեմատիկ ուսումնասիրություն | Ընդհանրական խաչվող հասկացություններ |
|---|---|
| • Աֆրիկյան որևէ երկրի բնակչության վերարտադրությունը (ուսումնասիրել և վերլուծել վերարտադրության առանձնահատկությունները պետության օրինակով):<br>• Լիի միգրացիայի մոդելը (օրինակի միջոցով վերլուծել միգրացիայի գործընթացը):<br>• Աշխատուժի միջազգային միգրացիայի պատճառները, ուղղությունները, հետևանքները, միտումները (օրինակի միջոցով վերլուծել և գնահատել աշխատուժի շարժընթացը):<br>*Թեմատիկ ուսումնասիրություն*<br>• Խելացի քաղաք (Smart City, հետազոտել և վերլուծել խելացի քաղաք մոդելը): | *Օրինաչափություններ*<br>• Զարգացման տարբեր մակարդակներ ունեցող երկրներում վերարտադրության տիպերի, կյանքի որակի և տևողության տարբերությունները:<br>*Պատճառ և հետևանք*<br>• մակարդակների երկրներում ժողովրդագրական քաղաքականությունը, միգրացիայի հոսքերը:<br>• Բնակչության տեղաբաշխման և տարաբնակեցման փոփոխությունների միտումները:<br>*Մասշտաբ, համամասնություն, քանակ*<br>• Բնակչության թվի շարժընթացը:<br>• Սեռատարիքային բուրգ:<br>• Ուրբանիզացման մակարդակ:<br>*Համակարգեր և համակարգերի մոդելներ*<br>• Տարաբնակեցման ձևերն ու քաղաքների հատակագծային մոդելները:<br>• Կայուն քաղաք: |

| Միջառարկայական կապեր |
|---|
| **Հայոց լեզու** - Վերլուծել և ընկալել տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանալ դրանց հիմնական գաղափարը: Կազմել ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք, այդ թվում՝ հրապարակային խոսք, կիրառել ոչ վերբալ հաղորդակցման տարատեսակ միջոցներ:<br>**Համաշխարհային պատմություն** - Կարողանալ բնակչության վերարտադրության, միգրացիայի գործընթացները կապել ագրարային, արդյունաբերական, հետարդյունաբերական հեղափոխությունների պատմական գործընթացների հետ:<br>**Կենսաբանություն** - Գաղափար ունենալ կենդանի օրգանիզմների և մարդու կենսունակության կորերի մասին: |
| **Կապը ՀՊՉ հանրակրթական միջնակարգ ծրագրի ակնկալվող վերջնարդյունքների հետ** |
| Մ4, Մ5, Մ8, Մ11, Մ12, Մ14, Մ15, Մ21, Մ29 |

| Թեմա 7. |
|---|
| **ԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ (8 ժամ)** |
| **Նպատակ** |
| Զարգացնել բնական պայմանների ու ռեսուրսների վերաբերյալ համակարգված գիտելիքներ և վերլուծական հմտություններ: |
| **Վերջնարդյունքներ** |

| |
|---|
| **Վերլուծել հասարակության զարգացման գործընթացներում բնական ռեսուրսների դերը և դրանց օգտագործման հետևանքները: Կարևորել արդյունավետ բնօգտագործումը:**<br><br>Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝<br>1. *Բնորոշել* բնական պայմաններն ու ռեսուրսները որպես աշխարհագրական միջավայրի գլխավոր տարրեր:<br>2. *Գնահատել* բնական ռեսուրսների տնտեսական, սոցիալական և էկոլոգիական նշանակությունը:<br>3. *Վերլուծել* բնական պայմանների ազդեցությունը մարդու տնտեսական գործունեության վրա:<br>4. *Մեկնաբանել* արդյունավետ ռեսուրսօգտագործման արդի սկզբունքները:<br>5. *Վերլուծել* բնական ռեսուրսները՝ ըստ սպառման և փոխարկելիության հնարավորությունների:<br>6. *Ներկայացնել* ըստ ծագման բնական ռեսուրսների աշխարհագրական տեղաբաշխումը (տարածումը):<br>7. *Գնահատել* մարդկության և առանձին երկրների ապահովվածությունը տարբեր տեսակի բնական ռեսուրսներով:<br>8. *Վերլուծել* բնական ռեսուրսների տնտեսական գնահատման բաղադրիչների ազդեցությունը բնօգտագործման վրա: |
| **Բովանդակություն** |
| 1. Աշխարհագրական միջավայր, բնական պայմաններ և ռեսուրսներ:<br>2. Աշխարհի բնակչության և երկրների ապահովվածությունը տարբեր տեսակի բնական ռեսուրսներով:<br>3. Ընդերքի ռեսուրսներ:<br>4. Հողային ռեսուրսներ:<br>5. Կլիմայական և տիեզերական ռեսուրսներ:<br>6. Ջրային ռեսուրսներ:<br>7. Կենսաբանական ռեսուրսներ:<br>8. Համաշխարհային օվկիանոսի ռեսուրսներ: Ռեկրեացիոն ռեսուրսներ: |

| **Գործնական աշխատանք, Թեմատիկ ուսումնասիրություն** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
|---|---|
| • Անտառի կողմնակի արդյունքի օգտագործումը: | *Պատճառ և հետևանք*<br>• Բնական բարենպաստ պայմանները զարգացման համար անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման:<br>• Բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը և մարդկության կայուն զարգացումը: |

| | |
|---|---|
| | • Բնական ռեսուրսների համալիր օգտագործում և խնայողություն: |
| **Միջառարկայական կապեր** | |
| **Հայոց լեզու** - Վերլուծել և ընկալել տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանալ դրանց հիմնական գաղափարը: Կազմել ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ  բանավոր և գրավոր խոսք, այդ թվում՝ հրապարակային խոսք, կիրառել ոչ վերբալ հաղորդակցման տարատեսակ միջոցներ:<br>**Համաշխարհային պատմություն** - Գաղափար ունենալ մարդկության կողմից բնական տարբեր ռեսուրսների օգտագործման մասին:<br>**Քիմիա** - Գաղափար ունենալ նյութերի տեսակների մասին:<br>**Կենսաբանություն** - Գաղափար ունենալ կենսաբանական ռեսուրսների մասին: | |
| **Կապը ՀՊՉ հանրակրթական միջնակարգ ծրագրի ակնկալվող վերջնարդյունքների հետ** | |
| Մ4, Մ5, Մ6, Մ8, Մ9, Մ10, Մ11, Մ12, Մ14, Մ15, Մ21, Մ22, Մ29 | |

| **Պահուստային դասաժամեր (10 ժամ)** |
|---|
| Ուսուցիչը ժամաքանակը տնօրինում է առարկայական չափորոշչային պահանջների իրականացման շրջանակում: Դասաժամերը հատկացվում են սովորողների գործնական, թեմատիկ և կիսամյակային, դաշտային աշխատանքների և հետազոտությունների կատարման համար: |

**ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**11-րդ դասարան**

(առաջարկվում է 34 ժամ, որից 6 ժամ՝ պահուստային)

| **Թեմա 1.** |
|---|
| **ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ (15 ժամ)** |
| **Նպատակ** |
| Զարգացնել գիտելիքներ և հմտություններ համաշխարհային տնտեսության ժամանակակից ճյուղային և տարածքային կառուցվածքի, գլոբալացման, միասնացման ու դրանց փոխազդեցությունների հետևանքների վերաբերյալ: |
| **Վերջնարդյունքներ** |
| **Վերլուծել համաշխարհային տնտեսության ճյուղային և տարածքային կառուցվածքի, զարգացման ու մասնագիտացման առանձնահատկությունները:**<br><br>Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝<br>1. Բնորոշել համաշխարհային տնտեսության (ՀՏ) զարգացման փուլերն ու արդի միտումները:<br>2. *Բացատրել* համաշխարհային տնտեսության ժամանակակից ճյուղային և տարածքային կառուցվածքի առանձնահատկությունները:<br>3. *Բացատրել* աշխատանքի աշխարհագրական բաժանման, երկրների միջազգային մասնագիտացման և միասնացման (ինտեգրացման) էությունը:<br>4. *Գնահատել* զարգացած և զարգացող երկրների տեղն ու դերը համաշխարհային տնտեսության համակարգում:<br>5. *Գնահատել* արդյունաբերության տեղն ու դերը ՀՏ-ի մեջ:<br>6. *Վերլուծել* արդյունաբերության առանձին ճյուղերի տեղաբաշխման գործոնները և զարգացման ժամանակակից միտումները:<br>7. *Բնորոշել* արտադրության կազմակերպման ձևերը (համակենտրոնացում, կոոպերացում, կոմբինացում) և շրջանաձև տնտեսությունը:<br>8. *Սահմանել* արդյունաբերական կետ, կենտրոն, հանգույց, արդյունաբերական շրջան հասկացությունները:<br>9. *Վերլուծել* համաշխարհային վառելիքաէներգետիկ արդյունաբերության հաշվեկշռի փոփոխությունները: |

10. *Վերլուծել* համաշխարհային վառելիքաէներգետիկ արդյունաբերության ճյուղային կառուցվածքի և տեղաբաշխման առանձնահատկությունները և զարգացման ժամանակակից միտումները:
11. Գնահատել այլընտրանքային էներգիայի տարբեր տեսակների հիմնական առավելություններն ու թերությունները, զարգացման հեռանկարներն աշխարհի տարբեր տարածաշրջաններում և երկրներում:
12. *Բացատրել* մշակող արդյունաբերության առանձին ճյուղերի զարգացման և տեղաբաշխման ժամանակակից միտումները:
13. *Գնահատել* գյուղատնտեսության դերը հասարակական կյանքում և տնտեսության մեջ:
14. *Գնահատել* ագրոկլիմայական ռեսուրսների ազդեցությունը գյուղատնտեսության զարգացման և տեղաբաշխման վրա:
15. *Բնորոշել* գյուղատնտեսության ժամանակակից արտադրական տիպերը, մասնագիտացումը, տեղաբաշխումը:
16. *Գնահատել* «Կանաչ հեղափոխության» նշանակությունը որոշ զարգացող երկրներում:
17. *Բնութագրել* համաշխարհային տրանսպորտի և կապի ժամանակակից կառուցվածքը:
18. Գնահատել տրանսպորտի և կապի դերը հասարակական կյանքի տարածքային կազմակերպման գործում:
19. *Վերլուծել* տրանսպորտային արդի համակարգերն ու զարգացման միտումները:
20. *Գնահատել* ցամաքային և ջրային միջազգային տրանսպորտային ուղիների տնտեսական և աշխարհաքաղաքական նշանակությունը:
21. *Բնութագրել* ոչ արտադրական ոլորտի ճյուղային կառուցվածքը:
22. *Գնահատել* ոչ արտադրական ոլորտի դերը տնտեսության մեջ:
23. *Վերլուծել* ոչ արտադրական ոլորտի զարգացման միտումները:
24. *Ներկայացնել* ծառայությունների հիմնական տեսակներն ու դրանց կիրառության ոլորտները:
25. *Բնորոշել* միջազգային տնտեսական հարաբերությունների հիմնական ձևերը:
26. *Գնահատել* միջազգային զբոսաշրջության նշանակությունը երկրների տնտեսության մեջ:
27. *Գնահատել* միջազգային տնտեսական հարաբերությունների դերը համաշխարհային տնտեսության զարգացման համատեքստում:
28. *Կազմել* քարտեզագրամներ և քարտեզադիագրամներ ԱՏՀ-ի կիրառմամբ:

**Բովանդակություն**

1. Համաշխարհային տնտեսություն (ՀՏ): Զարգացման փուլերն ու արդի միտումները:
2. ՀՏ ճյուղային կառուցվածքը:
3. Աշխատանքի աշխարհագրական բաժանում: ՀՏ-ի տարածքային կառուցվածքը:
4. Աշխարհի արդյունաբերությունը. ընդհանուր բնութագիրը: Արդյունաբերության տեղաբաշխման գործոնները:
5. Վառելիքաէներգետիկ արդյունաբերություն:

6. Մշակող արդյունաբերություն:
7. Մշակող արդյունաբերություն(շարունակություն):
8. Աշխարհի գյուղատնտեսության ընդհանուր բնութագիրը:
9. Աշխարհի գյուղատնտեսության տեղաբաշխումը և մասնագիտացումը:
10. Համաշխարհային տրանսպորտը և կապը:
11. Աշխարհի երկրների տրանսպորտային համակարգը:
12. Ոչ արտադրական ոլորտը:
13. Ոչ արտադրական ոլորտը (շարունակություն):
14. Միջազգային տնտեսական հարաբերություններ:
15. «Համաշխարհային տնտեսություն» թեմայի ամփոփում:

| **Գործնական աշխատանք, Թեմատիկ ուսումնասիրություն** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
|---|---|
| *Գործնական աշխատանք*<br>• Առանձին երկրների մասնաբաժնի որոշումը Համաշխարհային ՀՆԱ-ում:<br>*Թեմատիկ ուսումնասիրություն*<br>• Միջազգային հաղորդակցության ուղիները: | *Համակարգեր և մոդելներ*<br>• ՀՏ՝ տնտեսական մեկ ամբողջական համակարգ:<br>*Կառուցվածք և գործառույթ*<br>• ՀՏ-ի բարդ կառուցվածքը և կոնկրետ գործառույթի իրականացումը:<br>*Օրինաչափություններ*<br>• ՀՏ-ի զարգացումը:<br>*Մասշտաբ, համամասնություն և քանակ*<br>• ՀՏ-ի համամոլորակային բնույթը:<br>*Պատճառ և հետևանք*<br>• ՀՏ-ի ճյուղային և տարածական զարգացման պատճառահետևանքային կապեր և միտումներ:<br>*Կայունություն և փոփոխություն*<br>• ՀՏ-ի ճյուղերի որոշակի սկզբունքներով տարածական կազմակերպումը: |

| Միջառարկայական կապեր |
|---|
| **Հայոց լեզու** - Վերլուծել և ընկալել տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանալ դրանց հիմնական գաղափարը: Կազմել ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք, այդ թվում՝ հրապարակային խոսք, կիրառել ոչ վերբալ հաղորդակցման տարատեսակ միջոցներ:<br>**Համաշխարհային պատմություն** - Իմանալ համաշխարհային տնտեսության անցումային փուլերի պատմական առանձնահատկությունների, արդյունաբերական հասարակության երկու շրջափուլերի զարգացման արդյունքների, միջազգային հարաբերություններում տեղի ունեցած ժամանակակից փոփոխությունների և ԳՏՀ-ի մասին:<br>**Հասարակագիտություն** - Գաղափար ունենալ համաշխարհային մշակույթի համատեքստում Հայաստանի մշակույթի մասին: Իմանալ տնտեսության մասին և պետության դերը տնտեսության մեջ:<br>**Քիմիա** - Իմանալ մետաղարտադրության մասին:<br>**Կենսաբանություն** - Իմանալ մշակովի բույսերի և ընտանի կենդանիների առանձնահատկությունների մասին:<br>**Հանրահաշիվ** - Գաղափար ունենալ տվյալների և դրանց մշակման վերաբերյալ:<br>**Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն** - Օգտագործել տեղեկատվական տեխնոլոգիաները տարաբնույթ հիմնախնդիրների ուսումնասիրության և մոդելավորման ժամանակ: |
| **Կապը ՀՊՉ հանրակրթական միջնակարգ ծրագրի ակնկալվող վերջնարդյունքների հետ** |
| Մ4, Մ5, Մ6, Մ10, Մ11, Մ14, Մ15, Մ16, Մ18, Մ19, Մ22, Մ25, Մ26, Մ27, Մ29, Մ30, Մ33, Մ40, Մ47, Մ48 |

| Թեմա 2. |
|---|
| **ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ-ԲՆՈՒԹՅՈՒՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (13 ժամ)** |
| **Նպատակ** |
| Ձևավորել հիմնարար գիտելիքներ և հմտություններ հասարակություն-բնություն փոխհարաբերությունների և դրանց հետևանքների վերաբերյալ: |
| **Վերջնարդյունքներ** |

**Վերլուծել բնական միջավայրի բաղադրիչների պահպանության և ռացիոնալ օգտագործման արդի հիմնախնդիրները:**

Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. *Բացատրել* միջավայրի էկոլոգիական հավասարակշռությունը:
2. *Վերլուծել* էկոլոգիական հավասարակշռության խախտման պատճառներն ու հետևանքները:
3. Բնորոշել «էկոլոգիական հետևանքը»:
4. *Խմբավորել* միջավայրի աղտոտիչները՝ ըստ դրանց բնույթի:
5. *Մեկնաբանել* բնապահպանական կառավարման համակարգի տարրերը:
6. *Սահմանել* Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում (ՇՄԱԳ), Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն (ՇՄԱՓ) և Ռազմավարական էկոլոգիական գնահատում (ՌԷԳ) հասկացությունները:
7. *Բացատրել* կայուն սպառման անհրաժեշտությունը:
8. *Բացատրել* կայուն արտադրություն և սպառում գաղափարի էությունը:
9. *Գնահատել* շրջանաձև տնտեսության նշանակությունը տնտեսության մոդելավորման համատեքստում:
10. *Մեկնաբանել* կայուն գյուղատնտեսության վարման առանձնահատկությունները:
11. *Գնահատել* մթնոլորտի պաշտպանիչ և էկոլոգիական գործառույթները:
12. *Վերլուծել* մթնոլորտի աղտոտման պատճառներն ու հետևանքները:
13. *Բացատրել* թթվային անձրևների և սմոգի (թունամշուշ) առաջացման պատճառները և հետևանքները:
14. *Վերլուծել* ջրօգտագործման հիմնական ոլորտները:
15. *Սահմանել* ջրի որակական և քանակական սպառումը:
16. *Վերլուծել* ջրի աղտոտման պատճառներն ու հետևանքները:
17. *Վերլուծել* ջրավազանների պահպանության հիմնական ուղիներն ու սկզբունքները:
18. *Տարբերակել* հողաբարելավման միջոցառումների հիմնական տեսակներն ու դրանց աշխարհագրական տարածվածությունը:
19. *Վերլուծել* հողերի օգտագործման առանձնահատկությունները, աղտոտման պատճառներն ու հետևանքները:
20. *Մեկնաբանել* անապատացման երևույթը:
21. *Բացատրել* բուսական և կենդանական աշխարհի պահպանության կարևորությունը:
22. *Գնահատել* գենոֆոնդի պահպանության անհրաժեշտությունը:
23. *Բացատրել* հատուկ պահպանվող տարածքների նշանակությունը:
24. *Մեկնաբանել* անտառների կայուն կառավարումը:
25. *Բնորոշել* էկոհամակարգի հատկանիշները:
26. *Գնահատել* էկոհամակարգային ծառայությունների նշանակությունը:

<table>
<tr><th colspan="2">Բովանդակություն</th></tr>
<tr><td colspan="2">1. Բնական միջավայրի էկոլոգիական հավասարակշռությունը, դրա խախտման պատճառներն ու հետևանքները:<br>2. Բնապահպանական կառավարում: Կայուն արտադրություն և սպառում:<br>3. Կայուն գյուղատնտեսություն:<br>4. Մթնոլորտի աղտոտման աղբյուրներն ու տեսակները, դրանց հետևանքները և կանխարգելումը:<br>5. Ջրօգտագործման ոլորտները, ջրավազանների աղտոտման աղբյուրները, պահպանման առանձնահատկությունները:<br>6. Հողերի օգտագործում, աղտոտում և անապատացում: Հողի պահպանության հիմնախնդիրները:<br>7. Կենսաբազմազանության օգտագործում և պահպանություն:<br>8. Էկոհամակարգային ծառայություններ:<br>9. «Հասարակություն-բնություն փոխհարաբերությունները» թեմայի ամփոփում:</td></tr>
<tr><th>Գործնական աշխատանք,<br>թեմատիկ ուսումնասիրություն</th><th>Ընդհանրական խաչվող հասկացություններ</th></tr>
<tr><td>Գործնական աշխատանք<br>• ԱՏՀ-ի միջոցով կազմել ՀՀ հատուկ պահպանվող տարածքների քարտեզ:<br>Թեմատիկ ուսումնասիրություն<br>• Բնակավայրի էկոլոգիական հիմնախնդիրների վերլուծություն՝ ըստ աշխարհագրական թաղանթի ոլորտների:<br>• Տիեզերական աղբ:<br>Էքսկուրսիա<br>• Հատուկ պահպանվող տարածք:<br>• էկոլոգիական հավասարակշռությունը խախտված տարածք (հանքագործական տարածքներ, անապատացված տարածքներ):</td><td>Օրինաչափություններ<br>• Հասարակության տարածքային կազմակերպումը:<br>Համակարգեր և համակարգերի մոդելներ<br>• Բնական միջավայրի էներգանյութափոխանակության բնույթն ու մեծությունը՝ որպես համակարգի ներքին կազմակերպվածության ու տարրերի կարգավորվածության ցուցիչ:<br>Էներգիա և նյութ<br>• Հասարակության տնտեսական գործունեության իրականացում բնական միջավայրի էներգիայի և նյութերի հաշվին:<br>Պատճառ և հետևանք<br>• Բնօգտագործումն ու արտանետումները՝ որպես միջավայրի էներգանյութափոխանակության խախտում առաջացնողներ:<br>Մասշտաբ, համամասնություն և քանակ<br>• Հասարակության կողմից բնության վրա ազդեցության տարածական դրսևորումը և ներգործության քանակական մեծությունը:<br>Կայունություն և փոփոխություն</td></tr>
</table>

| | |
|---|---|
| | • Կանաչ տնտեսությունը՝ որպես միջավայրի կայունություն և թույլատրելի սահմաններում փոփոխություն ապահովող: |

| **Միջառարկայական կապեր** |
|---|
| **Հայոց լեզու** - Վերլուծել և ընկալել տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանալ դրանց հիմնական գաղափարը: Կազմել ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք, այդ թվում՝ հրապարակային խոսք, կիրառել ոչ վերբալ հաղորդակցման տարատեսակ միջոցներ:<br>**Հասարակագիտություն** - Գաղափար ունենալ մարդ-բնություն փոխհարաբերության էվոլյուցիայի մասին:<br>Կարողանալ վերլուծել կառավարման համակարգի առանձնահատկությունները:<br>**Ֆիզիկա** - Կարողանալ տարբերակել ֆիզիկական աղտոտիչները:<br>**Քիմիա** - Կարողանալ տարբերակել քիմիական աղտոտիչները և դրանց ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:<br>**Կենսաբանություն** - Իմանալ էկոհամակարգերի կառուցվածքի և բաղադրիչների մասին: Գաղափար ունենալ նյութի և էներգիայի կենսաերկրաքիմիական շրջապտույտի մասին: Գաղափար ունենալ էկոլոգիական հիմնախնդիրների կենսաբանական գործոնների և ազդեցության մասին:<br>**Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն** - Օգտագործել տեղեկատվական տեխնոլոգիաները տարաբնույթ հիմնախնդիրների ուսումնասիրության և մոդելավորման ժամանակ: |
| **Կապը ՀՊՉ հանրակրթական միջնակարգ ծրագրի ակնկալվող վերջնարդյունքների հետ** |
| Մ4, Մ5, Մ6, Մ7, Մ8, Մ9, Մ11, Մ12, Մ13, Մ14, Մ15, Մ16, Մ18, Մ21, Մ25, Մ26, Մ27, Մ29, Մ30, Մ33, Մ44, Մ47, Մ48 |

| **Պահուստային դասաժամեր (6 ժամ)** |
|---|
| Ուսուցիչը ժամաքանակը տնօրինում է առարկայական չափորոշչային պահանջների իրականացման շրջանակում: Դասաժամերը հատկացվում են սովորողների գործնական, թեմատիկ և կիսամյակային, դաշտային աշխատանքների և հետազոտությունների կատարման համար: |

# ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ
**12-րդ դասարան**
(առաջարկվում է 34 ժամ)

| Թեմա 1. |
|---|
| **ԻՆՔՆԱՏԻՊ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐ (6 ժամ)** |
| **Նպատակ** |
| Զարգացնել գիտելիքներ և հմտություններ աշխարհի ինքնատիպ տարածաշրջանների և երկրների աշխարհագրական առանձնահատկությունների վերաբերյալ: |
| **Վերջնարդյունքներ** |
| **Վերլուծել ինքնատիպ տարածաշրջանների և երկրների զարգացման աշխարհագրական առանձնահատկությունները:**<br><br>Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝<br>1. *Վերլուծել* ինքնատիպ տարածաշրջանների և երկրների աշխարհագրական առանձնահատկությունները, ինքնատիպության հատկանիշի վրա մոդելավորել զարգացման հնարավորությունները:<br>2. *Վերլուծել* տնտեսական սրընթաց աճ արձանագրած տարածաշրջանների և երկրների աշխարհագրական առանձնահատկություններն ու զարգացման գործոնները:<br>3. *Վերլուծել* ուրբանիզացված տարածաշրջանների զարգացման միտումներն ու հիմնախնդիրները:<br>4. *Բնորոշել* աշխարհի ուրբանիզացված տարածաշրջանները և դրանց զարգացման հիմնական գծերը:<br>5. *Վերլուծել* լեռնային, չորային տարածաշրջանների և երկրների բնատնտեսական առանձնահատկությունները:<br>6. *Վերլուծել* Եվրոպական Միության՝ որպես տարածաշրջանային միասնացման օրինակի առանձնահատկությունները: |
| **Բովանդակություն** |
| 1. Տնտեսական սրընթաց աճ արձանագրած տարածաշրջաններ և երկրներ:<br>2. Ուրբանիզացված տարածաշրջաններ:<br>3. Լեռնային տարածաշրջանների և երկրների զարգացման բնատնտեսական առանձնահատկությունները:<br>4. Չորային (արիդ) ագրարային տարածաշրջաններ:<br>5. Արևմտյան Եվրոպայի քաղաքական միասնացման գործընթացները:<br>6. «Ինքնատիպ տարածաշրջաններ և երկրներ» թեմայի ամփոփում: |

<table>
<tr><th>Գործնական աշխատանք,<br>թեմատիկ ուսումնասիրություն</th><th>Ընդհանրական խաչվող հասկացություններ</th></tr>
<tr><td>Թեմատիկ ուսումնասիրություն<br>• Իսրայելի գյուղատնտեսության վարման առանձնահատկությունները:<br>• Ազգային ինքնորոշման դրսևորումներն Արևմտյան Եվրոպայում (Բասկոնիա, Կատալոնիա, Հյուսիսային Իռլանդիա):</td><td>Օրինաչափություններ<br>• Արևմտյան Եվրոպայի միասնացման պատմաաշխարհագրական և մշակութային հիմքերը:<br>Մասշտաբ, համամասնություն և քանակ<br>• Ինքնատիպ տարածաշրջանները զբաղեցնում են աշխարհագրական որոշակի տարածություն և միջավայր:<br>Պատճառ և հետևանք<br>• Հողային էրոզիայի պատճառով լեռնային, չորային տարածաշրջաններում պարենային հիմնախնդրի առաջացում:<br>• Լեռնային տարածաշրջանների յուրահատուկ էկոհամակարգերի ձևավորած տնտեսական գործունեության հնարավորությունները:<br>• Արիդ տարածաշրջանների սահմանափակումներն ու հնարավորությունները:</td></tr>
<tr><th colspan="2">Միջառարկայական կապեր</th></tr>
<tr><td colspan="2">Հայոց լեզու - Վերլուծել և ընկալել տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանալ դրանց հիմնական գաղափարը: Կազմել ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք, այդ թվում՝ հրապարակային խոսք, կիրառել ոչ վերբալ հաղորդակցման տարատեսակ միջոցներ:<br>Համաշխարհային պատմություն - Բացատրել, որ Վերածննդի դարաշրջանը պայմանավորեց ժամանակակից Եվրոպական Միության լոկոմոտիվ երկրների տնտեսական բուռն զարգացման հիմքերը, որոնց միավորման պատճառ դարձավ Երկրորդ աշխարհամարտից հետո Եվրոպայում խաղաղության և կայունության ապահովման երաշխիքների ստեղծումը:<br>Կենսաբանություն - Գաղափար ունենալ տարբեր բնակլիմայական պայմաններում կենդանի օրգանիզմների հարմարվածության մասին:<br>Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն - Օգտագործել տեղեկատվական տեխնոլոգիաները տարաբնույթ հիմնախնդիրների ուսումնասիրության և մոդելավորման ժամանակ:</td></tr>
<tr><th colspan="2">Կապը ՀՊՉ հանրակրթական միջնակարգ ծրագրի ակնկալվող վերջնարդյունքների հետ</th></tr>
<tr><td colspan="2">Մ6, Մ7, Մ8, Մ9, Մ12, Մ16, Մ17, Մ18, Մ21, Մ22, Մ24, Մ25, Մ26, Մ27, Մ29, Մ47, Մ48</td></tr>
</table>

| Թեմա 2. |
|---|
| **ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՄՈԼՈՐԱԿԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ (8 ժամ)** |
| **Նպատակ** |
| Զարգացնել մարդկության համամոլորակային հիմնախնդիրների ճանաչման, լուծման ուղիների վերաբերյալ համակարգված գիտելիքներ և կարողություններ: |
| **Վերջնարդյունքներ** |
| **Վերլուծել մարդկության համամոլորակային հիմնախնդիրների պատճառահետևանքային կապերն ու ձևակերպել դրանց լուծման ուղիները:**<br><br>Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝<br>1. *Բնորոշել* մարդկության համամոլորակային հիմնախնդիրների էությունը:<br>2. *Բացատրել* տարբեր հիմնախնդիրների փոխկապակցվածությունը:<br>3. *Վերլուծել* քաղցրահամ ջրի համամոլորակային հիմնախնդիրը և դրա դրսևորումը արիդ՝ չորային երկրներում ու տարածաշրջաններում:<br>4. *Վերլուծել* կենսաբազմազանության պահպանման համամոլորակային հիմնախնդիրը:<br>5. *Վերլուծել* կլիմայի համամոլորակային փոփոխության պատճառներն ու հետևանքները:<br>6. *Բացատրել* օզոնային շերտի նշանակությունը, քայքայման պատճառներն ու հետևանքները:<br>7. *Վերլուծել* հանքային հումքի և վառելիքաէներգետիկ ռեսուրսների հիմնախնդիրը:<br>8. *Վերլուծել* ժողովրդագրական, պարենային, աղքատության և առողջապահության հիմնախնդիրների բովանդակությունն ու պատճառահետևանքային կապերը:<br>9. *Վերլուծել* բնապահպանական և Համաշխարհային օվկիանոսի հիմնախնդիրների պատճառահետևանքային կապերը:<br>10. *Վերլուծել* Հազարամյակի մարտահրավերների նպատակները:<br>11. *Բացատրել* մարդկության կայուն զարգացման հայեցակարգի էությունը:<br>12. *Բացատրել* «Հյուսիս-Հարավ» հակասությունների հիմնախնդրի էությունը: |
| **Բովանդակություն** |
| 1. Մարդկության համամոլորակային հիմնախնդիրները:<br>2. Բնապահպանական հիմնախնդիրները:<br>3. Հանքային հումքի և վառելիքաէներգետիկ ռեսուրսների հիմնախնդիրը:<br>4. Ժողովրդագրական հիմնախնդիրը:<br>5. Պարենային և առողջապահական հիմնախնդիրները:<br>6. Համաշխարհային օվկիանոսի հիմնախնդիրը:<br>7. Մարդկության կայուն զարգացման հայեցակարգը և Հազարամյակի զարգացման նպատակները:<br>8. «Մարդկության համամոլորակային հիմնախնդիրները և լուծման ուղիները» թեմայի ամփոփում: |

| Գործնական աշխատանք,<br>թեմատիկ ուսումնասիրություն | Ընդհանրական խաչվող հասկացություններ |
|---|---|
| *Գործնական աշխատանք*<br>• ԱՏՀ-ի միջոցով կազմել աշխարհի առավել աղքատ երկրների քարտեզը:<br>• ԱՏՀ-ի միջոցով կազմել աշխարհի միջուկային գերտերությունների քարտեզը:<br>*Քննարկում «կլոր սեղան» ձևաչափով:*<br>• Կազմակերպել քննարկում մարդկության կայուն զարգացման խնդիրների շուրջ: | *Օրինաչափություններ*<br>• Հասարակության զարգացմանը զուգընթաց ձևավորվող և խորացող համամոլորակային հիմնախնդիրներ:<br>*Համակարգեր և համակարգերի մոդելներ*<br>• Համամոլորակային հիմնախնդիրների առաջացումն ու զարգացումը բնական և հասարակական համակարգերում:<br>*Մասշտաբ, համամասնություն և քանակ*<br>• Հիմնախնդիրների համապարփակ բնույթը և համընդգրկուն դրսևորումը:<br>*Պատճառ և հետևանք*<br>• Մարդու կենսագործունեությունը Երկիր մոլորակի վրա և համամոլորակային հիմնախնդիրները:<br>*Կայունություն և փոփոխություն*<br>• Երկիր մոլորակի հուսալիության ապահովում՝ կայունության, հավասարակշռության, կենսունակության, անվտանգության պահպանման և բնականոն էվոլյուցիոն փոփոխության ճանապարհով: |

| Միջառարկայական կապեր |
|---|
| **Հայոց լեզու** - Վերլուծել և ընկալել տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանալ դրանց հիմնական գաղափարը: Կազմել ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք, այդ թվում՝ հրապարակային խոսք, կիրառել ոչ վերբալ հաղորդակցման տարատեսակ միջոցներ:<br>**Համաշխարհային պատմություն** - Գաղափար ունենալ միջազգային և տարածաշրջանային համագործակցության ձևերի, բնատնտեսական և բնապահպանական ժամանակակից կոնֆլիկտների մասին:<br>**Քիմիա** - Գաղափար ունենալ ջերմոցային էֆեկտ առաջացնող գազերի և կայուն զարգացման էության վերաբերյալ:<br>**Կենսաբանություն** - Գաղափար ունենալ համամոլորակային էկոլոգիական հիմնախնդիրների մասին:<br>**Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն** - Օգտագործել տեղեկատվական տեխնոլոգիաները տարաբնույթ հիմնախնդիրների ուսումնասիրության և մոդելավորման ժամանակ: |
| **Կապը ՀՊՉ հանրակրթական միջնակարգ ծրագրի ակնկալվող վերջնարդյունքների հետ** |
| Մ4, Մ5, Մ6, Մ7, Մ8, Մ9, Մ11, Մ12, Մ13, Մ14, Մ15, Մ16, Մ18, Մ21, Մ24, Մ25, Մ26, Մ27, Մ29, Մ30, Մ47, Մ48 |

| 7-12-րդ դասարանների աշխարհագրության դասընթացի ամփոփիչ կրկնություն (20 ժամ) |
|---|
| Ուսուցիչը ժամաքանակը հատկացնում է հիմնական և ավագ դպրոցի դասընթացի ամփոփիչ կրկնությանը: Թեմաների ընտրությունը կատարվում է շարունակական կրթության ապահովմանն ուղղված առարկայական չափորոշչային և ծրագրային նյութի շրջանակում: Դասընթացի ամփոփիչ կրկնությանը տրված դասաժամերը կարող են ավելացվել ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի հաշվին: |

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգ, ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-Ն որոշում:
2. «Հանրակրթության պետական կրթակարգ», ՀՀ կառավարության նիստի հ. 33 արձանագրային որոշում, 26.08.2004 թ.:
3. Հանրակրթական հիմնական դպրոցի «Աշխարհագրություն» (6-8-րդ դասարան-ներ) և «Հայաստանի աշխարհագրություն» (9-րդ դասարան) առարկաների չա-փորոշիչներ և ծրագրեր (ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012 թ. Հունվարի 23-ի N 49-Ա/Ք հրաման):
4. Հանրակրթական ավագ դպրոցի «Աշխարհագրութուն» առարկայի ընդհանուր և խորացված ուսուցման դասընթացների չափորոշիչներ և ծրագրեր (ՀՀ կրթության և գիտության նախարարի 04.05.2009թ. N 381-Ա/Ք հրաման):
5. Հովսեփյան Ա., Գրիգորյան Ա., Մանասյան Մ., Աշխարհագրություն 6, Եր., «Աստղիկ գրատուն», 2018:
6. Մարգարյան Ռ., Մանասյան Մ., Հովհաննիսյան Գ., Հովսեփյան Ա., Աշխար-հագրություն 7, Եր., «ՄԱՆՄԱՐ», 2018:
7. Մանասյան Մ., Մարգարյան Ռ., Հովսեփյան Ա., Հովհաննիսյան Գ., Աշխարհագրու-թյուն 8, Եր., «ՄԱՆՄԱՐ», 2020:
8. Մանասյան Մ., Հովսեփյան Ա., Աշխարհագրություն. Հայաստան 9, Եր., Տիգրան Մեծ, 2020:
9. Մանասյան Մ., Վարդանյան Թ., Հովսեփյան Ա., Գրիգորյան Ա., Հովհաննիսյան Գ., Պոտոսյան Ա., Աշխարհագրություն 10, Եր., «Զանգակ», 2017:
10. Պոտոսյան Ա., Մանասյան Մ., Սարգսյան Խ., Գրիգորյան Ա., Վարդանյան Թ., Հովսեփյան Ա., Աշխարհագրություն 11, Եր., «Զանգակ», 2018:
11. Մանասյան Մ., Հովսեփյան Ա., Պոտոսյան Ա., Աշխարհագրություն 12, Եր., «Զանգակ», 2018:
12. Алексеев, Николина, Болысов: География. 7 класс. Учебник. ФГОС. Подробнее: https://www.labirint.ru/books/689344/
13. Программа по географии для 5–9-х классов по ФГОС, https://urok.1sept.ru
14. Next Generation Sciense Standarts, https://www.nextgenscience.org
15. Geography Singapore-Cambridge General Certificate of Education Ordinary Level (2019) (Syllabus 2236), https://www.seab.gov.sg/docs/default-source/nationalexaminations/syllabus/olevel/2019syllabus/2236_2019.pdf
16. Syllabus Cambridge IGCSE® Geography 0460. For examination in June and November 2020, 2021 and 2022. Also available for examination in March 2020,2021 and 2022 for India only.

17. Version Syllabus 1 Cambridge International AS & A Level Geography 9696 For examination in June and November 2021 and 2022, UK.
18. J. Hopkins, European and Eurasian Studies Program Syllabus, august 2018.
19. H. J. de Blij and others, Geography: realms, regions, and concepts,
20. Geography of Australia.
21. https://www.ibo.org/programmes/
22. https://www.ibo.org/programmes/primary-years-programme/
23. https://www.ibo.org/programmes/diploma-programme/curriculum/
24. https://study.com/academy/course/geography-high-school.html
25. https://www.time4learning.com/homeschool/curriculum/high_school_geography.html
26. https://global.oup.com› education› product
27. https://www.nextgenscience.org/search/node/Earth
28. https://www.cambridgeinternational.org/Images/203934-2017-2019-syllabus.pdf
29. https://www.yaklass.ru/p/geografiya/7-klass/obshchaia-kharakteristika-prirody-zemli-240707/klimaticheskie-poiasa-zemli-324084/re-6da67392-0aba-46ca-9e85-18e6cbfbc70e
30. https://www.nextgenscience.org/dci-arrangement/5-ess2-earths-systems
31. http://online.fliphtml5.com/fumf/iswg/NGSS,
32. https://translate.google.com/translate?hl=ru&sl=en&tl=ru&u=https%3A%2F%2Fwww.nextgenscience.org%2Fdci-arrangement%2Fms-ess2-earths-systems)
33. https://www.moe.gov.sg/docs/default-source/document/education/syllabuses/humanities/files/2013-geography-syllabus-(upper-secondary).pdf,
34. https://www.thoughtco.com/geography-of-australia-1434351
35. https://www.nasa.gov/sites/default/files/thumbnails/image/2019hole1.jpg
36. https://www.armstat.am/am/: